Azg
Ազգ
16 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2006 ՇԱԲԱԹ 241 (3644)

Թուրքիայում հանցավոր խումբ է հայտնաբերվել, որն զբաղվում էր «կենդանի ադրանքի» առեւտրով

ԱՆԿԱՐԱ, 15 ԴԵԿՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Ոստիկանության անցկացրած գործողության ընթացքում Թուրքիայում հանցավոր լայն ցանց է հայտնաբերվել, որն զբաղվում էր «կենդանի ադրանքի» առեւտրով: Հետախուզական միջոցառումների շնորհիվ Մուղլա, Բոդրում, Անկարա, Տրապիզոն եւ Թուրքիայի այլ քաղաքներում կալանվել են հանցավոր խմբերի անդամներ, որոնք զբաղվում էին Ուկրաինայից, Ռուսաստանից եւ այլ երկրներից տեղական շուկա երիտասարդ աղջիկների մատակարարմամբ:

Նրանց երկիր էին բերում խաբեության ճանապարհով՝ որպես բուժքույրեր ու դայակներ աշխատանքի տեղավորելու պատրվակով, բայց այնուհետեւ սկսում էին զբաղվել պոռնկությամբ: Ներկայումս հայտնաբերվել ու երկրից վտարվել է 24 կին: Հետաքննության ընթացքում ձերբակալվել է ցանցի ղեկավարը՝ ադրբեջանուհի, մասնագիտությամբ բժշկուհի ոմն Ա.Դ.Ա-ն: Առավել մանրամասն տեղեկություններ չեն հաղորդվում:

Առողջապահական գովազդի աղբը հանել եթերից

Այսօրվանից գործողության մեջ է այդ մասին կառավարական որոշումը

ԿԱԲԻՆԵ ՂԱՆԴԻԼՅԱՆ

Այսօրվանից գործողության մեջ կմտնի կառավարության «Դեղերի, բուժտեխնիկայի եւ բուժական մեթոդների գովազդի թույլտվության կարգի եւ այդ գովազդին ներկայացվող պահանջները հաստատելու մասին» որոշումը:

Երեկ «Հայկական բժշկական ասոցիացիա» կազմակերպությունը որոշման իրականացումը խթանելու լոբբիինգ էր սկսել:

1996 թվականի ապրիլից գործում է «Գովազդի մասին» օրենքը, որն արգելում է դեղերի, բուժտեխնիկայի եւ բուժական մեթոդների գովազդն առանց առողջապահության նախարարության թույլտվության: Մի ամբողջ 10 տարի, սակայն, մենք ամեն օր եթերով, ժամանակ առ ժամանակ նաեւ մամուլով ականատես ենք, թե Հայաստանում ինչպես է արհամարհվում օրենքի այս դրույթը:

«Հայկական բժշկական ասոցիացիա» կազմակերպությունը դիմել է առողջապահության նախարարություն եւ պարզել, որ մինչ օրս գոնե մեկ գովազդատու չի դիմել նրան՝ նման թույլտվություն ստանալու համար: Գովազդները հեռարձակվել եւ հեռարձակվում են, տպագրվել եւ տպագրվում են: Որ մարդկային առողջությունը կողքի արժեք ունի Հայաստանում, վկայությունը հենց դա է՝ անվերահսկելի գովազդը ռադիոյով, հեռուստատեսությամբ, մամուլով:



Տես էջ 3

ՌՈՒՍԱՍՏԱՆ

Արա Աբրահամյանի գլխավորած կոնսորցիումը կարունակի Ան-225 «Մրիա» ինքնաթիռների ստեղծման աշխատանքները

2006 թվականին «Սոգլասիե» («Համաձայնություն») ՓԲԸ նախագահ, Համաշխարհային հայկական կոնգրեսի (ՀՀԿ) նախագահ Արա Աբրահամյանի նախաձեռնությամբ ստեղծվեց «Ավիացիոն-տիեզերական արտադրական համակարգեր» միացյալ կոնստրուկտորական բյուրո» միջազգային ռազմավարական կոնսորցիումը: Ինչպես տեղեկացնում են «Նոյյան տապան» գործակալությանը «Սոգլասիե» ՓԲԸ-ից, կոնսորցիումի նպատակն է վերսկսել գիտատեխնիկական այն գործը, որ բավականին կատարվել էր «Էներգիա Բուրան», այդ թվում «Մրիա» Ան-225 գերծանր կրող-ինքնաթիռի ծրագրով:

Նույն աղբյուրի համաձայն, այդ ինքնաթիռի օգտագործումը որոշ առաջավոր նախագծերի եւ տեխնոլոգիական լուծումների համադրմամբ պահանջվում է շահագործման եւ խնայողության նշանակալի առավելություններ՝ տիեզերքում լուծվելիք լայն շրջանակի խնդիրների կատարման ժամանակ ավանդական միջոցների համեմատությամբ: Կոնսորցիումի նախագահ դարձավ Արա Աբրահամյանը:

Գաղափարները, որոնց մի մասը ծրագրվում է իրականացնել կոնսորցիումին առաջադրված խնդիրները լուծելիս, առաջին անգամ Արա Աբրահամյանն արտահայտել է իր «21-րդ դարի տիեզերական ոդիսական: Փրկության ուղի» էսսե-վիպակում, որի հայտահանդեսը կկայանա Փարիզում, միջազգային խոշորագույն լեզվաբանական «Էքսպոլանգ-2007» ցուցահանդեսում 2007 թվականի հունվարին ռուսերեն եւ անգլերեն լեզուներով: Գրքի ձեռագիրը որպես մտավոր սեփականության առարկա գրանցվել է Ռուսաստանի հեղինակային ընկերությունում 2006 թվականի մարտին:

ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ

Ժիրայր Սեֆիլյանը Հայաստանի համար վտանգ չի ներկայացնում

«Շուշի» առանձնահատուկ գումարտակի հրամանատար Ժիրայր Սեֆիլյանը Հայաստանի համար որեւէ սպառնալիք, վտանգ չի ներկայացնում: Հայաստանում 3-4 հազար մարդ է ապրում, որոնցից յուրաքանչյուրն առանձին լուրջ վտանգ չի ներկայացնում երկրի համար: Ոմանք վտանգավոր են հասարակության, առանձին անձանց, բայց ոչ երկրի համար»: Երեկ տեղի ունեցած ասուլիսում, «Ռեգնումի» հաղորդմամբ, հայտարարել է ՀՀ պաշտպանության նախարար Սերժ Սարգսյանը: Նա հարկ է համարել նաեւ ընդգծել, որ չէր ուզենա ականատեսը լինել որեւէ մեկի հնարավորությունների գերագնահատմանը:

Պաշտպանության նախարարի կարծիքով, Ժիրայր Սեֆիլյանը արցախյան ազատամարտին մասնակցած հազարավոր մարդկանցից մեկն է: «Այո, նա մարտնչել է, բայց եթե ձեզ թվում է, թե Սեֆիլյանին կարելի է համեմատել հանգուցյալ հրամանատար Մոնթե Մելքոնյանի հետ, ապա դա ճաշակի հարց է»: Համեմատություններ եւ զուգահեռներ չանցկացնելով, պարզապես հիշատակենք հայ հասարակության համար՝ պետից ավելի ծեծված արտահայտությունը. «Գնա մեռիր, արի սիրեմ»:

Միջազգային կառույցներն ինչ-որ բան շփոթո՞ւմ են

Գնահատելով Լեռնային Ղարաբաղի սահմանադրության հանրաքվեին միջազգային արձագանքը, ՀՀ պաշտպանության նախարար Սերժ Սարգսյանն ասել է. «Տպավորություն է ստեղծվում, թե մի շարք միջազգային կառույցների ղեկավարությունն ինչ-որ բան շփոթում է: Երբեւէ ոմանց թվում է, թե Ղարաբաղում անցկացվել է անկախության հանրաքվե: Մինչդեռ վճռվում էր երկրի հիմնական օրենքի ընդունման հարցը»:

Միաժամանակ Սերժ Սարգսյանն ընդգծել է, որ եթե որեւէ մեկին ձեռնտու չէ Լեռնային Ղարաբաղի սահմանադրություն ունենալը, ապա դա այլ հարց է: Նախարարն անձամբ ընդունելի է համարել այս հարցում ՆԱՏՕ-ի դիրքորոշումը. «Լեռնային Ղարաբաղի խնդիրը ՄԽ ԵԱՀԿ շրջանակներում է, եւ ՆԱՏՕ-ն չի միջամտում այդ խնդրին»:

Ն. Պ.

Պետքարտուղար Ռայսը մերժում է Իրանի եւ Սիրիայի հետ համագործակցությունը

Մինչ «Իրաքյան աշխատանքային խումբը» ընդունելով Իրաքում ԱՄՆ-ի ռազմական ձախողումը, պաշտոնական Վաշինգտոնը ոանձնարարում էր համագործակցել Իրանի եւ Սիրիայի հետ՝ ներգրավելու համար վերջիններիս իրաքյան գործընթացներում, ահա դեկտեմբերի 15-ին «Վաշինգտոն փոստում» հրապարակվում է պետքարտուղար Կոնդոլիզա Ռայսի հետ արված հարցազրույցը:

ԱՄՆ-ի պետքարտուղարը նշելով, որ այդպիսի համագործակցության գինը ԱՄՆ-ի համար շատ թանկ կլինի, հայտարարում է. «Ամենեւին չէի ցանկանա Իրանում խաղաղություն ապահովել Լիբանանի ինքնիշխանությունը Սիրիային հանձնելու գնով եւ թույլ տալ Իրանին, որ միջուկային զենք ձեռք բերի»:

Հ. Ս.

Միացյալ հայկական ֆոնդը 5,7 մլն դոլարի մարդասիրական օգնություն ուղարկեց Հայաստան

1989 թվականից ի վեր Միացյալ հայկական ֆոնդն ընդհանուր առմամբ 456 մլն դոլարի մարդասիրական օգնություն է ուղարկել Հայաստան:

1 շաբաթ առաջ Երեւան հասավ հերթական՝ 5,7 մլն դոլարի արժողությամբ օգնությունը: 4,7 մլն դոլարի դեղորայքն ու բժշկական պարագաները հիմնականում տրամադրել է AmeriCares կազմակերպությունը (4,6 մլն դոլար), նաեւ Կանադայի Health Partners International կազմակերպությունը, Կաթողիկե բժշկական առաքելության վարչությունը եւ Map International կազմակերպությունը: Բարեգործությանը մասնակից են նաեւ բժիշկ Սթիվըն Քաջյանը (69 հզ. դոլար) ու Հարութ Շանթիկյանը (51 հզ. դոլար), այլ կազմակերպություններ՝ Հայկական բարեգործական ընդհանուր միությունը (300 հզ. դոլար), Pfizer, Inc. ընկերությունը (200 հզ դոլար), այլ միություններ ու անհատներ եւս:

Միացյալ հայկական ֆոնդը գոյություն ունի եւ գործում է Ամերիկայի հայկական համագումարի, Հայկական բարեգործական ընդհանուր միության, Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության, Հայ օգնության միության, Հայաստանյաց եկեղեցու Հյուսիսային Ամերիկայի առաջնորդարանի եւ այլոց համագործակցությամբ:

Դ. Դ.

ԲՐՅՈՒՍԵԼ

ԵՄ-ի գագաթաժողովը հաստատեց Թուրքիայի հետ բանակցությունների մասնակի սառեցման որոշումը. Անկարան մասնակի հաղթանակ տոնեց

Երեկ Բրյուսելում ավարտվել են Եվրամիության երկրների, պետության եւ կառավարության ղեկավարների գագաթաժողովի աշխատանքները: Ինչպես եւ ենթադրվում էր, մասնակիցներն առանց քննարկելու հաստատել են Թուրքիայի հետ բանակցությունները 8 կետերով սառեցնելու միության արտգործնախարարների դեկտեմբերի 11-ի որոշումը, որն ընդունվել էր Եվրոհանձնաժողովի հանձնարարականների հիման վրա: Սառեցման մասին արձանագրվել է ԵՄ-ի գագաթաժողովի հոչակագրում, որտեղ միաժամանակ ընդգծվել է անդամակցող երկրների սանձնված պարտավորությունների կատարման անհրաժեշտությունը: Իսկ դա պայմանավորվել է ԵՄ-ի գործունեությունն անխափան ապահովելու հրամայականով:

Անդամակցող երկրների պարտավորությունների, ինչպես նաեւ անխափան գործունեության մասնակցումը հոչակագրում ցույց է տալիս, որ գագաթաժողովի առանցքային խնդիրը եղել է ԵՄ-ի ընդարձակման ռազմավարությունը: Քննարկման դրված մյուս հարցերը ածանցվել են դրանից:

Գագաթաժողովի վերոհիշյալ մոտեցումը միանգամայն բավարարում է Անկարային, որովհետեւ Թուրքիայի նավահանգիստներն ու օդանավակայանները Կիպրոսի Հանրապետության առջեւ բացելու համար ԵՄ-ը որեւէ ժամկետ չի նշանակել, ոչ էլ այս հանրապետությունը ճանաչելու հստակ պահանջ է ներկայացրել: Ինչ վերաբերում է Հունաստանի եւ Կիպրոսի Հանրապետությանը, ապա գագաթաժողովը գրանցել է տվել իրենց հասարակական կարծիքի առջեւ արդարանալու հնարավորություն, թե ԵՄ-Թուրքիա բանակցությունները թեկուզ մասնակի սառեցվել են:

Հ. ՇԱՔԱՐՅԱՆ

ԱԶԳ

ԸՆԹԱՑԻԿ

Մեկ անգամ չէ, որ գրվել ու խոսվել է ածաններին (հուշածաններին) վնաս հասցնելու մասին: Ցավոք, դա վերջ չի ունենում: Իսկ վերջին ժամանակներս ինչպես ամեն լուրջ բան, այնպես էլ ածանները կասակի եւ զավեշտի վերածող զանազան հեռուսածրագրերը հետզհետե ավելանում են: Լավ կլիներ, որ այդ հաղորդումները պատրաստող լրագրողները ժամանակ առ ժամանակ շրջայց կատարեին եւ տիրոջ աչքով դիտեին ու իրենց «սրամիտ» խոսքն ասեին այս կամ այն ածանին առնչվող ցավոտ խնդիրների մասին:

Վերջերս կրկին լուսանկարելու նպատակով «այցելեցի» ֆանդակագործ Կառլեն Նուրիջանյանի կերտած Տրդ Անգեղի ածանին: Հեռվից տեսա, որ ածանի «ոտնաթաթերը» սրիտակել են, զարմացա: Բարձրացա ածանի մոտ եւ պարզ դարձավ, որ ոտնաթաթերի դրվագած պղինձը ամբանով պոկոտել, տարել են:

Զայրույթը, ցավի զգացումը եւ անզորությունը խառնվում են իրար... երբ մի ֆանի հարյուր գրամ պղինձ առնեսի պես կրծելու համար, մարդկային, էլ չեմ ասում ազգային գիտակցությունից զուրկ սրիկաները փչացնում են մեր մշակութային արժեքները: Ե՞րբ պետք է հսկողություն սահմանվի գունավոր մետաղ ընդունողների վրա կամ իսպառ լուծարել, արգելել հանրապետությունից գունավոր մետաղների արտահանումը: Ե՞րբ պետք է իրավապահները գտնեն, պատասխանատվության ենթարկեն եւ լրատվամիջոցներով պարսավեն մշակութային արժեքներին վնաս պատճառողներին:

Այլապես կարունակվի ոչնչացվել Աբովյան պուրակից Քանաքեռի խճուղի տանող ճամփեզրին 1939 թ. տեղադրված Այծեմիկ Ուտարտուի «Կժով աղջիկը», որի կժից սառնորակ ջուր պետք է հոսեր եւ զովացներ շոգ ամռանը իր մոտով անցնողներին:

Վերջապես ո՞վ պետք է պատասխան տա Մատենադարանի մոտ դրված Մաշտոցի արձանախմբի աշակերտի (Կորյունի) բազալտե ֆանդակի փիթը կոտրելու համար: Հավանաբար ինչ-որ տաս մարդիկ այդպես նշեցին Մաշտոցի գրերի գյուտի 1600-ամյակը:

Կարելի է թվարկումը շարունակել... եւ դա վերջ չի ունենա, ֆանի կգերիշխեն անտարբերությունը, հանդուրժողականությունը եւ անպատասխանատվությունը հանցանքի, ազգային մշակույթը ոչնչացնողների հանդեպ: Դիմում եմ Նորի զանգվածի թաղապետարանին Տրդ Անգեղի արձանի վնասված մասերը վերականգնելու, արձանը գիշերային ժամերին լուսավորելու եւ հսկողություն սահմանելու խնդրանքով:

Ա. ԽԱՆՋՅԱՆ
«Երեւանի արձանները»
գրքի հեղինակ



ՄԵՐ ՍՐՅԱՆԵՐԸ

Կրկին վանդալիզմի մասին

ՆՈՐ ԱՄՍԱԳԻՐ

«FORBES»-ը Հայաստանում է որպես ինտելեկտուալ գործիք

Շնորհակալություն, որ կարդում եք «FORBES»-Հայաստան». օգտագործեք «FORBES»-ը՝ որպես ինտելեկտուալ գործիք: Սա հայաստանյան լրատվական դաշտում երեկ նորամուտը շնորհանդեսով նշանավորած «FORBES» ամսագրի գովազդկարգախոսն է: Գլխավոր խմբագիր Պետրոս Ղազարյանի փաստմամբ արդեն կա համապատասխան արձագանք հայաստանյան իրականությունում. «Դեռ չհրապարակված՝ արդեն հղումներ են արվում ամսագրին: Այն անկախ ֆինանսավորմամբ է հիմնադրվել եւ գործելու է նույն կարգով, համագործակցում է ռուսաստանյան «FORBES» ամսագրի հետ: Որոշ մոտեցումներ մեր երկրում գործուն կդարձնեք՝ տեղայնացնելու հաշվին»:

«FORBES»-ի հայկական տարբերակի նոյեմբերյան առաջնեկը համանման է հանրահայտ քաղաքական-տնտեսական ամսագրին՝ ոլորտների առումով, գունեղ ու որակյալ՝ հրատարակության տեսանկյունից: Տպագրվում է «Տիգրան Մեծ» տպագրատանը, արժե 960 դրամ: Դատելով շեղ շնորհանդեսի բազմամարդ ներկայանալիությունից՝ կարելի է ասել՝ ամսագիրն ունի բազում բարեկամներ, առնվազն հետաքրքրվածներ իր մուտքով:

Նոր ժամանակներ կուսակցության ղեկավար Արամ Կարապետյանը «FORBES»-ի մուտքը Հայաստան ճիշտ ու պահանջված է համարում. «Հակակրիմինալին հետաքրքրող նյութ արդեն կա ամսագրում՝ հայաստանցի 10 հարուստների ցուցակը»: Հայաստանյան «FORBES»-ն էլ հետ չի մնացել ամսագրի որդեգրած սկզբունքից ու մեր երկրի տասը հարուստներին ներկայացրել է հաջորդականությամբ, սակայն տվյալներ չի հաղորդում հարստության ծավալների մասին: Ցուցակը գլխավորում է «Բարգավաճ Հայաստան» կուսակցության առաջնորդ, գործարար Գագիկ Ծառուկյանը:

«Դրական եմ գտնում ցանկացած նոր լրատվամիջոցի մուտքը, իսկ հաջողվածությունը կփնտրեմ օբյեկտիվության չափում», ամսագրի մասին այսպես արտահայտվեց անվտանգության գծով ՀՀ նախագահի խորհրդական Գառնիկ Իսագուլյանը: Օբյեկտիվություն բնականաբար առկա է, չափը սակայն դեռեւս պարզման կարիք ունի:

«Յուրաքանչյուր երկրում էլիտայի ձեւավորումը բարդ գործընթաց է եւ «FORBES»-ը դրսում դեր ունեցել է այդ առումով, ու եթե հաջողի հայաստանյան ծրագիրը, ուրեմն կմիանա այդ ընթացքին, չհաջողելու դեպքում էլ պատկերը պարզ կլինի», այսպիսի կարծիք հայտնեց Երեւանի մամուլի ակումբի նախագահ Բորիս Նավասարդյանը: Ի դեպ, հայաստանցի 10 հարուստների ցուցակից զատ «FORBES»-ը հրապարակել է նաեւ քաղաքական դաշտում հեռանկար չունեցող գործիչների ցուցակ, որը գլխավորում է Ստեփան Դեմիրճյանը:

Ամեն դեպքում բարի երթի մաղթանքները շատ էին: Ցանկալի է, որ ողջ աշխարհում «FORBES»-ի 5 միլիոն ընթերցողներին հայաստանաբնակ հասարակության միանալու հնարավորությունը երկարատեւ ու արդարացված լինի:

Ն. Պ.

Հրաժարականի կոչ «Հեռուստատեսության եւ ռադիոյի ազգային հանձնաժողովին»

«Գործընկերություն հանուն բաց հասարակության» նախաձեռնությունը երեկ հայտարարություն է տարածել, որում «Հեռուստատեսության եւ ռադիոյի ազգային հանձնաժողովի» անդամներին առաջարկում է կամավոր հրաժարական տալ, որպեսզի սահմանադրության պահանջներին համապատասխան նոր հանձնաժողով ձեւավորելու հնարավորություն ստեղծվի: Իսկ ո՞րն է անհամապատասխանությունը:

Փոփոխված սահմանադրության համաձայն, անկախ կարգավորող մարմնի անդամների կեսին 6 տարի ժամկետով ընտրում է խորհրդարանը, իսկ մյուս կեսին նշանակում է հանրապետության նախագահը՝ դարձյալ 6 տարի ժամկետով: Անկախ մարմինը շարունակում է պաշտոնավարել, մինչեւ նրա անդամների լիազորությունների ժամկետի ավարտը:

Հայտարարության մեջ ընդգծվում է, որ «Հեռուստատեսության եւ ռադիոյի ազգային հանձնաժողովի անդամների պաշտոնավարման տարբեր ժամկետները ստեղծում են մի իրավիճակ, երբ սահմանադրական պահանջին՝ 50-50 հարաբերակցությանը հասնելու համար կպահանջվի մինչեւ 6 տարի ժամանակ»:

Ն. Պ.

Ում միջոցով ամբողջանում է իշխանավորների հանդեպ հարգանքի պատկերացումը

Արցախի Ժողովրդական միությունը եւ Ստեփանակերտի մամուլի ակումբը «Արտիկլ-19» միջազգային կազմակերպության տեղեկատվության մատչելիության ծրագրի շրջանակներում անցկացրել են սոցիոլոգիական հարցում տեղեկատվության մատչելիության թեմայով: Հարցմանն ընդգրկված 37 լրագրողների, որոնք ներկայացնում են 35 (13 արցախյան, 15 հայաստանյան եւ 7 արտասահմանյան) լրատվամիջոցներ, առաջարկվել է պատասխանել՝ ովքե՞ր են, նրանց կարծիքով, ԼՂՀ ամենամատչելի եւ ամենաանմատչելի պաշտոնյաները: Ընդ որում՝ յուրաքանչյուր անվանակարգում նրանք կարող էին թվարկել երկուական անուն:

Լրագրողները մատնանշել են երեք տասնյակից ավելի տարբեր մասշտաբի պաշտոնյաների, որոնցից 21-ը, ըստ հարցման արդյունքների, մատչելի են, 20-ը՝ անմատչելի: Նրանց թվում եղել են անուններ, որոնք թվարկվել են միաժամանակ երկու դասակարգումներում, միեւնույն ժամանակ հարցման որոշ մասնակիցների պատասխաններում, երկուսի փոխարեն, նշվել է մեկ պաշտոնյայի անուն:

Ընդհանրացնելով արդյունքները, սոցհարցման կազմակերպիչներն, ըստ հավաքված միավորների, առանձնացրել են լավագույն եւ վատագույն եռյակներին: Այսպես, միավորների հաշվարկով լավագույն եռյակում են հայտնվել ԼՂՀ փոխարտգործնախարար Մասիս Մայիլյանը (22), կրթության, մշակույթի եւ սպորտի նախարար Կամո Աթայանը /8/ եւ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը (7): Այսպես կոչված վատագույնում, դարձյալ հավաքված միավորների հաշվարկով, նշվել են ԼՂՀ վարչապետ Անուշավան Դանիելյանի (15), ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարար Սպարտակ Թեւոսյանի (3) եւ արդարադատության նախարար Ռոբերտ Հայրապետյանի (3) անունները:

Կարելի է, իհարկե, չհամաձայնել ներկայացված ցուցանիշներին, որովհետեւ դրանք կազմվել են մասնակից ՁԼՄ-ներում առկա ոչ բոլոր լրագրողների կարծիքների հիման վրա: Ամեն մի լրատվամիջոցից, աննշան բացառությամբ, մասնակցել է մեկ լրագրող, հիմնականում նրանք, զվարթ պարբերաբար լռաբանում են ԼՂՀ առօրյան: Ընդհանրապես այս սոցհարցումը նպատակ ուներ պարզելու Արցախում պաշտոնյա-լրագրող հարաբերությունների իրական վիճակը, այլ ոչ թե գնահատելու պաշտոնատար անձանց աշխատանքային գործունեությունը, բայց տվյալ պարագայում էլ դարձյալ նկատելի է դառնում այն անջրպետը, որն առկա է ՁԼՄ ներկայացուցիչների եւ որոշ իշխանավորների միջեւ: Համաձայն սոցհարցման արդյունքների, կան մեկից ավելի անգամ նշված եւ վեց անմատչելի պաշտոնյաներ, իսկ ընդհանուր առմամբ 20 անմատչելի պաշտոնյաների առկայությունը Արցախի նման փոքր երկրում արդեն իսկ շոշափելի թիվ է: Ի վերջո, որեւէ պաշտոնյայի լավ կամ վատ աշխատանքի մասին հանրությունն իրազեկվում է առաջին հերթին լրագրողների միջոցով. եւ լրագրողների հետ շփումից խուսափելը նշանակում է խուսափել թափանցիկ աշխատաոճից: Դա նաեւ օրենքի պահանջ է մասնավորապես «Տեղեկատվության ազատության մասին» ԼՂՀ օրենքի, որի անվերապահ կիրառումը հավասարապես բոլորիս պարտակցությունն է:

Մխիթարական է, որ մատչելի պաշտոնյաներն Արցախում ավելի շատ են: ԼՂՀ Ազգային ժողովի նախագահ Աշոտ Ղուլյանին, օրինակ, լավագույնների մեջ կարելի է տեսնել, որովհետեւ խորհրդարանի խոսնակին այդպիսին են գնահատել 6 լրագրողներ, իսկ ընդհանուր առմամբ 7 պաշտոնատար անձինք մեկից ավելի դրական «ձայն են հավաքել»:

Սոցիոլոգիական հարցումները սովորաբար կոչված են ներկայացնելու սոսկ իրավիճակի ուղղաստկերը, եւ տվյալ դեպքում հակված չենք մտահանգելու, թե խոսքի ազատությունն այս առումով Արցախում վտանգված է: Խնդիրը լրագրողի մասնագիտական աշխատանքի նկատմամբ առավել բաց վերաբերմունք դրսեւորելու մեջ է, մանավանդ որ լրագրողները ներկայացուցիչներն են այն խավի, որին ընդունված է կոչել չորրորդ իշխանություն, եւ որոնց միջոցով է ամբողջանում իշխանավորների հանդեպ ժողովրդի ունեցած հարգանքի ու վստահության պատկերացումը:

ԳԵՎՈՐԳ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ
Ստեփանակերտ

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության ժե տարի

Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 375010 Հանրապետության 47
Ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
www.azg.am

Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՎԵՏԻՔԵԱՆ /հեռ. 521635

Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ /հեռ. 529221

Լրագրողների սենյակ /հեռ. 581841

Հանձնարարատ. ծառայություն /հեռ. 582483

Շուրջօրեայ լրահաղորդումների ծառայություն /հեռ. 529353

Հանձնարարչային բաժանմունք
«Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով կամ ռադիոհեռուստատեսութեամբ առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են
համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone 374 10 521635
47 Hanrapetoutian st.
Yerevan-Armenia, 375010

«Կադաստր գալու փոխարեն դիմում են հանրահավաքի»

Կոզեռնի իրացման գոտու բնակիչների նման մոտեցումը կադաստրի կոմիտեի գրանցման վարչության պետն անհասկանալի է համարում

Երեւանի Կոզեռն թաղամասի իրացման գոտում բնակվող 110 ընտանիքների զբաղեցրած անշարժ գույքը (հողամաս եւ շենք-շինություններ) վերջերս Երեւանի քաղաքապետի որոշմամբ ճանաչվեց որպես նրանց սեփականություն: Նշենք, որ վերոնշյալ ընտանիքները երկար տարիներ բնակվել են այդ թաղամասում, բայց օբյեկտիվ ու սուբյեկտիվ պատճառներով չունեին սեփականության վկայականներ: Սակայն քաղաքապետի որոշումը միայն մասամբ կարգավորեց այս խնդիրը, իսկ թաղամասի բնակիչները նորից սկսեցին բողոքել, այս անգամ քաղաքապետարանի փոխարեն կադաստրի պետական կոմիտեից: Նրանց հավաստիացմամբ կադաստրի տարածային ստորաբաժանումում չեն գրանցում իրենց սեփականությունը:

Ո՞րն է Կոզեռնի բնակիչների դժգոհության պատճառը եւ ինչո՞ւ քաղաքապետի որոշումը հավելյալ խնդիրներ առաջացրեց: Այս հարցերն ուղղեցինք անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի գրանցման վարչության պետ Հակոբ Մարտիրոսյանին: Պարզվեց, որ իրականությունն ամենեւին էլ այնպիսին չէր, ինչպիսի տպավորություն ստեղծվում էր առաջին հայացքից:

- Հաշվառվել էր եւ քաղաքապետի կողմից որոշում էր ընդունվել 110 միավոր գույքի նկատմամբ: Այս թաղամասի իրացման գոտու հատակագիծ-սխեման մեզ ներկայացվել է ընդամենը մեկ-երկու օր առաջ: Մինչ այդ սկսել էինք այդ 110 միավորի գրանցումները: Այսինքն, դեռ հատակագիծը չներկայացրած, կադաստրն իր գործառույթները սկսեց իրականացնել: Պարզվեց, որ այդ 110-ից 48-ը գրանցման հետ կապված որեւէ խոչընդոտ չունի: Այս 110-ից երկուսի բնակիչներն ընդհանրապես թույլ չտվեցին, որ մեր աշխատակիցները մուտք գործեն եւ տեղազննություն իրականացնեն:

Անհասկանալի է այն փաստը, որ առանց կադաստրի տարածային ստորաբաժանում դիմելու քաղաքացիները հանրահավաքի են դիմել: Վերոնշյալ 48-ից պետական գրանցման համար մեզ դիմել են 9, մնացած 39 չեն դիմել: Ընդամենը ինչ-որ ներկայացուցիչ է հանդես եկել, ընդ որում միշտ պահանջով: 9 դիմածներն իրենց վկայականները ուրբաթ օր (երեկ-Ա. Մ.) կստանան: Մնացածի հարցը մնում է առկախ: Եվս 4 դիմում եղել է այսօր (երեկ-Ա. Մ.): Նրանց սահմանված կարգով եւ ժամկետներում ընթացք կտրվի եւ դիմում տալու երրորդ օր՝ երեքշաբթի նույնպես կստանան իրենց վկայականները:

110-ի մեջ 10 ամբողջությամբ իմնական շինություններ են, որովհետեւ դրանք ժամանակին դիմել են որպես աղքատների կառույցներ օրինականացման համար: Քաղաքապետը չի օրինականացրել դրանք: Այսինքն, մենք չենք կարող սա դիտել որպես օրինականացման համար հիմք: Մինչդեռ այդ 10 այժմ նույնպես մտել են ցուցակի մեջ՝ օրինական հիմքերի վերականգնման համար: Նշեմ նաեւ, որ կառավարության որոշմամբ արգելված է իրացման գոտիներում հնինական կառույցների օրինականացումը: Այս հարցը նույնպես մնացել է առկախ:

Շատ են դեպքերը, երբ գույքն օրինական է, կադաստրում գրանցված է մի չափով, իսկ այսօր մտել է այդ 110-ի մեջ բոլորովին այլ չափով: Ենթադրենք մեզ մոտ գրանցված է 100 քմ գույք, իսկ քաղաքապետարանից ստացված որոշման մեջ՝ 120 քմ: Այսինքն քաղաքացին աղօրինի զավթել է: Հիմա սրանցից ո՞րն է ճիշտ: Մեր ունեցած այս տեղեկատվությունը տրամադրել ենք քաղաքապետարանին, որպեսզի կատարվեն մակերեսների ուղղումները եւ տարբերություն չունենանք փաստացի ու պետական գրանցված գույքի միջեւ:

Ամբողջ պատկերը սա է: Ես չեմ հասկանում հանրահավաքների իմաստը: Եթե մտածում են բիրտ ուժով ինչ-որ բանի են հասնելու, այդպես չի լինելու: Կա օրենք եւ մենք կարող ենք գրանցել միայն այն, ինչի իրավունքն ունենք օրենքով սահմանված կարգով:

- Ե՞րբ կլուծվի այդ 48-ի խնդիրը:

- Դիմելուց հետո եռօրյա ժամկետում առանց որեւէ նախապայմանի, որովհետեւ այստեղ չճշված հարցեր չկան:

- Այդ 48-ի սեփականատերերը գիտե՞ն, որ իրենք խնդիրներ չունեն եւ պետք է դիմեն:

- Երբ նրանց ներկայացուցիչները գալիս են կադաստրի տարածային ստորաբաժանում, նրանց բացատրում են: Ես չեմ կարող ասել, դա հասնում է բնակիչներին, թե՞ ոչ: Քանի դեռ բնակիչը չի դիմել, չենք կարող մեր նախաձեռնությամբ պետական գրանցում կատարել: Դիմում պետք է լինի, որպեսզի մենք դա անենք: Չմոռանանք, որ այդ գործընթացն ուղեկցվում է որոշակի պետական վճարներով: Կոնդում, օրինակ՝ եկան, դիմեցին եւ այդ գործընթացը հաջող իրականացավ: Կոզեռնի բնակիչները, որոնք էլ տարօրինակ է, չեն գալիս կադաստրի տարածային ստորաբաժանում, որպեսզի անձամբ լսեն եւ համոզվեն, թե ինչ պետք է անեն, ինչ խնդիրներ ունեն կամ չունեն:

- Իսկ մնացածների խնդիրը ինչպե՞ս եւ ե՞րբ է լուծվելու:

- Այն գույքը, որտեղ հակասություն կա քաղաքապետի որոշման եւ փաստացի իրավիճակի միջեւ, ուղարկել ենք քաղաքապետարան լրամշակելու եւ ճշտելուց հետո հետ ուղարկելու նպատակով: Դա պետք է արվի հնգօրյա ժամկետներում: Եթե ժամանակին չստանանք, կահազանգենք, որ արագացնեն:

ԱԲՈՒ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Առողջապահական գովազդի աղբը հանել եթերից

1-ին էջից

Ավելորդ է ասել, թե որքան վտանգավոր են դրանք՝ ներբողների շարանների նկատմամբ անհայտ, կասկածելի կրթությամբ ժամանակակից հեքիմների մասին, որոնք խոստանում են բուժել բացառիկապես ամեն ինչ, նույնիսկ հիվանդություններ, որոնց հանդեպ անզոր է ժամանակակից բժշկագիտությունը: Նրանցից շատերը իրենց բիզնեսն ընտանեկան են դարձրել, եւ ընտանյոք հանդերձ էլ ներկայանում են գովազդներում:

Քանի՞սը բժշկական գործունեությամբ զբաղվելու արտոնագիր ունի, ոչ ոք չգիտի: Դաշտն անտեր է ու խոպան, ու այնտեղ անարգել վարուցանք են անում այդ անձինք:

Նոր կարգը՝ որոշակիորեն կոշտ պայմաններ առաջադրելով գովազդատուներին, փորձում է առողջապահական գովազդային աղբը թափել եթերից:

Այսօրվանից աղօրինի են համարվում այն գովազդները, որոնք հեռարձակվում են առանց կազմակերպության անվանման եւ նրա արտոնագրի վավերապայմանների, առանց ՀՀ-ում պետական գրանցման հավաստագրի հպմարի ու ամսաթվի, նաեւ առողջապահության նախարարության թույլտվության համարի ու ամսաթվի ներկայացման:

Այստեղտեղ արգելվում է այն գովազդը, որը լսողին փորձում է համոզել, թե տվյալ դեղը կարելի է օգտագործել առանց բժշկի խորհրդի, որ այն ուրիշ դեղերից ավելի լավն ու արդյունավետ է, եւ կողմնակի ազդեցություններ չունի, իսկ ընդունելու դեպքում անպայման կբարելավվի մեր առողջական վիճակը:

Արգելվում է գովազդել նաեւ բուժական այն մեթոդները, որոնց միջոցով կարելի է «հասնել» գիտությամբ չհիմնավորված արդյունքների:

Եվ կարեւոր մի սրբագրում եւս. արգելվում է պատկերել կամ հեռարձակել գովազդվող մեթոդի օգնությամբ «բուժված» անձանց կարծիքները բուժման ընթացքի, արդյունավետության կամ արդյունքների վերաբերյալ:

Բայց ո՞վ է երաշխավորելու, որ այսօրվանից դյուրահավաս, տարրական գիտելիքներ ու պատկերացումներ չունեցող սպառողների առողջությունն այլեւս վտանգի տակ չի լինի կեղծ բժիշկների գործունեության պատճառով: Եթե 10 տարի ոչինչ չի արվել օրենքի առկայության պայմաններում, հիմա դժվար թե հրաշք լինի: Մանավանդ որ անհայտ է նման գովազդատուներին եթերից, մամուլից վտարելու մեխանիզմը եւս: Համենայն դեպս, այս ոգիով որեւէ հանձնաժողով կամ աշխատանքային խումբ չի ստեղծվել: Գուցե այս անգամ անգործությունից դո՞ւրս գա Հեռուստատեսության եւ ռադիոյի ազգային հանձնաժողովը:

Կարգը որեւէ տողով չի հիշատակում նաեւ տուգանքների կամ պատժամիջոցների մասին, որոնք հարկ կլինի կիրառել օրինախախտների նկատմամբ:

Շրջանցվել է մի կարեւոր հանգամանք եւս՝ Հայաստանում վխտում են առողջապահական կասկածելի կազմակերպություններ, որոնք միջնորդների միջոցով գովազդում են իրենց տիպեթյան, չինական, հոմեոպաթիկ բժշկության հրաշքները: Նրանց ձեռքը եւս ոչ ոք չի բռնում:

ԿԱՐԵՆ ՊԱՊԻՆՅԱՆ

ՀԱՐՑՈՒՄ

Հիմա հասարակությունը վստահո՞ւմ է լրատվամիջոցներին, թե՞ ոչ

Ընտրություններին ընդառաջ՝ դրանք մերժելով կամ ...

Խորհրդարանական եւ նախագահական ընտրությունների նախաշեմին ինչ-որ «եփումների» մեջ են նաեւ լրատվամիջոցները: Շատերի գնահատմամբ, որն ունի նաեւ ճշմարտացիության բաժին, ՁԼՄ-ները հայտնվել են ո՞ւմ ծառայելու, ինչպե՞ս ծառայելու, ի՞նչ եւ ինչպե՞ս են անելու հարցերի առաջ: Արդյոք մենք ունե՞նք ազատ լրատվամիջոցներ, որոնց վստահում է հասարակությունը եւ որոնք կկարողանան այնքան ուժ գտնել, որ ընտրությունների նախաշեմին եւ դրանց ընթացքում հասարակությանն ապահովեն հնարավորինս անաչառ լրատվությամբ:

«Հայելի» բանավեճի ակումբը 6 հարյուր երեւանցիների շրջանում սոցիոլոգիական հարցում է անցկացրել՝ պարզելու հասարակության վստահության չափը լրատվամիջոցների նկատմամբ եւ նրանց ակնկալիքները վերջիններից՝ կոնկրետ ընտրությունների ընթացքում: Հարցվածների 80 տոկոսը՝ 480 մարդ թերթ չի կարդում, մեծ մասամբ սոցիալական վիճակի, հետո էլ՝ մամուլի նկատմամբ վստահության պակասի պատճառով: Հարցվածների 13 տոկոսն էլ տպագիր մամուլի ակտիվ ընթերցող է, բայց դրանով հանդերձ առանձնապես չի վստահում մամուլի տրամադրած տեղեկատվությանը: 7 տոկոսը անվերապահորեն վստահում է մամուլին եւ համոզված է, որ ընտրությունների ընթացքում մամուլից կարող է ստանալ անաչառ լրատվություն:

Սոցհարցման մասնակիցների 57 տոկոսը՝ 342 մարդ վստահում եւ անաչառ է համարում ռադիոլրատվությունը, իսկ 13 տոկոսը՝ 78 մարդ, վստահում է հեռուստաընկերությունների լրատվական ծառայություններին: 114 մարդ՝ հարցվածների 19 տոկոսը չի վստահում ոչ ռադիոյին, ոչ հեռուստատեսությանը: Հարցվածների 11 տոկոսը այնուամենայնիվ 2007 թ. ընտրություններին ակնկալում է անաչառ տեղեկատվություն ստանալ ռադիոհեռուստալրատվամիջոցներից:

Լրատվամիջոցների նկատմամբ վստահությունն ու ընտրության շրջանում նրանց անելիքների հարցը ակումբի երեկվա բանախոսների կրակոտ քննարկման առարկա դարձավ: «Ռադիոլուր» լրատվական ծառայության ղեկավար **Արթուր Սահակյանի** ու «Հայք» օրաթերթի եւ «Տարեգիր» շաբաթաթերթի խմբագիր **Վասակ Դարբինյանի** գնահատմամբ՝ մամուլի նկատմամբ վստահության 13 տոկոս ցուցանիշը վատ չէ: Արթուր Սահակյանը համոզված է, որ թերթերն ավելի են նպաստում հասարակական կարծիքի ձեւավորմանը: Վասակ Դարբինյանն էլ նկատեց, որ անազատ հեռուստաընկերությունների մեր իրականությունում միշտ թե էաս ազատ են թերթերը, բայց նրանց համար սահմանափակ հնարավորություններ են ստեղծված. «Էս երկրում կազմակերպված մի վիճակ է ստեղծվել, որ մամուլը չկարողանա աճել»:

Լրատվամիջոցների ղեկավարները մի լավ վիճեցին նաեւ անաչառության, ճիշտ լրատվության

շուրջը: «Ռադիոլուր»-ի ղեկավարն ընդգծեց, որ իրենք միշտ էլ փորձել են հնարավորինս ճիշտ լրատվություն տալ, իսկ ինչ վերաբերում է առաջիկա ընտրություններին, ապա «ընտրությունների ժամանակ մենք չենք տուժելու, այլ շահելու ենք, քանի որ, ի տարբերություն նախկին ընտրության, այսօր ընդդիմությունը իշխանության մեջ է, իշխանությունը միատարր չէ եւ բեւեռացած պայքար չի լինելու»: Արթուր Սահակյանը կարծում է, որ կշահի նաեւ ընդդիմությունը, քանի որ իրենք փորձելու են հնարավորինս հավասար արտահայտվելու հնարավորություն տալ բոլոր ուժերին:

«Օբյեկտիվ լրատվությունը այն է, երբ լրագրողը գրում կամ թողարկում է իր ընկալածը եւ ոչ թե այն, ինչ ֆախ է արվել նախագահականից», անաչառ լրատվության վերաբերյալ ասաց «Հայկական ժամանակ» օրաթերթի գլխավոր խմբագիր **Նիկոլ Փաշինյանը**: Նա առհասարակ վատ վերաբերվեց նման թեմայի քննարկումներին՝ նկատի ունենալով իրականությունը, որ բոլոր հեռուստաընկերությունները վերահսկվում են, սյուժեներում անընդհատ նույն մարդիկ են, բարեգործական ակցիաների մասին հիացական ռեպորտաժներ են տրվում եւ այլն: Նիկոլ Փաշինյանն ավելի կենտրոնացավ ոչ թե ընտրությունները մեկնաբանելու, այլ դրանք մերժելու գաղափարի վրա:

ԳՈՌԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Շուտափույթ աղաքինում

Մեր գործընկեր՝ «Ֆոտոլուր» գործակալության տնօրեն եւ իսկապես վաստակավոր ֆոտոթղթակից Հերբերտ Բաղդասարյանը հինգշաբթի գիշեր անակնկալ հիվանդանոց է տեղափոխվել, որտեղ բժիշկները նրան վիրահատել են արյունատար անոթների խցանումը վերացնելու համար: Հիվանդի վիճակը, բժիշկների գնահատմամբ, կայուն է:

Շուտափույթ եւ ամբողջական աղաքինում ենք մաղթում մեր գործընկերոջը:

Հայաստանում շուրջ 150 հազար մարդ տառապում է զարկերակային գերճնշմից

Ուռուցքանի սուր ինֆարկտի զոհերն ավելի շատ տղամարդիկ են

Ինչպես ողջ աշխարհում, Հայաստանում եւս ուռուցքային հիվանդությունները բնակչության մահացության ընդհանուր տոկոսի կեսից ավելին են կազմում: Հայաստանում անընդմեջ ավելանում են, օրինակ, ուռուցքանի սուր ինֆարկտի դեպքերը, ինչի ականատեսն ենք բոլորս: Արձանագրվում է մի հետաքրքրական իրողություն եւս. ուռուցքային հիվանդություններից մահացությունների աճին հակառակ, նկատվում է հիվանդացության ընդհանուր մակարդակի նվազում: Խոսքը վերաբերում է, անկասկած, գրանցված հիվանդներին, քանի որ ինքնաբուժությունը գրեթե զանգվածային բնույթ է ստացել: Ֆինանսական կամ այլ դրդապատճառներով առողջական նման խնդիրներ ունեցողները սովորաբար խուսափում են բժշկի դիմելուց: Որպես կանոն, նրանց մեծ մասը հիվանդանոցում հայտնվում է արդեն բարդացման փուլում, որը, սակայն, հնարավոր էր կանխարգելել եւ չհասցնել կյանքին սպառնացող սահմանի:

Մահացությունների քանակի ավելացումը բացատրվում է նաեւ ուռուցքային ախտերը խթանող ռիսկի գործոնների ուժեղացմամբ: Ամենալուրջ ռիսկի գործոնը համարվում է զարկերակային գերճնշումը: Այս առթիվ ուշագրավ հետազոտություն է իրականացրել Հայկական բժշկական ասոցիացիան: Նման լայնածավալ ուսումնասիրություն այս ասպարեզում իրականացվել է առաջին անգամ եւ կարեւոր է այն տեսանկյունից, որ ողջ հանրապետությունում ուռուցքային հիվանդությունների համաճարակաբանական պատկերի վերաբերյալ որեւէ հստակ վիճակագրություն չկա: Հարցումներն իրականացվել են միջազգային չափորոշիչներով, միջազգային փորձագետների մասնակցությամբ: Ուսումնասիրվել է զարկերակային գերճնշման եւ դրա ռիսկի գործոնների տարածվածությունը, ինչպես նաեւ բնակչության տեղեկացվածության մակարդակը դրա բարդությունների եւ կարգավորման ուղիների վերաբերյալ: Պատահական ընտրության սկզբունքով հետազոտվել է 800 երեւանցի, որոնց 27 տոկոսն ունեցել է զարկերակային գերճնշում: Հաշվարկման սկզբունքների համաձայն, դա նշանակում է, որ Երեւանի 1 մլն չափահաս բնակիչներից 150 հազարը առողջական նման խնդիր ունի: Ըստ եզրահանգման, զարկերակային գերճնշման հետեւանքով զարգացած ինֆարկտի զոհերն ամենից առաջ աշխատունակ տարիքի տղամարդիկ են: «Հետազոտության արդյունքները վկայում են, որ Հայաստանում ուռուցքային հիվանդությունների տարածվածության մակարդակը չի գերազանցում միջին եվրոպական տվյալներին: Բայց մեր կարետրագույն վրիպումն ու բացթողումն այլ հարթությունում է՝ եթե ողջ աշխարհում զարկերակային գերճնշմամբ հիվանդները բուժվում են, մեզ մոտ հիվանդների ընդամենը 7 տոկոսն է արդյունավետ բուժում ստանում», ասում է Երեւանի գլխավոր ուռաբան, ուռաբանության ինստիտուտի փոխտնօրեն եւ Հայկական բժշկական ասոցիացիայի նախագահ **Պարունակ Զելվելյանը:**

Հիվանդների մեծ մասը չի հետեւում բուժմանը, պատճառների շարքում առաջինը նրանց տեղեկացվածության խիստ ցածր մակարդակն է: Մի զգալի հատված, որքան էլ զարմանալի թվի, տարիներ տեղյակ չէ իր հիվանդության գոյության մասին: Մի մասն էլ գաղափար չունի, որ գերճնշումը լուրջ ռիսկի գործոն է ինֆարկտների եւ ինսուլտների՝ ուռամկանի եւ ուղեղի կաթվածի, երիկամային եւ ուռային անբավարարությունների համար: Առավել եւս տեղյակ չեն կանխարգելիչ միջոցառումների մասին:

Իրազեկման կարգով ասենք, որ 140-90-ը այն սահմանային թվերն են, որոնք արդեն խոսում են զարկերակային գերճնշման գոյության մասին:

Զարկերակային գերճնշումը սովորաբար շրջանցում է առողջ արդելակերպի սիրահարներին, ում կենցաղից բացակայում են ծխախոտը, ալկոհոլը, ճարպոտ եւ աղի սնունդը, եւ ովքեր ֆիզիկական ակտիվ կյանքի երկրպագու են: Հետազոտված 18 տարեկանից բարձր տղամարդկանց 46,2 եւ կանանց 6,3 տոկոսը օրական ծխում է 1 տուփ սիգարետ, տղամարդկանց 21,2 եւ կանանց 4,1 տոկոսը չարաշահում է ալկոհոլը, տղամարդկանց 14,9 եւ կանանց 24,2 տոկոսը տառապում է ճարպակալմամբ, տղամարդկանց 26,6 եւ կանանց 14,5 տոկոսը չարաշահում է նաեւ կերակրի աղը: Նրանց մեծամասնությունը ֆիզիկական ակտիվ կյանքով չի ապրում:

Զարկերակային գերճնշումն այսօր խնդիր է դարձել նաեւ երիտասարդների եւ այն մարդկանց համար, ովքեր ոչ ծխախոտամոլ են, ոչ էլ ալկոհոլի սիրահարներ, քանի որ հիվանդությունը պայմանավորված է ոչ միայն սխալ կենսակերպով: Ռիսկի գործոնների թվում են նաեւ ժառանգականությունը, երիկամային, էնդոկրին համակարգի հիվանդությունները, որոնց ավերիչ գործողության հետեւանքը դառնում է զարկերակային գերճնշումը: Վերջինս ողբալական ռեակցիայով ախտահարում է ուռամկանը, առաջացնում ուղեղային եւ անոթային բարդություններ: Զարկերակային գերճնշման վաղ ախտորոշումն ու կանխարգելումը կարող են ապահովագրել այս վտանգներից եւ՛ երիտասարդ, եւ՛ տարեց հասակում:

Սակայն Հայաստանում ուռանոթային կանխարգելիչ ծրագրերի իրականացման համար պետությունը նոպեկների հատկացումներ է անում, եւ եթե մի շարք հիվանդությունների գծով արդեն մշակվել եւ գործում են ազգային ռազմավարություններ, ուռանոթային հիվանդությունները մնացել են սպվերում: Չի իրականացվում այս հիվանդների ոչ հաշվառում, ոչ էլ վերահսկողություն: Գոյություն չունի ուռանոթային հիվանդությունների կանխարգելմանն ուղղված պետական քաղաքականություն, ինչպես կա շաքարային դիաբետի, քաղցկեղային, աղյան, տուբերկուլոզի դեպքում: Ավելին, նշված հիվանդությունների կանխարգելման համար գործում են նաեւ միջազգային ծրագրեր:

Հետաքրքրական է հետազոտության այլ դրվագ եւս. վերլուծվել են առողջային օղակի բժիշկների գործողության սկզբունքները, պարզվել է, որ բժիշկների մի մասը սովորաբար հանձնարարում է կուրսային՝ ժամանակավոր (ասենք՝ մեկամսյա) եւ ոչ թե երկարաժամկետ բուժում: Այսինքն, Հայաստանում առկա է բժիշկների մի կատեգորիա, որը հիվանդների նման նույնպես տեղեկացվածության խիստ կարիք ունի:

Բժշկագիտական անհերքելի ցուցումներով զարկերակային գերճնշմամբ հիվանդները մինչեւ իրենց կյանքի վերջը պետք է դեղորայք օգտագործեն եւ լինեն բժշկի հսկողության տակ: Եվ գերադասելի է այն բժշկի, որի հետ հիվանդը համագործակցում է եւ որը մանրակրկիտ տեղյակ է հիվանդի առողջական վիճակի առանձնահատկություններին: Դա, իհարկե, ամենից լավ կարող է իրականացնել ընտանեկան բժիշկը:

Մենք արդեն երկար ժամանակ խոսում ենք առաջնային բուժօգնության բարեփոխումների մասին, բայց ընտանեկան բժիշկների արդեն 6-7 տարի փողհարվող համակարգն այդպես էլ իրականություն չի դառնում, եւ բնակչությանը խոսի պես հնձող այս հիվանդության պատկերը եւս անփոփոխ է: Իհարկե, զարկերակային գերճնշումը, ինչպես մյուս հիվանդությունները, անհնար է լիովին բուժել, սակայն գոնե հնարավոր է կարգավորել եւ խուսափել, օրինակ, այնպիսի սարսափազդու բարդությունից, ինչպիսին ուղեղի կաթվածն է:

ԳԱԲԻԵԼ ՊԱՌԼԵԼՅԱՆ

Սեռապես առողջ, սեխուալ գրագիտությամբ՝ բոբիկ

Սեխուալ ազատականության այս օրերում տարբյուն հայերի մեծ մասն անկյուն ու առիթ բաց չի թողնում իր հաճույքն ու սեռական պետքերը հոգալու համար (մանավանդ որ դրան է ծառայում բարերի ու ռեստորանների, սաունաների, հոթել-մոթելների մի ողջ բիզնես ոլորտ), բայց ինչպե՞ս է այդ անում, հարց է: Պատասխանը գտնելու համար զրուցակիցներ ենք ընտրել ՀՀ գլխավոր սեխոլոգ, Սեխոլոգիայի կլինիկական կենտրոնի տնօրեն **Արամ Հակոբյանին** եւ նույն կենտրոնի բժիշկ-սեխոլոգ **Նարինե Ներսիսյանին:**

«Տավոլ, սեխը հաճախ նսեմացվում է, հասցվում առեւտրի, կենցաղային ցածրակարգ մակարդակի, ասում է Նարինե Ներսիսյանը: Մինչդեռ ամենավեհ զգացմունքի՝ սիրո եւ հարգանքի արտահայտությունը պետք է լիներ»: «Բացի այդ, տարվում է սեխուալ մշակույթի ձեւավորման սխալ քաղաքականություն: Հասարակ մի բան, տարբեր ծրագրերով Հայաստան բերված պահպանակները բաժանվում են վայրիվերո: Ով տարիքային առանձնահատկությամբ երեխա ունենալու շրջանում է, նրան են բաժանում, կարծես հումանիտար օգնություն լինի: Հատկապես մարզերում սեռական կուլտուրա չունենք», արձանագրում է տնօրեն Ա. Հակոբյանը: «Իսկ ինչ ունենք», հետաքրքրվում եմ եւ լսում վստահելի աղբյուրների, սեռական անբավարարվածության դեպքերի, մանկապղծության ու այլ այլասերումների, ինչպես նաեւ կանանց սեխոպաթոլոգի դիմելիության բարձրացման (ինչը գովելի է) մասին: Մասնագետներն ամենավստահելիորեն են համարում աղաղեկատվությունն ու մանկապղծությունը, հետեւում թողնելով անգամ միասեռականության գովազդի ահագնացող տարափը: Այնուամենայնիվ, մեր առաջին հարցը միասեռականության քարոզի հետ կապված մտահոգությունների մասին է:

Ս. Մ. -Եթե նկատել եք, մեր օրերում վոկալ տարբեր «դուետներ», տեսահոլովակներ ու անգամ ֆիլմեր գովազդում ու քարոզում են համասեռամոլությունը: Դրա քարոզն արդեն նկատվում է հայկական մամուլի ինչ-ինչ պարբերականների էջերին: Մինչդեռ, շատ բարոյագետների բնորոշմամբ, դա այնքան էլ «առողջ» վիճակ եւ քարոզի առարկա չէ:

Ա. Հ. -Բժշկական տեսանկյունից միասեռականությունը վարակիչ հիվանդություն չէ, սակայն չի բացառվում, որ միասեռականները, ինչպես ամեն մի փոքրամասնություն, ցանկանան շատանալ: Ինչպես ամեն մի փոքրամասնություն, նրանք եւս ձգտում են իրենց կարծիքն ու գաղափարախոսությունը, դիրքը հասցնել տվյալ հասարակության մեջ՝ դառնալ ամուր ու դրական երեւույթ:

Բժիշկները վստահեցնում են, որ թե՛ գաղափարական, թե՛ «օրինակ ծառայելու» եւ քարոզի առումով համասեռամոլությունը վտանգավոր չէ, հատկապես այն հասարակության համար, որտեղ կան սեխի կուլտուրա եւ առողջ սեռականություն: Սակայն ունի՞ դրանք մեր հասարակությունը, ոչ ոք չգիտե, քանի որ նման հետազոտություն ու վիճակագրություն ոչ ոք չի պատվիրում: Ենթադրելի է, թե անկեղծ վիճակագրական տվյալները ինչ պատկեր ցույց կտային, եթե հաշվի առնենք, թե ինչ սեխուալ դաստիարակություն են ստանում մեր մանուկները ու դեռահասները, որոնց աչքի առաջ ու քթի տակ են կրպակներում վաճառվող կասկածելի բովանդակության ու ճաշակի հրատարակությունները, տեսավարձույթի անհայտ, բայց հավանական բազմազանությունը: Իսկ ինչ վերաբերում է միասեռականների «կուլտուրական գրոհին», Ա. Հակոբյանը հավաստիացնում է, թե անկախ նրանից՝ հասարակությունը կքաջալերի, թե կդատապարտի, միասեռականների թիվը ծնելիության անփոփոխ պայմաններում մնում է հինգ տոկոս: «Որքան էլ գովազդեն իրենց, վիճակագրությունը չի փոփոխվի», ասում է բժիշկը: Նա նաեւ առաջարկում է. «Պետք է ոչ թե արգելել ու փակել միասեռականության քարոզը, այլ քարոզել նորմալ հետերոսեխուալ վարքը (խոսքն ամուսինկին զույգի մասին է- Ս. Մ.), հետերոսեխուալների ընտանեկան կյանքը եւ կյանքի հաջողվածությունը հասարակության կողմից ընդունելի կողմնորոշման դեպքում»:

Ն. Ն. -Միաժամանակ արձանագրենք, որ Երեւանի դիսկոտեկներում մոդա է, երբ աղջիկները սկսում են աղջիկներին «ուշադրություն դարձնել»: Դա մի տեսակ հարգի է որոշակի շրջանակներում, որոնց մեծ մասը նույնիսկ չի հասկանում իր արարքը: Ինչպես ծխելն է 16-17 տարեկանում ինքնահաստատման մեթոդ համարվում, այնպես էլ լեսբիությունը:

Մեր զրուցակիցները պատմեցին, որ իրենք հրատարակել են սեխոլոգիայի վերաբերյալ հայալեզու դասագիրք, որն արդեն տպարանում է եւ նախատեսված է ներկայացնել կրթության նախարարություն՝ որպես բուհական ձեռնարկ: Մեզ հնարավորություն տվեց ծանոթանալու դեռեւ անտիպ գրքին, որից մի հատված ներկայացնում ենք ընթերցողի ուշադրությանը: «Այսօր մենք ականատես ենք սեխուալ սցենարների փոփոխմանը: Կարեւոր է դառնում ոչ թե հոմո կամ հետերոսեխուալ լինելու խնդիրը, այլ սեփական սեռականության մեջ ամբողջովին բացահայտվելու եւ հաստատվելու պահանջը»:

Սեխոլոգները մեր խնդրանքով խոսում են նաեւ սեռականության պրոբլեմների մասին հետերոսեխուալների, այսինքն՝ նորմալ կողմնորոշման տեր մարդկանց համար:

Ս. Մ. -Ինչ սոցիալական, հոգեբանական խնդիրներ կան, որ բերում են սեռական խնդիրների:

Ա. Հ. -Իմ դիտարկմամբ՝ 20-30 տարվա ընթացքում սեխոպաթոլոգի այցելությունների թիվը հիմնականում անփոփոխ է: Սեխուալ հիվանդությունները ոչ մի կապ չունեն երկրի համակարգը փոխվելու, սահման բացել-փակելու կամ աշխարհաքաղաքական, գլոբալիզացիոն գործընթացների հետ: Անգամ առողջ միտում կա կանանց հաճախելիության ակտիվացման, որ նշանակում է կնոջ բարդույթից ազատվելու մասին, քանի որ կանայք, ի տարբերություն առաջվա, դիմում են սեռական տարբեր խանգարումների դեպքում, հաճախ գալիս են ամուսնու կամ զուգընկերոջ հետ: Սակայն պրոբլեմատիկ է ՁԼՄ-ների աղաղեկատվությունը: Օրինակ, խիստ հայտնի SPID-INFO-ի եւ նմանատիպ դեղին մամուլի տարաբնույթ տեղեկատվությունները մարդիկ ընկալում են որպես նորմա եւ հեղինակավոր խոսք: Խնդրեմ, մի դեպք, ընթերցողը համոզված էր, որ սեռական կյանքով շաբաթական երեք անգամ ապրելը նորմալ է, իսկ ինքն ասենք շաբաթը մեկ օր է զգում դրա պահանջը: Այստեղից էլ բարդույթը եւ սեռական անհարմարության զգացողությունը: Մինչդեռ սեռական ակտիվությունը խիստ անհատական երեւույթ է, որին նպաստում են եւ խոչընդոտում են շատ հանգամանքներ՝ ընտանեկան պայմանները, հորմոնալ, հոգեբանական վիճակը, անգամ օրվա տրամադրությունը:

Ն. Ն. -Մեծ սխալ եւ պրոբլեմների առիթ է հասարակության մեջ շատ տարածված ընկերտիհների «փորձի փոխանակումը» զույգների ժամանակ, չափազանցված զույգերն իրենց սեռական կյանքի մասին եւ դրանից բխող թյուրըմբռնումները: Մեկ այլ սխալ երեւույթ էլ կա: Երբ խոսում կամ գովազդում են առողջ սեխը (ինչպես նաեւ կոսմետիկան ու հագուստը), նկատի ունեն երիտասարդ, 90-60-90 չափսերի կանանց: Մինչդեռ այդ հանգամանքը բարդույթի եւ սեխուալ արգելակման առիթ է այլ չափս ու կառուցվածք ունեցողների համար, մտավախություն ստեղծելով, թե իրենց սեռականությունն ու գեղեցկությունը թերի են: Իրականում սեռական առողջությունը մարմնավոր «դիզայնը» չէ, այլ հասուն եւ առողջ սեռականությունը:

Ս. Մ. - Կարելի՞ է ասել, որ այս դեպքում հակասության մեջ են բժիշկների գիտական մոտեցումն ու ոչ մասնագետների գեղագիտական ճաշակները:

Ն. Ն. -Այո, փաստորեն, այդպես է:

ՍՈՒՍԱՆՆԱ ՄԱՐԳԱՐՅԱՆ

16 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2006 ԷՋ Ա

ՀԱՅԿԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿ

Պարբերականությունը՝ երկշաբաթյա

Թիվ 19

ՀԱՆԴԻՊՈՒՄ ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ՀԵՏ ԻՐ ՏԱԼԸ

ԿԱՐՊԻՍ ՍՈՒՐԵՆՅԱՆ

1963-ի այս ամառային սեսիային մի ամբողջ ամիս Մոսկվայում էի՝ Գրական ինստիտուտի հեռակա ուսանող (ուշացած «ուսանողությունս», որ ինձ բարեսիրաբար առաջարկվեց, որպեսզի բարձրագույն ուսման մի դիպլոմ ունենամ վերջապես, համենայն դեպս): Սեսիան վերջացած, գնացի տոմսս էլ գրպանումս, մի օր հետո արդեն ճամփա էի ելնելու դեպի Երևան՝ վերադառնալու տուն եւ «Սովետական արվեստ» ամսագրում իմ աշխատանքին: Ու հանկարծ հեռագիր իմ շեֆ խմբագրապետ Բայանդուրից՝ անպայման Արամ Խաչատրյանից էլ խոսք վերցնեմ Սայաթ-Նովայի մասին...

Այո, Սայաթ-Նովայի հոբելյանական տարին է, ծննդյան 250-ամյակը: Մեր ամսագրի սեպտեմբերյան համարի կեսը նվիրվելու է այս հոբելյանին: Հեռագրով հայտնել էի Բայանդուրին, որ արդեն, ինչպես պատվիրել էր, խոսք վերցրել եմ Սուրեն Քոչարյանից, որին անձամբ գիտեի սակայն, ծանոթացել էի մեր իսկ խմբագրությունում: Եվ ահա՝ ոչ ավելի, ոչ պակաս, նույնիսկ Արամ Խաչատրյանից էլ, որին բոլորովին ծանոթ չեմ, երկյուղալի է թվում նույնիսկ: Քոչարյանից անգամ խնդրելով, համոզելով կարողացել էի վերցնել, գրել էր անձամբ, հայերեն, խմբագրել էի, հետս տանելու էի Երևան: Իսկ ինչպե՞ս մոտենամ Խաչատրյանին, ինչպե՞ս կընդունի, կամ... կընդունի՞ որ ինձ՝ իրեն անծանոթ մեկին: Գոնե մի ծանոթի հանձնարարականն ունենայի՝ բեռնացի կամ գրավոր: Զանգահարեցի Քոչարյանին, նա էլ Խաչատրյանի հեռախոսի համարը միայն տվեց:

Ի դեպ, նախ հիշատակեմ, չմոռանալու համար, որ մի շաբաթ ջերմ երեկո անցկացրի Սուրեն Քոչարյանի տանը Լազարյան ճեմարանի մոտ: Համով-հոտով, կոլորիտով մարդ է ասմունքի մեծ վարպետը, որ իր «մեկ դերասանի թատրոնն է» ստեղծել, ինքն էլ կազմել ու բեմից գունագեղ պատումով ներկայացնում է դասական երկերի իր հոյակապ «կոմպոզիցիաները» հայերեն կամ ռուսերեն՝ Հոմերոսից, Բոկաչչոյից, Շեքսպիրից մինչեւ Տոլստոյ, Աբովյան, Թումանյան եւ այլն: Առաջին իսկ օրը շատ հետաքրքրական զույգ ունեցանք իր առանձնասենյակում, որ գրքերով խեղդված մոսկովյան հին ու փոքր մի սենյակ էր: Ի միջի այլոց, երբ զույգի բերումով հիշեցի Մոնտենի մի ասույթը, նա հանկարծ ոգեւորվեց ու ասաց, թե հիմա հենց այդ փիլիսոփային է ուսումնասիրում եւ մտադիր է գրել նրա մասին, ցույց տվեց Մոնտենի էսսեների ռուսերեն լիակատար ակադեմիական հրատարակության երկու խոշոր հատորները իր գրասեղանին: Ափսոս, հյուրեր եկան, ու մեր այդ շահեկան զույցն ընդհատվեց, սկսվեց կոնյակով, կենացներով ու թառի նվագով մի թեֆ, որ տեւեց մինչեւ կեսգիշեր: Շատ սիրալիր, նա ինձ հրավիրեց հաճախ այցելել երեկոյան, քանի Մոսկվայում եմ, այդպես «նստենք ու մի կուշտ զրուցենք»: Երկու-երեք անգամ եւս եղա մոտը, բայց ամեն անգամ էլ այնպես էր պատահում, գալիս էին իր այդ երեւի մտերիմ հյուրերը, եւ մեր «կուշտ զրույցն» ընդհատվում ու «կուշտ թեֆի» էր վերածվում՝ իր շնորհիվ նույնքան համով-հոտով, իսկ ես ափսոսում էի. ավելի սիրում եմ հետաքրքրական զրույց, քան կերուխումով թեֆ: Իսկ նա, ինչքան տեսա, երեւի նույնքան սիրում է երկուսն էլ, զգացի, որ այդ հյուրերի հետ լինելն էլ իսկական վայելք է նրա համար, ինչպես հոգեբան զրույցի իմացական «թեֆը»: Սիրեցի ոչ միայն Սուրեն Քոչարյան արվեստագետին, այլեւ Սուրեն Քոչարյան մարդուն՝ իր վարվեցողությամբ ջերմ սիրտ ու անմիջական, ձայնը ճոխ, խոշոր զվարթ դեմքին հաստ ակնոցն էլ կարծես ժպտուն. մարդ, որ կերուխումով թեֆն անգամ մի տեսակ արվեստի վերածելու ձիրքով էլ է օժտված:

Բայց վերադառնամ Խաչատրյանին: Տրամադրելով ինձ տարակուսանքիս դեմ՝ զանգահարեցի իր տունը: Կանացի ձայն, ռուսերեն՝ աղախինն էր կարծեմ: Խաչատրյանը գնացել է Վիլնյուս: Ե՞րբ կգա: Երկու օրից: Թեթեւացա մի տեսակ, բայց նաեւ մտահոգ: Եթե ասվեր՝ մի շաբաթից, կարող էի իրավունք տալ ինձ չսպասելու: Երկու օրից՝ պետք է սպասեմ խղճի հանգստության համար, կատարեմ հանձնարարությունը: Գնացքի տոմսը ես տվի, դա էլ մի գլխացավանք էր: Երկու օր հետո հոգեբանորեն ավելի հեշտ եղավ զանգահարելը: Ինքն էր, բայց իր «ալո»-ի մեջ մի դժգոհ շեշտ հնչեց ականջիս: Շտապեցի ասել.

- Կներեք, որ անհանգստացնում եմ ձեզ, Արամ Իլյիչ: «Սովետական արվեստ» ամսագրից եմ, կուզեի ձեզ հանդիպել մի կարեւոր գործով:

- Ինչո՞ւ եք ուզում: Սայաթ-Նովա՞:

Այնքան անակնկալ էր կռահելը, որ բերանիցս ինքնիրեն դուրս թռավ ուղղակի.

- Այո, Արամ Իլյիչ:

- Ես Սայաթ-Նովայի մասին ոչինչ չգիտեմ, ախպեր, միայն մի քանի երգ, ուրիշ ոչինչ: Ես ինչ կարող եմ ասել Սայաթ-Նովայի մասին...

Պաղ քրտինք ճակատիս: Զգացի, որ սխալ էր մոտեցումս:

- Բայց... ինչպե՞ս, Արամ Իլյիչ, ձեր մի երկու բառ խոսքն իսկ...

- Ինչ խոսք: Ինչ են ուզում ինձանից: Խնդրում են՝ հոբելյանական կոմիտեի նախագահ լինեմ, էս են ուզում, էն են ուզում, հիմի էլ՝ խոսք: Ես Սայաթ-Նովայի մասնագետ չեմ, ախպեր, ոչինչ չգիտեմ նրա մասին, ոչինչ:

Զգացի, որ իմ գլխին պայթեց, քավության նոխազ եմ դարձել: Հասկանում եմ, զբաղված մարդ է մեծ կոմպոզիտորը: Անհարմար էի զգում նույնիսկ, գրեթե մեղավորի նման, մանավանդ որեւէ զբաղված մարդու չխանգարելու իմ մտավախությամբ: Քիչ էր մնում նահանջեի: Բայց, ինչպես լինում է երբեմն, արգելքի հանդիպելն էլ ուժ տվեց ինձ: Կարծես բնազդով զգացի նրա բնավորության մեջ մի չգիտեմ ինչ էլ, եւ դա ինձ հուշեց չնահանջել: «Ինչպե՞ս թե ոչինչ,- վայրկենապես անցավ մտքովս: - Նա՞ չունի ասելիք Սայաթ-Նովայի մասին: Աշխարհահռչակ հայ մեծ կոմպոզիտոր Արամ Խաչատրյանը: Կկորզեմ նրանից՝ գեթ մի քանի միտք»:

- Լավ, Արամ Իլյիչ,- ասացի,- մի կողմ թողնենք Սայաթ-Նովային: Ես պարզապես մի հայ տղա եմ, շատ եմ սիրում մեծն Արամ Խաչատրյանի երաժշտությունը, իսկ Զուբակի կոնցերտը մանավանդ՝ վաղուց, երբ դեռ Կիրովոսում էի ապրում, առաջին լսելուց իսկ Երուսաղեմի ռադիոյից, երբ պատերազմի այդ օրերին այդ վառվռուն, այդ հանճարեղ Զուբակի կոնցերտն ինձ՝ պատանուս...

- Դուք հայրենադարձ եք:

Ձայնի շեշտը փոխվել էր:

- Այո՛:- Այս անգամ արդեն ամուր դուրս եկավ իմ «այո»-ն:- Հատուկ մնացել եմ Մոսկվայում մի քանի օր էլ, ես տվել գնացքի տոմսը, սպասել եմ, որ Զուբակի կոնցերտն ստեղծողը վերադառնա Վիլնյուսից: Շատ կուզեի տեսնել նրան: Չե՞ք կարող ինձ օգնել...

Ծիծաղեց հանկարծ, շեշտը՝ բարեհոգի:

- Որտե՞ղ եք հիմի:

- Գորկու փողոցում:

- Գիտե՞ք իմ տունը:

- Գիտեմ: Ձեր շենքի մոտից եմ խոսում, K-9 փոստից:

- Դե եկեք, բայց մի տասնհինգ-քսան րոպեով:

- Խնդրեմ, թեկուզ տասը րոպեով, Արամ Իլյիչ, շնորհակալ եմ:

Կոմպոզիտորների շենքում, չեմ հիշում ո՛ր հարկում էր, նրա բնակարանի դուռը ակնբախորեն տարբերվում էր մյուսներից, չգիտեմ՝ կաղնեփա՞յտ թե ինչ, փայլեցրած սրճագույն, վրան իր անունը ոսկեզօծ տառերով, շեղ: Աղախինն ինձ առաջնորդեց ընդարձակ հյուրասենյակը, որի մեջտեղում երկար սեղան՝ կանաչ ծածկոցով, իսկ խորքում , լայն կամարով անջատված, ավելի փոքր մի սենյակ: Այնտեղ էր Խաչատրյանը, հաղթ տեսքով կանգնած մի բարձր գրակալի առաջ, որին ձախ արմունկը հենած՝ ռուսերեն խոսում էր հեռախոսով: Աջ ձեռքով ու խոշոր աչքերով ցույց տվեց այդ սենյակի խորքում ցածր կանաչ բազմոցը, լուռ շարժեցի գլուխս ի շնորհակալություն եւ նստեցի այնտեղ, մի սպիտակ բարձիկ կողքիս, որի վրա նկատեցի ասեղնագործված երկու տակտ «Գայանե» բալետի այն մեղեդուց, որը Երեւանի ռադիոն որպես ազդանշան է օգտագործում իր արտասահմանյան հաղորդումների համար: Ջախիս լուսամուտն էր, որի աջ կողմն այն գրակալը եւ ինքը դրան հենված, մյուս կողմը՝ դատարկամոտ: Արդյոք ինքն էլ, անցավ մտքովս, գրում է այդ գրակալի վրա՝ ոտքի կանգնած, ինչպես Մենդելեեւը կամ Հեմինգուեյը եւ ուրիշներ, հիշում եմ ընթերցումներից: Աջիս, պատին, մեծ գրատախտակ, որի աղակիների տեսքում լուսանկարներ: Առջեւս ցածր սեղանիկի վրա իտալերեն խոշոր հատոր ալբոմ՝ «Սիքստինյան կապելլա»: Ջեռքս ակամա գնաց դեպի ալբոմը, բայց ես քաշեցի:

- Բացե՛ք, բացե՛ք, նայեք,- ասաց հանկարծ Խաչատրյանը,- Հոռոմից եմ բերել: Զբաղվեք, ես դեռ կարող է երկար խոսեմ:

Փառահեղ ալբոմ: Բայց հազիվ էի մի քանի թերթ նայել, վերջացավ նրա խոսակցությունը հեռախոսով, դարձավ ինձ.

- Ե՞րբ եք գնում Երեւան:

- Հենց որ տոմս ճարեմ,- ասացի,- վաղը, մյուս օր...

- Անմիջապես կգնա՞ք Մարտիրոս Սարյանի մոտ եւ կասե՞ք, որ ա՛հա Կենտկոմ էի խոսում իր բնակարանի հարցով:

- Այսինքն, կներեք, ինչ պետք է ասեմ կոնկրետ:

- Մոսկվայում հին բնակարան ունի Սարյանը, ուզում են վերցնել: Ես աշխատում եմ, որ չվերցնեն: Հենց ասեք իրեն՝ ձեր աչքի առաջ խոսում էի Կենտկոմ: Ասեք՝ լավ կլինի... Սայաթ-Նովայի մասի՞ն եք ուզում,- վրա բերեց անակնկալորեն:- Վերցրեք թուղթ ու մատիտ ու գրեք էնտեղ:

Ցույց տվեց գրակալը: Իսկույն վեր կացա ու գնացի կանգնեցի գրակալի առջեւ, ինքս ինձ ժպտալով՝ երեւի ճիշտ եմ կռահել, որ ինքն էլ այդպես կանգնած է գրում: Գրիչս ու ծոցատետրս էի հանում, ինքը «չէ՛, չէ՛» ասաց ու թափով մոտեցավ, մի քանի թերթ թուղթ դրեց գրակալին:

- Էսպես ազատ գրեք, լայն-լայն: Հասկանո՞ւմ եք, ես իհարկե սիրում եմ Սայաթ-Նովային, ո՞նց կարելի է չսիրել: Բայց որ գլուխս տանում են, թե... ու դրա էլ զանգ տվեցիք՝ Սայաթ-Նովա... Էս անտեր հեռախոսն էլ հոգիս հանում է, աշխատել չի լինում: Գնայի մի քանի ամիս նստեի Հայաստանում մի սարի գլխին, մարդ չխանգարեր...

- Ու ձեր աչքի առաջ լինեին Զուբակի կոնցերտի հզոր ձեւերն ու գույները՝ ոսկեծող արեւ, կարմրալույս գագաթներ, գահավեժ անդունդներ, տիտանական ոյար բռնած ռիթմեր, նաեւ գունդ-գունդ ամպեր, մեծ հրվանքի ու լուսավոր թախիծ, մի ամբողջ ոգեղինացած բնություն, մի եռանդուն, գունագեղ, ապրող ու երազող աշխարհ...

Հանկարծ սենյակի մեջտեղում կանգ առած, խոշորակազմ, հաստաշուրթ, խոշոր կլոր աչքերը լուրջ, հոնքերն իրար եկած՝ ուղիղ նայում էր ինձ:

- Դուք էդպե՞ս եք հասկանում Զուբակի կոնցերտը:

- Հասկանալը՝ չգիտեմ, այդպիսի տպավորություն, զուգորդվող պատկերներ ու շատ ավելին՝ կայծկլտող մտքեր, ապրումներ սկզբից մինչեւ վերջ, երկրորդ մասում ավելի խորացած ու արտահայտ, մի խոսքով՝ մեծ երաժշտության ձեւերն ու շունչը: Լրիվ հասկանալու համար, գուցե, չգիտեմ, երաժշտագիտական վերլուծությո՞ւն է պետք անպայման:

- Դուք հո երաժիշտ չե՞ք...

- Մասամբ: Հիմնականում՝ գրող: Երաժշտություն սիրել եմ մանկուց: Երգել եմ եկեղեցում: Կիրովոսի մեր հայկական կոլեջում տարական երաժշտական կրթություն էլ եմ ստացել, նվագել եմ մեր դպրոցական նվագախմբում: Հայաստանում էլ երգել եմ պետական կապելլայում տասնմեկ տարի: Բայց ինքն երաժիշտ չեմ համարում, գրող եմ: Մեկ-մեկ՝ երաժշտության մասին էլ մի քիչ, երբ սիրտս ուզեց: Սիրում եմ հատկապես սիմֆոնիկ երաժշտություն:

- Это-да... ուրեմն էդպես,- գլուխը շարժեց կարծես գոհունակությամբ:

- Եթե թույլ կտաք, մի տպավորություն էլ ասեմ, Արամ Իլյիչ,- քաջալերվեցի նրա գլխի այդ հավանություն տվող շարժումից:- Ինձ համար շատ թանկ հիշատակ, այնքան տարի պահվել է մեջս, հիմա ուրախ եմ, որ ձեզ եմ հայտնում: Ձեր գործերից առաջինը Զուբակի կոնցերտն եմ լսել ռադիոյից, ասացի հեռախոսով, պատերազմի օրերին էր՝ Կիրովոսում: Այդ մի անգամ լսելս էր, բայց այնպես էր մտել սիրտս, որ չէի մոռանում, որոշ դրվագներ հաճախ երգում էի մտքումս: Եվ ահա երկրորդ անգամ լսեցի Հայաստանում եւ դարձյալ ռադիոյից, 1947-ին էր... Գաղտնիք չէ, երեւի գիտեք հայրենադարձներիս ծանր հոգեվիճակն այդ օրերին...

- Այո, հասկանում եմ...

- Մի երեկո, պայծառ լիալուսին էր, անցնում էի Երեւանի կենտրոնական հրապարակով, հանկարծ Զուբակի կոնցերտն սկսեց հնչել բարձրախոսից, գիտեք, այն ժամանակ ամեն կողմ բարձրախոսներ կային: Ուղղակի ցնցված՝ կանգ առա: Դա ոչ թե պարզ անակնկալ էր, այլ հրաբխի նման թվաց, կարծես հենց այդ էր ինձ պետք այդ պահին, թեպետ մտքովս էլ չէր անցնում, որ ինձ որեւէ բան է պետք: Բարձր էլ հնչում էր ամբողջ հրապարակով հենց սկզբից, եւ այդ տարիներին լուսավորված էլ չէր հրապարակը, այդ խիստ պայծառ լիալուսնի տակ գրեթե ամայի, դիմացս՝ Թամանյանի կերտած Կառավարական տունը, այն ժամանակ դեռ միակը այնտեղ: Երբ սկսվեց կոնցերտը, հանկարծ թվաց, թե երաժշտության դինամիկորեն կրկնվող ռիթմերին արձագանքում են դիմացս կամարակապ պատուհանների ռիթմիկորեն կրկնվող շարքերը, կենդանանում են, հնչում, մեծ երաժշտությունն ու մեծ ճարտարապետությունը միաձուլվում են հրաշալիորեն, իրար գտած հարազատների նման: Դա մի աննկարագրելի զգացողություն էր: Այդպես լսեցի ամբողջ կոնցերտը մեն-մենակ այնտեղ կանգնած, հայացքս ճարտարապետական կառույցին, որ ամբողջովին կենդանացել ու երաժշտության հետ միաձույլ հնչում էր իր բոլոր ձեւերի ու ռիթմերի ներդաշնակությամբ: Երաժշտության ու ճարտարապետության այդ միաձույլ հնչողությունը, ասես շոշափելիորեն նյութականացած ու ոգեղեն միաժամանակ, վիթխարիորեն բարձրանում, լցնում էր ամբողջ տարածությունը, եւ մի զարմանալի զգացողություն էլ այն, որ թեպետ լուսնի լույս էր, բայց ոսկեգույն էի ընկալում այդ միաձույլ հնչողությունը, որ լցնում էր իմ հոգին էլ...

Տես էջ 8

Օրագրություն

Ա էջից

Ու մեկեն լռեցի՝ մի փիչ պատանեկանի նման ինչած իմ այդ ոգեւորությունից ամաչելու զգացումով կարծես, մինչ նա լսել էր անշարժ կանգնած, եւ լուռ-լուռ նայող նրա աչքերում էլ զարմացածի նման մի ժպիտ էր երեւացել:

- Ուրեմն էդպես սիրում եք Ջութակի կոնցերտը,- ասաց:- Իմ մյուս գործերից լսե՞լ եք:

Ասացի, որ ինչ լսել եմ ցայժմ՝ սիրել եմ նույնպես, առավել կամ նվազ, իսկ իր կոթողային Երկրորդ սիմֆոնիան իմ ամենասիրելի երկերից է դարձել հենց սիմֆոնիայի ժանրում, որը մյուս բոլոր ժանրերից ավելի եմ սիրում ընդհանրապես երաժշտության մեջ: Բայց չասացի, անշուշտ, որ Ստալինին նվիրված իր վոկալ-սիմֆոնիկ ներբողը, որն ինքս էլ ժամանակին, երգչախմբի մեջ, երգել եմ համերգներում, ոչ միայն չեմ սիրել, այլեւ տհաճ նստվածք է թողել մեջս հասկանալի պատճառով, տհաճ ու օտարոտի է թվացել դրա էմիկորեն ծավալվող գլխավոր մեղեդին անգամ՝ կարծեմ Սոկեյման Ստալսկի աշուղի ճոռոմ խոսքերով: Թեպետ ինքնին վարպետորեն գրված գործ, գիտակցում էի, կամ ինձ այդպես էր թվում, որ դա, այնուամենայնիվ, պարագայական մի տուրք է եղել այդ ահեղ բռնապետին, գուցե նույնիսկ ճակատագրական հանգամանքներից ստիպված: Եվ չգիտեմ ինչու մի բան ինձ մղեց տալու այն տափակ, ծամծմված, ըստ իս անիմաստ հարցը, որ ժուռնալիստները հաճախ տալիս են ստեղծագործողներին: Թե՝ ինքը իր երկերից ո՞րն է ամենից ավելի սիրում:

- Բոլորը եւ ոչ մեկը,- ասաց:- Բայց կոնցերտներից՝ նախ Դաշնամուրի, հետո Թավջութակի, հետո միայն Ջութակի կոնցերտը...

Ինչ մեղմս պահեմ, չհավատացի այդ ասածին: Գուցե նրա բնավորության մեջ այն գի՞ծը կա, որը կոչվում է «հակառակվելու ոգի»: Ոմանց մեջ դա նույնիսկ, որքան էլ պարադոքսալ, արտահայտվում է հենց գովեստի դիմաց, գուցե ծածկելու համար գոհունակությունը կամ ցույց տալու, որ իրենք ավելի լավ գիտեն իրենց արժանիքները:

- Կներեք,- ժպտացի,- սիրում եմ Դաշնամուրի կոնցերտն էլ, գուցե ավելի նուրբ է, ավելի խոր, բայց ես... այնուամենայնիվ Ջութակի կոնցերտը ավելի եմ սիրում:

- Ինչո՞ւ:

- Դե, գիտեք, Արամ Իլիչ, նախ՝ դժվար է այդպիսի բանը բացատրել...

- Դա էլ ճիշտ է, իրավունք ունեք:

- Բայց նաեւ՝ ասացի, չէ՞: Ջութակի կոնցերտը առաջինն է, որ լսել եմ ձեր գործերից, այն էլ պատերազմի ժամանակ... Դա ինչպիսի՞ զգացում էր, եւ ոչ միայն ինձ համար: Հպարտանում էինք նույնիսկ, որ աշխարհում վերջապես հայ մեծ կոմպոզիտոր է ինչում... Բայց անհամեմատ ավելի ուժեղ ու խոր էր ապրումը այն երեկո 1947-ին Երեւանի հրապարակում: Այն ծանր հոգեվիճակում դա եւս ոգեկան զորավիգ եղավ: Այդ բոլորից անկախ, սակայն, Ջութակի կոնցերտն ինքնին, իր ուժով ու ներքին հարստությամբ... լավ, ինչո՞ւ չէ, ուղղակի ասեմ. որքան Բեթհովենի կամ Բրամսի կամ Մենդելսոնի Ջութակի կոնցերտները, նույնքան էլ ձերը լսելու պահանջ եմ զգում մերթ ընդ մերթ:

- Հա՞: Դե լավ, մի երկու ժամ ժամանակ ունեմ, կնստենք, կխոսենք, հետաքրքիր է ձեզ հետ: Լավ է որ էսօր գանգ տվեցիք, վաղը էստեղ չեմ: Բայց նախ վերջացնենք Սայաթ-Նովայի գործը...

Եվ սկսեց աշխույժ երթուղարձ անել սենյակում, հոտոտրական շեշտով ու շարժուձեւերով խոսել, թե ինքը Թիֆլիսում ծնված՝ վաղուց լսել, երգել ու սիրել է Սայաթ-Նովայի երգերը, հետագայում որպես կոմպոզիտոր ավելի գիտակցորեն մոտեցել է դրանց, եւ դա արտացոլվել է իր ստեղծագործության մեջ, ինչպես ջութակի եւ դաշնամուրի համար «Երգ-պոեմ»-ում, հետո ավելի եւս լրջորեն, երբ գրում էր «Պեպո» ֆիլմի երաժշտությունը, հատկապես Պեպոյի երգը ձգտելով ավելի ու ավելի մոտեցնել Սայաթ-Նովայի եղանակներին ոգուն: Շեշտեց մանավանդ այն միտքը՝, թե Սայաթ-Նովայի հանճարեղ երգերը սպանչելի նյութ են մեր ժամանակակից պրոֆեսիոնալ երաժշտության համար, մեր կոմպոզիտորների սրբազան պարտքն է դրանց նոր մարմնավորում տալ այնպիսի հարուստ օրգանիզմում, ինչպիսին սիմֆոնիկ նվագախումբն է, եւ այդպիսով ամբողջ աշխարհի սեփականությունը դարձնել դրանք: Անիմաստ են այն հարցերը, թե երաժի՞շտ է Սայաթ-Նովան, հայկա՞ն են նրա եղանակները եւ այլն: Սայաթ-Նովան բանաստեղծի ու երաժշտի մի ամբողջություն է միս ու ոսկորի պես: Սայաթ-Նովան հայկական է, որովհետեւ մերն է, մեր արտում է: Սայաթ-Նովան մեծ արվեստագետ է, ինքնուրույն, անկրկնելի: Նաեւ ուրախություն հայտնեց, որ Ալեքսանդր Հարությունյանը օպերա է գրում Սայաթ-Նովայի մասին, բարի նախանձով սպասում է այդ օպերային, ասես ինքն է գրում...

- Դե լավ,- կանգ առավ հանկարծ,- դրա մի սիրուն հոդված կդասավորեք էս իմ ասածներով: Էնտեղ անցնենք, խոսենք:

Ես ծալեցի ու գրպանս դրի այն մի թերթ թուղթը, որի վրա «ազաս, լայն-լայն» նոթի էի առել ասածները: Իսկ ինքը դաշնամուրի վրայից վերցրեց մի մեծադիր կանաչակազմ գիրք, աչքի տակով տեսա վերնագիրը, իր Առաջին սիմֆոնիայի հրատարակված partիտուրն էր: Անցանք հյուրասենյակ, ինքը նստեց երկար կանաչ սեղանի գլխին, ես՝ մի փիչ հեռու նրանից: Ակնոց դրեց, partիտուրը բացեց իր առջեւ, ձեռքին՝ կարմիր մատիտ:

- Ես Կեսարի նման եմ,- ասաց,- կարող եմ մի քանի գործով զբաղվել միաժամանակ: Խոսակցությունը ինձ չի խանգարի: Ազաս խոսեք: Ինչպես հասկացա,- շարունակեց խոսքը, ինչ-որ նշումներ անելով partիտուրի մեջ,- գրող եք ու երաժիշտ: Մեկ-մեկ գրում եք երաժշտության մասին էլ: Երաժշտագե՞տ:

Արամ Խաչատրյանը Սերգեյ Պրոկոֆեւի եւ Դմիտրի Շոստակովիչի հետ

- Ոչ, ի սեր Աստծո: Գրում եմ իմ ընկալումներով, իմ ձեւով, կենդանի մոտեցումով, հենց որպես գրող: Բայց, իհարկե, ոչ թե օդի մեջ, այլ երաժշտական իմացությամբ, այլապես ինձ թույլ չէի տա...

- Այո, հասկացա: Երեւում էր ձեր փիչ առաջվա խոսքերից: Իսկ ինչ եք անում «Արվեստ» ամսագրում:

- Երաժշտական բաժինն եմ վարում: Հետեւում եմ մեր երաժշտական կյանքին, զարգացող կարեւոր երեւույթներից խնդիրներ, թեմաներ եմ առանձնացնում, կազմակերպում, հոդվածներ պատվիրում եւ խմբագրում, պատրաստում տպագրության: Երբեմն ինքս գրում եմ ուշագրավ համերգների մասին, նաեւ մեծ կոմպոզիտորների հոբելյանական տարեթվերին փորձ, ամփոփ բնութագրող հոդվածներ՝ Հենդել, Հայդն, վերջերս՝ Վագներ, շուտով Վերդիի մասին էլ: Եվ այլն... Ի դեպ, չմոռանամ հարցնելու, Արամ Իլիչ, դուք տեսա՞ք մեր վերջին՝ 6-րդ համարը, հոդվածների մի փունջ ձեր վաթսունամյակի առթիվ:

- Ոչ, դեռ չեմ տեսել:

- Ափսոս: Ես մեկ ամիս առաջ եմ եկել Մոսկվա, համարը դեռ լույս չէր տեսել: Գուցե ինքս կբերեի, երեւի դա էլ կլիներ առիթը,- ժպտացի,- ձեզ ներկայանալու...

Ինքն էլ ժպտաց, շարունակելով նշումներ անել partիտուրում, հարցրեց.

- Ի՞նչ հոդվածներ:

- Պատկերացրեք, կարողացանք հատուկ մեր ամսագրի համար գրված հոդվածներ ստանալ Շոստակովիչից, ռումինացի դիրիժոր Ջորջեսկուից...

- Նրանի՞ց էլ: Նա իմ Երկրորդ սիմֆոնիան է կատարել շատ տեղերում:

- Դաշնակահար Լեւ Օբորինից էլ, որին ձոնել եք ձեր Դաշնամուրի կոնցերտը, Ջութակի կոնցերտի կատարող Լեոնիդ Կոգանից էլ, որ ժամանակին ձեր ժամացույցն է նորոգել ու այդպես ծանոթացել եք...

- Դա՞ էլ է գրել,- ծիծաղեց, գլուխը շարժելով:

- Նաեւ ձեր աշակերտ Էդգար Հովհաննիսյանից, մի բավական ընդարձակ, հանգամանալից հոդված էլ Գայանե Չեբոտարյանից: Բոլորը, անշուշտ, ռուսերեն, Էդգարինն ու Գայանեինն էլ, ինքս եմ թարգմանել կամ խմբագրել, որով դեռ մանրամասն մտքումս է դրանց բովանդակությունը...

Լռեցի, ինքն էլ մի պահ լուռ մնաց իր նշումներն անելով, հետո հանկարծ ակնոցը հանեց, մատիտն ինձ ուղղելով ասաց.

- Ես կուզենայի, որ դո՛ւք գրեք իմ համերգների մասին ռեցենզիաները, երբ գամ Հայաստան...

Այնպիսի անակնկալ էր, մատիտն էլ ինձ ուղղված, որ շվարեցի.

- Ե՞ս...

- Այո, դուք: Երաժշտագետների գրածները չեմ սիրում: Չոր ու ինձ ոչինչ չասող անալիզներ են անում, հաճախ տեխնիկական անատոմիա, ես թեման ոնց գնաց, էն կոնտրապունկտը ոնց եկավ, էդ բոլորը ինքս գիտեմ, երբեմն էլ ավելի խորը չեն տեսնում, սխալ բաներ են ասում, իբր թե ինձանից: Դա ինձ պետք չի: Երաժշտություն սիրող ու հասկացող գրողը իր տպավորությունն է տալիս ասոցիացիաներով, պատկերավոր, իր զգացածը, իր մտքերը, երաժշտության հոգին ու իմաստն է վերլուծում իր ձեւով, ինչպես պատկերացնում է: Լսողի պատկերացում, որ գրողը կարող է խելոք, հետաքրքիր արտահայտել: Դա է ինձ պետք: Լենինգրադում, օրինակ, ես ուզեցի, որ Վերա Կեսլինսկայան գրի, եւ լավ գրեց: Ինձ համար, որ ճիշտն ասեմ, ամենալավը մինչեւ հիմա:

- Ոչ, ի սեր Աստծո: Գրում եմ իմ ընկալումներով, իմ ձեւով, կենդանի մոտեցումով, հենց որպես գրող: Բայց, իհարկե, ոչ թե օդի մեջ, այլ երաժշտական իմացությամբ, այլապես ինձ թույլ չէի տա...

- Այո, հասկացա: Երեւում էր ձեր փիչ առաջվա խոսքերից: Իսկ ինչ եք անում «Արվեստ» ամսագրում:

- Երաժշտական բաժինն եմ վարում: Հետեւում եմ մեր երաժշտական կյանքին, զարգացող կարեւոր երեւույթներից խնդիրներ, թեմաներ եմ առանձնացնում, կազմակերպում, հոդվածներ պատվիրում եւ խմբագրում, պատրաստում տպագրության: Երբեմն ինքս գրում եմ ուշագրավ համերգների մասին, նաեւ մեծ կոմպոզիտորների հոբելյանական տարեթվերին փորձ, ամփոփ բնութագրող հոդվածներ՝ Հենդել, Հայդն, վերջերս՝ Վագներ, շուտով Վերդիի մասին էլ: Եվ այլն... Ի դեպ, չմոռանամ հարցնելու, Արամ Իլիչ, դուք տեսա՞ք մեր վերջին՝ 6-րդ համարը, հոդվածների մի փունջ ձեր վաթսունամյակի առթիվ:

- Ոչ, դեռ չեմ տեսել:

- Ափսոս: Ես մեկ ամիս առաջ եմ եկել Մոսկվա, համարը դեռ լույս չէր տեսել: Գուցե ինքս կբերեի, երեւի դա էլ կլիներ առիթը,- ժպտացի,- ձեզ ներկայանալու...

Ինքն էլ ժպտաց, շարունակելով նշումներ անել partիտուրում, հարցրեց.

- Ի՞նչ հոդվածներ:

- Պատկերացրեք, կարողացանք հատուկ մեր ամսագրի համար գրված հոդվածներ ստանալ Շոստակովիչից, ռումինացի դիրիժոր Ջորջեսկուից...

- Նրանի՞ց էլ: Նա իմ Երկրորդ սիմֆոնիան է կատարել շատ տեղերում:

- Դաշնակահար Լեւ Օբորինից էլ, որին ձոնել եք ձեր Դաշնամուրի կոնցերտը, Ջութակի կոնցերտի կատարող Լեոնիդ Կոգանից էլ, որ ժամանակին ձեր ժամացույցն է նորոգել ու այդպես ծանոթացել եք...

- Դա՞ էլ է գրել,- ծիծաղեց, գլուխը շարժելով:

- Նաեւ ձեր աշակերտ Էդգար Հովհաննիսյանից, մի բավական ընդարձակ, հանգամանալից հոդված էլ Գայանե Չեբոտարյանից: Բոլորը, անշուշտ, ռուսերեն, Էդգարինն ու Գայանեինն էլ, ինքս եմ թարգմանել կամ խմբագրել, որով դեռ մանրամասն մտքումս է դրանց բովանդակությունը...

Լռեցի, ինքն էլ մի պահ լուռ մնաց իր նշումներն անելով, հետո հանկարծ ակնոցը հանեց, մատիտն ինձ ուղղելով ասաց.

- Ես կուզենայի, որ դո՛ւք գրեք իմ համերգների մասին ռեցենզիաները, երբ գամ Հայաստան...

Այնպիսի անակնկալ էր, մատիտն էլ ինձ ուղղված, որ շվարեցի.

- Ե՞ս...

- Այո, դուք: Երաժշտագետների գրածները չեմ սիրում: Չոր ու ինձ ոչինչ չասող անալիզներ են անում, հաճախ տեխնիկական անատոմիա, ես թեման ոնց գնաց, էն կոնտրապունկտը ոնց եկավ, էդ բոլորը ինքս գիտեմ, երբեմն էլ ավելի խորը չեն տեսնում, սխալ բաներ են ասում, իբր թե ինձանից: Դա ինձ պետք չի: Երաժշտություն սիրող ու հասկացող գրողը իր տպավորությունն է տալիս ասոցիացիաներով, պատկերավոր, իր զգացածը, իր մտքերը, երաժշտության հոգին ու իմաստն է վերլուծում իր ձեւով, ինչպես պատկերացնում է: Լսողի պատկերացում, որ գրողը կարող է խելոք, հետաքրքիր արտահայտել: Դա է ինձ պետք: Լենինգրադում, օրինակ, ես ուզեցի, որ Վերա Կեսլինսկայան գրի, եւ լավ գրեց: Ինձ համար, որ ճիշտն ասեմ, ամենալավը մինչեւ հիմա:

Շատ կողմերից մենք արդեն անցել ենք Կոմիտասից, մեր նոր երաժշտությունը շատ բանով հիմա շատ ավելի հարուստ է: Ասենք, ես եմ մի երկրորդ էտապ բացել մեր երաժշտության մեջ, բայց ես էլ потолок չեմ: Հետո ուրիշ կոմպոզիտորներ կգան ժամանակների հետ, ավելի կհարստացնեն: Կոմիտասը անգերազանցելի է մնում միայն մի բանում. հայկական ոճի զուտ մաքրության մեջ, եւ այդ ոճով էլ նրա խմբերգերի պոլիֆոնիան՝ հրաշալի...

Հոտոտրականի նման ինչած այդ խոսքն ասեց մի փիչ թթված դեմքով, բայց ավարտեց ակնհայտորեն անկեղծ ոգեւորությամբ, ցուցամատը վեր բարձրացնելով: Իսկույն մղվեցի հաջորդ հարցս տալ, մի խնդիր, որ վաղուց հուզել է միտքս, եւ որի մասին հաճախ եմք խոսել մանկուց իմ մտերիմ բարեկամ Նիկողոսի հետ: Արդեն հայտնի երաժշտագետ, հին հայ դասական պրոֆեսիոնալ երաժշտությունը խոր հետազոտող Թահմիզյան Նիկողոսը, եւ մանավանդ որ այժմ, ինձ ուժ տվող նեցուկի նման, կար նաեւ նույն այդ խնդրի մասին նրա «Հարստություն, որ պիտի ժառանգել» ծավալուն, հույժ հանգամանալից, պատմական հայացքով ամոր տրամաբանված հոդվածը՝ մեր բազմադարյան հոգեւոր դասական երաժշտությունը ժառանգելու մասին: Դժվարությամբ, խմբագրությունում մտավախ առարկությունները հաղթահարելով, կարողացել էի, այնուամենայնիվ, համոզել ու իմ «պատասխանատվությամբ» որպես երաժշտական բաժնի վարիչ, մեր ամսագրի անցյալ տարվա 12-րդ համարում տպել տալ հոդվածը, որի համար փիչ չէին ուրախություն հայտնողները: Ի դեպ, խոստովանեմ այստեղ, ինձ էապես օգնեց մի արտառոց հանգամանք. երաժշտագետ եւ Կույսոտայի մինիստրի տեղակալ Սամսոն Գասպարյանը, լինելով նաեւ մեր ամսագրի խմբագրական կոլեգիայի անդամ, ակնհայտ բանագողություն էր արել Սեսորդ Մաշտոցի մասին Նիկողոսի դեռ չտպված մեծ հոդվածից, իր այդ արարքի ամբիոն դարձնելով Կենտկոմի օրգան «Սովետական Հայաստան» պաշտոնաթերթը, եւ քանի որ չէր կարելի առարկել այդ պաշտոնաթերթին, բարոյական իրավունք էր տվել ինձ ու Նիկողոսին ի վերուստ, լռելյայն՝ մինիստրի տեղակալի այդ արարքին մի այլ, յուրակերպ անդրադարձ տալու, որն էլ հենց Նիկողոսի այս նոր հոդվածը եղավ: Թեպետ՝ պետք է ասել նաեւ, որ փոխված ժամանակն էլ նպաստեց մեր ամսագրում նման հոդված լույս ընծայելու...

Նիկողոսը իր հոդվածում, ուրեմն, հարուցած խնդրի առնչությամբ, անդրադառնում էր նաեւ Արամ Խաչատրյանին: Շեշտելով, որ «բարձրաստիճան գագաթ» է նրա ստեղծագործությունը եւ թե նա, որպես «տիրապետ իշխող տիտանային դեմք», իր խաչատրյանական «շատ կողմերով բարեւար» ազդեցությունն է գործել երաժիշտների զարգացող սերնդի վրա, միաժամանակ «ցավալի» էր համարում, որ նա հեռու էր անցյալի մեր այն բազմադարյան պրոֆեսիոնալ երաժշտական ժառանգվելիք հարստության նկատմամբ «ստեղծագործական որեւէ վերաբերմունք ցույց տալուց», փակագծերի մեջ նշելով միայն մի բացառություն՝ Սովետական Հայաստանի հիմնը: Հոդվածի մեջ այդպիսի ճշմարտություն ասելը մի բան է, իսկ երբ պատկառանքով նստել ես սիրելի մեծ կոմպոզիտորի դիմաց, անձամբ ասելը՝ ուրիշ բան, որքան էլ ցանկությունը ներսից մղի քեզ հարցը տալու, լսելու նրա կենդանի պատասխանը՝ քեզ էլ հուզող խնդրի վերաբերյալ: Ու ես վարանեցի: Ասացի ուրիշ բան:

- Գայանե Չեբոտարյանի հոդվածը մեր վերջին համարում,- ասացի,- ձեր պոլիֆոնիկ մտածողության մասին է, Արամ Իլիչ:

- Ես շատ եմ հավանում Գայանեին,- ասաց,- խելոք, մտածող կին է, շատ տարբեր ուրիշ երաժշտագետներից, ինքն էլ կոմպոզիտոր:

- Այո, երբ կատելյայում էի, ես երգել եմ նրա վոկալ-սիմֆոնիկ «Հայաստան» պոեմ-կանտատում, գեղեցիկ երաժշտություն է...

- Ի՞նչ է ասում հոդվածում:

- Թե Կոմիտասն իր հանճարեղ խմբերգերով պոլիֆոնիայի հիմքերը դրեց հայ երաժշտության մեջ, նրան ըստ արժանվույն հաջորդեց Սպենդիարյանը, հետո Արամ Խաչատրյանը բոլորովին նոր որակի բարձրացրեց մեզանում պոլիֆոնիան՝ համաշխարհային ճանաչում գտած իր մեծակտավ երկերում, եւ ընդհանրապես, իր ամբողջ ստեղծագործությամբ, հայ երաժշտության զարգացման մեջ նա արեց այնպիսի խոշոր քայլ, որ անգնահատելի է: Գայանեն ցույց է տալիս ձեր պոլիֆոնիկ բազում հնարանքները՝ հատկապես երաժշտական հակադիր կերպարների միջոցով դրամատուրգիական սուր իրավիճակներ, հոգեբանական բախումներ պատկերելիս: Երբ ռուսերենից թարգմանում էի հոդվածը,

Տես էջ 9

ԱԶԳ-ՆԵՐԴԻՐ

Օրագրություն

Բ էջից

հատուկ ուշադրությունս գրավեց այն, թե դուք հմտորեն կիրառել եք հայ ժողովրդական գործիքային երաժշտության մեջ բազմաձայնության միակ ձևը՝ «դամ» քաշելը: Բայց դա ընդհանրապես հատուկ չէ՞ մեր մոնոդիկ երաժշտությանը՝ վերևում երգվող մեղեդու դիմաց համեցող տոնիկական ձայնը տակից, որ փոխվում է ըստ հարկին: Հիշում եմ, եկեղեցում էլ դա «դեմ» էր կոչվում, ինքս էլ հաճախ դպրաց դասում այդպես «դեմ» եմ պահել աշակերտական մեր փոքր դպրախմբի հետ՝ «ո՜ւ» կամ բերանփակ «ը՜մ» ձայնելով, երբ շարական էր մեներգվում, եւ մեր դպրապետին հետեւելով ըստ տեղի մի քիչ ուժգնացնում կամ մեղմացնում էինք, ըստ հարկի էլ փոխում ձայնը...

Մաքիսը թողած լսում էր, ժպտաց.

- Հա՛, դուք էդպես... հետաքրքիր է... Դուք ամբողջ պատարագը երգե՞լ եք եկեղեցում էդ ձեր... աշակերտական...

- Դպրախմբում: Այո, մանկուց: Հետո պատանեկությանս էլ: Եկմալյանի պատարագը: Եվ ոչ միայն պատարագին, որոշ ժամերգություններին էլ երգել եմ: Շատ էի սիրում հատկապես Արեւագալի երգերը, մինչեւ հիմա էլ ինձ շատ են հուզում դրանք, մի հատուկ, ասես արշալուսային հուզմունք, ասես դարերի խորից: Եվ գիտե՞ք, Առամ Իլիչ, ուզում եմ ասել...

Բայց կրկին վառանեցի: Դժվար է երես առ երես ասելը, ինչպե՞ս կընդունի՝ չգիտեմ: Ու շարունակեցի.

- Ինձ հատկապես հետաքրքրեց այն, որ Գայանեն իր հոդվածում այդ «դամ»-ի կամ ավելի ճիշտ ասած «դեմ»-ի անընդհատ կիրառման մեջ է տեսնում գաղտնիքը, թե ինչու ձեր երկերում բասը անշարժ է կամ միչ է շարժվում՝ տոնիկայի համեցող կետերով, օստինատային ձեւերով եւ այլն: Բայց թե՝ չի խանգարում դա ձեզ, մյուս ձայներն այնպես եք աշխուժացնում այլազան հնարանքներով՝ ռիթմերի, հարմոնիաների, ինտոնացիաների, տեմբրերի այնպիսի հարստությամբ, երկը հագեցնում այնպիսի դինամիզմով, զգացումների, մտքերի, գույների այնպիսի բոտն հոսանքով, որ գերում տանում է ունկնդրին սկզբից մինչեւ վերջ... Բայց, կներեք, Առամ Իլիչ, ինձ համար շատ ավելի հետաքրքրական է հիմա, կուզենայի հարցնել՝ ինչպե՞ս կգնահատեիք Գայանեի այդ տեսակետը...

- Դե հասկանում եմ,- ասաց մի թեթեւ խոժոռված,- երեւի Գայանեն ուզեցել է պատասխանել ոմանց՝ իբր էդպիսի «գաղտնիք» գտնելով...

Հանկարծ ակնոցը հանեց, դրեց մի կողմ եւ ասես հանդիմանող մի շեշտով, ցուցամատն էլ շարժելով ասաց.

- Ամենակարեւորը բասի շարժվելն է ստեղծագործության մեջ: Իսկական կոմպոզիտորը պետք է կարողանա բասը միշտ շարժման մեջ դնել, դա է, որ ստեղծագործությանը ուժ է տալիս, կյանք է տալիս...

Ու այդպես շարունակեց խոսել մի տեսակ հանդիմանական-ուսուցողական շեշտով, մտնելով տեխնիկական մանրամասնությունների մեջ, ասես իր ուսանող մի կոմպոզիտորը լիներ դիմացը նստած: Իսկ ես լսում էի ուշադիր, բայց մի տարօրինակ զգացումով. հիշում էի՝ չէ՞ որ Խաչատրյանին ննջադատել են հենց այն բանի համար, որ նրա բասը միչ է շարժվում իր համեցող տոնիկական կետերով, իր օստինատային ռիթմիկ կամ մելոդիկ դարձվածքների համառորեն հարահոլով կրկնությամբ, ննջադատել են աղմկալի հնարանքների համար եւ այլն: Գուցե իրո՞ք Գայանե Չեբոտարյանը «պատասխանում» է... բայց ինչ-հենց նրա բասի «անշարժության» (հենց այդ բառը կա հոդվածում) գաղտնիքը բացատրելով: Իսկ ինքը՝ Խաչատրյանն ինչ է ասում հիմա: Ուրեմն «իսկական կոմպոզիտոր» չէ՞ Առամ Խաչատրյանն իր այս ասածով: Ինչ է ստացվում: Այստեղ մի բան կա, որ չեմ հասկանում: Բայց ինձ ինչ այդ բոլորը՝ որպես ունկնդրի: Բասը շարժվում է, չի շարժվում, ինչո՞ւ, ինչպե՞ս, ինձ ինչ: Ես լսում եմ Չուքակի կոնցերտը կամ Երկրորդ սիմֆոնիան որպես ամենաիսկական մեծ կոմպոզիտորի երկ, որ այնպես է գրավում, այնպես է հուզում...

- Գիտե՞ք, Առամ Իլիչ,- ասացի,- մի բեթհովենագետի գրքում, հիշում եմ, գտնում կարդալով, թե Բեթհովենի Չուքակի կոնցերտը ավելի թույլ է կառուցված, քան նրա մյուս մեծ գործերը: Եվ մտքովս անցավ՝ ինձ ինչ: Այդ կոնցերտն էլ, ինչպես նրա մյուս գործերը, այնպես է հուզում ինձ, գուցե նույնիսկ ավելի, երբեմն արցունք բերելու չափ, անհունին բարձրացնող ապրումներով: Ինձ ինչ վերջին հաշվով, թե ինչպես է կառուցված...

Աչքերը նայում էին կլոր-կլոր, հոնքերի միջեւ դեռ կնճռոտ:

- Դա էլ ոնց որ ճիշտ եք ասում,- ժպտաց հանկարծ:

- Երաժշտագիտություն, գրականագիտություն, կերպարվեստագիտություն... չգիտեմ ինչ «գիտականացված» հասկացություններ, որոնցով դաստում ենք: Ամեն մի հասկացություն հենց «գիտականորեն» էլ, ասենք, սահմանագծում է այս կամ այն բաները: Իսկ ճշմարիտ արվեստի գործը մարդկային հոգու ընդերքներից, գիտակցությունից ու ենթագիտակցությունից, մարդ էակի գոյության, կյանքի խնդիրներից, զգացումներից ու ապրումներից, խոհերից բխած այնպիսի արտահայտություն է, որ բացվում է դեպի անհունը, եւ հեղինակը գուցե չի էլ անդրադառնում, թե ինչ հոգեկան տարածություններ է ընդգրկում, երբ ստեղծագործում է: Դրա համար էլ արվեստի մեծ գործը չի սպառվում, ինչքան էլ ջանան այս կամ այն հասկացություններով վերլուծել, բացատրել, սկսած Հոմերոսից, Գիլգամեշից, Աստվածաշնչից, հույն ողբերգակներից, հին հունական, հին եգիպտական, հին հնդկական, հին չինական արվեստից ու բանաստեղծությունից մինչեւ մեր Նարեկացին, մեր ճարտարապետությունը, մանրանկարչությունը, մինչեւ նոր դարերում գրական, երաժշտական, կերպարվեստի գլուխգործոցները աշխարհում, եւ մինչեւ այսօր... Մի խոսքով, էլ չգիտեմ ինչպես ասեմ... Հա՛, մի բան հիշեցի, Առամ Իլիչ, գուցե զարմանաք, եթե ասեմ... Դեռ քսան տարի առաջ, Կիպրոսում, լսել եմ, որ իբր ասել եք՝ ընդամենը չորս սիմֆոնիա եք գրելու, ինչպես Բրամսը: Ճի՞շտ է:

Ժպտաց, գլուխը շարժեց:

- Իսկապես որ զարմանալի է,- ասաց: - Պատահաբար մի տեղ մի խոսք ես թողնում, որտե՞ղ է հասնում: Այո, մի անգամ ասել եմ էդպիսի մի բան:

- Իսկ ե՞րբ եք մեզ պարգեւելու Երրորդ սիմֆոնիան:

- Երրորդը վաղուց եմ գրել, հենց էն... 1947-ին, որ ասում էիք: Էն ժամանակ ֆորմալիստական համարեցին ու մնաց:

- Հիշում եմ այդ օրերը,- ասացի,- հիմա հեռո՞ւ են թվում... Ֆորմալիզմ, կոսմոպոլիտիզմ, ստորաբերություն Արեւմուտի առաջ... հարվածներ աջ ու ձախ բոլորին... կարծես մեղավոր էին դարձել հանկարծ, արվեստագետ, գիտնական՝ մեծ թե փոքր, բոլորն էլ: Շատ էի զարմացել, որ ինչպես...

- Չորրորդն եմ տալու շուտով,- ասաց:

- Շուտո՞վ...

- Դե, պտտվում է էստեղ,- ցուցամատը կլոր-կլոր շարժեց քունքի մոտ:

- Ուրախությամբ եմ սպասելու, Առամ Իլիչ: Ես շատ եմ սիրում հենց սիմֆոնիայի ժանրը, կարծեմ ասացի արդեն, կներեք: Պատիվ է ինձ համար, որ հիմա լսեցի անձամբ ձեզնից գալիք Չորրորդի մասին...

Փակում է արդեն Առաջին սիմֆոնիայի պարտիտուրը, երեւի կվերկենա հիմա, կվերջանա այս հանդիպումը՝ մոտ երկու ժամ արդեն. եկել էի «տասնհինգ-քսան» րոպեով... Հենց այս սենյակում էլ միտքս եկավ ասելու իրեն այն բանը, բայց վառանեցի: Բայց ինչո՞ւ վառանեցի, ինչ կա որ...

- Կներեք, Առամ Իլիչ, մի բան էլ ուզում եմ ասել, թեպետ... չգիտեմ ինչպես կընդունեք...

- Քանի՞ տարեկան եք դուք,- հարցրեց մեկեն, կարծես չէր լսել ասածս, ու կրկին անակնկալի եկա:

- Երեսունչորս լրացնում եմ:

- Էհ, սանչելի տարիք, դեռ քսանից էլ ավել մինչեւ վաթսուն...

- Ուզում էի ասել, Առամ Իլիչ...

- Ասեք, ասեք:

- Մինչեւ հիմա ձեր ինտոնացիոն ոլորտում ներառել, ձեր ստեղծագործության մեջ սանչելիորեն վերաձուլել եք ավելի նոր ժամանակների մեր քաղաքային-ժողովրդական, աշուղական, ընդհանրապես կովկասյան էլ երաժշտական տարրեր: Իսկ մեր ավելի քան հազարամյա դասական երաժշտության հարստությունը, մի ամբողջ անսպառ գանձարան...

- Հասկացա,- գլուխը կտրուկ շարժեց:- Արել եմ: Հայաստանի հիմնում...

- Գիտեմ,- ասացի: - Նկատի եք ունեցել պատարագի «Քրիստոս ի մէջ»-ը: Միայն դա: Մի դեպք միայն, որքան գիտեմ, եւ անկեղծ ասած՝ մի թաքուն զարմանք զգացի նույնիսկ, երբ նկատեցի առաջին անգամ: Բայց արդյո՞ք դա լոկ արտաքին...

- Թաքուն զարմանք: Իսկ ինչո՞ւ այդ թաքուն զարմանքը, չմատնեցի՞ք:

- Այո, ես էլ ձեզ եմ հասկանում հիմա: Բայց ժամանակը արդեն...

- Դե լավ, երգե՞ք, երգեք դա տեսնեմ:

Սկսեցի երգել «Քրիստոս ի մէջ»-ը: Պարզ,

Արամ Խաչատրյանը Հերբերտ ֆոն Կարայանի հետ

ուղիղ նայելով, ձեռքով էլ չափ տալու շարժումով, հետեւեց, հանկարծ ցուցամատը վեր շարժելով ասաց.

- Երբ վերեւ է բարձրանում, վերեւ...

Ես գլխով արեցի, եւ շարունակելով երգել՝ հասա «Արդ պատսօնեայք»-ին: Գլխով հավանության նշան տվեց, եւ ցուցամատն էլ ուղղվեց այս կողմ, կարծես ուզելով ասել. «Ահա, ահա»: Ընդհատեցի երգը եւ ասացի.

- Գուցե ուրիշ էլ երգեմ, ուզո՞ւմ եք:

- Ուզում եմ, ուզում եմ, երգեք:

Արեւագալից երգեցի «Լույս»-ը եւ «Յարեւելից մինչ ի մուտս»-ը: Լսում էր ուշադիր, ձեռքերն էլ ակամա շարժվում էին, դեմքը կարծես լուսավորվում էր, գլուխն էլ մերթ շարժվում այնպես, ինչպես երբ ասում են՝ «Այո՜, այո՜, բայց ափսոս»: Հետո երբ սկսեցի երգել «Գովեա Երուսաղէմ» հարության ցնծագին-հաղթական երգը, հենց սկզբից դեմքը լավեց հանկարծ, երկու ձեռքերը բարձրացրեց՝ ասես իր առջեւ սիմֆոնիկ նվագախմբի լիներ ու չափ էր տալիս, ու ես էլ ոգեւորված՝ երբ ավարտական «ալելուիա»-ի վերջին ձայնը շեշտված երկարացրի, մտքովս էլ կարծես մի փառավոր մաժոր ակորդի հնչողությամբ, նա բաց մատներով ափերը շարժեց ու ասաց.

- Հոյակապ թեմա սիմֆոնիայի ֆինալի համար...

Ու լռեց, շրթունքները սեղմած: Ես էլ լռեցի մի պահ:

- Էդգարը молодец,- ասաց հետո,- իր Սիմֆոնիայում արդեն...

- Այո, օգտագործել է միջնադարյան «Դավիկ» տաղը: Քիչ առաջ դուք շեշտեցիք, թե Սայաթ-Նովայի հանճարեղ երգերը սանչելի նյութ են սիմֆոնիկ նվագախմբի հարուստ օրգանիզմում մարմնավորելու եւ այդպիսով աշխարհին ներկայացնելու, եւ թե դա մեր կոմպոզիտորների սրբազան պարտքն է: Իսկ ես պատկերացնում եմ՝ մեր հանճարեղ դասական երաժշտությունը ինչպե՞ս պիտի վերաձուլվեր խաչատրյանական ուժով, մարմնավորվեր ասենք սիմֆոնիայում եւ ինչեր աշխարհով ծեկ, իսկ աշխարհն սպասում է Առամ Խաչատրյանի ամեն մի նոր երկին...

Նա լսեց գլուխը կախ, հետո ասաց չգիտեմ ինչու ռուսերեն.

- А для меня поздно...[1]

Հետո կրկին անդրադարձավ էդգարին, ասաց, որ շատ է հավանում նրան:

Եվ հանկարծ բարկության շեշտով հիշեց Չիվանի Տեր-Թադեւոսյանին ու դարձյալ ռուսերենի անցնելով ասաց.

- Он очень талантливый, но негодник, босяк. Так и скажите ему от моего имени. Я много раз сам говорил ему об этом. Он шляется здесь, в Москве, зачем?. Босяк он. Босяк![2]

Թեպետ կոպիտ, բայց ճիշտ էր ասում: Ես էլ ցավում եմ Ջոնիկի (կյանքում այդպես ենք կոչում Չիվանին) այդ վարքի համար, որ անհասկանալի է, կարող է ինքնակործանման հասցնել նրան որպես կոմպոզիտորի, իսկապես շատ տաղանդավոր: Հիշեցի, որ Օհան Դուրյանը, իր առաջին իսկ օրերին Հայաստանում, աչքիս առաջ հատկապես ոգեւորվեց Չիվանի Առաջին սիմֆոնիայի պարտիտուրով ու կատարեց էլ նույն ոգեւորությամբ: Իսկ անցյալ տարի, երբ օտարերկրյա երաժիշտ հյուրերի հետ Չիվանի Երկրորդ սիմֆոնիայի ձայնագրությունն էինք լսում մեր Կոմպոզիտորների տան վերի կլոր դահլիճում, կողքիս նստած նորվեգացի կոմպոզիտոր Կլառա Էգգեն բթամատը ցցեց ոգեւորված ու ասաց ականջիս. «Սա Խաչատրյանին էլ կանցնի»:

Չիվանի մասին այդ պոռթկումից հետո վեր կացավ Խաչատրյանը, վերցրեց իր Առաջին սիմֆոնիայի պարտիտուրն ու աշխատասենյակն անցավ: Կանչեց ինձ այնտեղից եւ, գրադարանին ու պատին լուսանկարները ցույց տալով, ասաց.

- Տեսե՛ք, սա գիտե՞ք ով է: Հռոմի պապը, ես կողքին: Իսկ էս մեկը՝ ես ու Կարդինալ Աղաջանյանը: Դե էս էլ մեր կաթողիկոսն է, գիտեք: Սրանք էլ իմ սիրած կոմպոզիտորները՝ Մյասկովսկի, Պրոկոֆեւ, Շոստակովիչ: Իսկ էնտեղ՝ ես եւ Մկոն: Մեր Մկոն իմ վաթսունամյակին շնորհավորեց:

«Մկոն» Անաստաս Միկոյանն էր:

Հետո յոթ տուփ Краснопресненская ֆիլտրով սիգարետ վերցրեց դարակից ու տվեց ինձ, մերժմանս դիմաց պնդելով, որ ընդունեմ: Զրույցի ընթացքում նկատել էր, որ Лайнер սիգարետն եմ ծխում, ավելի լավը չէի գտել այդ օրը, եւ ինձ հյուրասիրել էր այդ նոր, ֆիլտրով սիգարետներով: Հետո իր լուսանկարը մակագրեց ու նվիրեց: Երբ իջանք բակ ու մեքենան էր նստում, ասաց.

- Սայաթ-Նովայի մասին հոդվածում էդպես շատ բան չավելացնեք ձեր կողմից,- ու մի տեսակ խիստ ժպտաց:

Ես էլ ժպտացի ու հարցրի.

- Հենց հիմա մի տեղ կնստեմ ու կգրեմ, երեկոյան կարո՞ղ եմ ձեզ կարդալ, թեկուզ հեռախոսով:

- Ես երեկո գնալու եմ իմ դաչան,- ասաց,- մի քանի օր քաղաք չեմ գա: Էնտեղ եմ գրում ես, քաղաքում աշխատել չի լինում, էն անտեր հեռախոսը, էստեղից-էնտեղից, հազար ու մի հասարակական գործ...

Ես հաջողություն մաղթեցի նրան, մտքումս Չորրորդ սիմֆոնիան պատկերացնելով ու զգալով վրդովմունքի նման բան, թե իր ստեղծագործական ժամանակը, գիտեմ, հայտնի բան է դա, շատ է վատնում այդ «հազար ու մի հասարակական գործերի» վրա, բայց մի՞թե իրոք չկամորեն, ինչպես ահա ինձ ասում է գուցե պահի տրամադրությամբ: Ու մի՞թե անհրաժեշտ է այդքան տարվել բոլոր այդ գործերով, ինչպես նաեւ հեղինակային համերգների չափազանցյալ շրջագայություններով Սովետական Միությունում եւ ամբողջ աշխարհում, երբ դիրիժորությունն էլ, մանավանդ, մեղմ ասած, իր ուժեղ կողմը չէ...

Մեր այդ անհավասարի թվացող երկժամյա զույգի դեռ թարմ, ինձ համար դեռ ոգեշունչ տրամադրությամբ, բարձրացա Գորկու փողոցով, նստեցի Պուշկինի արձանի մոտ բուվարում, եւ մի ժամում գրվեց հոդվածը, հետո շատ գնացի ավելի դժվար գործին՝ գնացի տոմս ճարելու: Եվ սակայն, խորքումս, դեռ շարունակվում էր այդ «վրդովմունքի նման» զգացումը: Ափսոս չէ՞, որ վաթսունամյա սիրելի մեծ կոմպոզիտորը դեռ այնքան ժամանակ ու եռանդ է վատնում կողմնակի բաների վրա՝ իր ստեղծագործ հանճարի հաշվին...

---

1. *Իսկ ինձ համար ուշ է...*
2. *Նա շատ տաղանդավոր է, բայց անպիտան, դասարկաստոր: Այդպես էլ ասեք նրան իմ անունից: Ես ինքս նրան շատ անգամ ասել եմ դրա մասին: Թռել է գալիս այստեղ՝ Մոսկվայում. ինչո՞ւ: Դասարկաստոր է նա: Դասարկաստոր:* ■

Բացահայտ...

Վկաղ. Ս.Սարինյանի՝ վերջերս հրատարակ հանված «Ի հեծուկս» հուշագրությունը մամուլում բուռն քննարկումների նյութ է դարձել: Շաս շաստերին է զայրացրել ու ապշեցրել, թե ինչպես է հեղինակը փորձում ցեխ շպրտել իր ժամանակի սիրված ու նշանավոր մարդկանց վրա՝ երբեմն իր անունից, իսկ ավելի հաճախ վկայակոչելով ուրիշներին, բայց բոլոր դեպքերում առաջնորդվելով միայն մի մղումով՝ ընդգծել իր եզակիությունն ու բացառիկությունը: Նրա թիրախն են դարձել հասկապես այն մարդիկ, ովքեր արդեն հեռացել են կյանքից եւ հնարավորություն չունեն իրենց պաշտպանը տալու սուր մեղադրանքներին: Ինձ՝ իբրեւ գրականության ինստիտուտի վերջին երեք տասնամյակների անցուդարձին բավական քաջածանոթ մարդու, բոլորովին չզարմացրեց այն հանգամանքը, որ Սարինյանն ամեն կերպ փորձել է սեւացնել հորը՝ էդ. Չրբաշյանի լուսավոր կերպարը. չէ՞ որ վերջինիս գործի եւ լայն ճանաչման հանդեպ նախանձը մշտապես հանգիստ չի տվել Սարինյանին: Այդ նախանձն ու չարությունը հաճախ նողկալի ձեւեր են ընդունել: Բավական է միայն հիշել, որ Չրբաշյանի մահվանից ընդամենը մեկ ամիս անց՝ նրա ծննդյան օրը, երբ գրականության ինստիտուտում հիշատակի օր էր նշվում, Սարինյանը հենց այդ նույն օրը նույն ժամին նիստ էր հավաքել իր բաժնի անդամներին եւ թույլ չէր տվել, որ նրանք մասնակցեն այդ միջոցառմանը: Նրանց մի մասը, այնուամենայնիվ, եկան, բայց միայն վերջին ռռոպեներին եւ իրենց նախկին տնօրենի հիշատակի հանդեպ մեղքի անբախույց զգացումով:

Զարմանալին, իսկապես, սա չէ. մարդն այդպիսին է, ինչ կարող ես անել: Որ մարդն իրոք այդպիսին է, եւս մեկ անգամ հաստատում է իր հուշերի խայտառակ գիրքը՝ սկսած վերնագրից մինչեւ այն հատվածները, որտեղ նա բավական անկեղծ «ինքնամերկացումներ» է կատարում՝ պատմելով տարբեր մարդկանց հետ իր ունեցած վատ հարաբերությունների, վեճերի, կռիվների, երկարատեւ կամ կարճատեւ խռովածությունների մասին: Բայց հատկանշական է, որ նա բոլոր դեպքերում մեղքը բարդում է ուրիշների վրա, եւ նրան թվում է, թե այդպիսով կարելի է ջրից չոր դուրս գալ: Այսպես, Սարինյանը պատմում է, թե ինչպես նիստի ժամանակ նա մի անգամ ծանր խոսքերով վիրավորել է ինստիտուտի տնօրեն Արամ Գրիգորյանին, եւ հետո չգիտես ինչ տրփոխտնօրեն Արամ Գրիգորյանին, եւ հետո չգիտես ինչ տրամաբանությամբ եզրակացնում, որ դրա մեղավորը եղել է տնօրենը: Իսկ երբ իր եւ խաժակ Գյուլնազարյանի հարաբերությունները վատացել են, նա առանց որեւէ հիմնավորումների պնդում է, որ դրա մեղավորը նույնպես եղել է Չրբաշյանը: «Ինքնամերկացման» ձեւերից մեկն էլ այն է, երբ նա հաճախ վկայակոչում է ուրիշների խոսքերը իր իսկ չարության, մեծամտության կամ անհաշտ ու կռվազան բնավորության մասին: Իրոք, Սարինյանի այս հատկանիշները շատերին են հայտնի եղել եւ հիմա էլ հայտնի են: «Բայց այս աստիճանն...»,- անկեղծորեն զարմանում են շատերը: Ես ինքս անձամբ զարմանք չեմ ապրում: Ինձ համար զարմանալին մեկ այլ բան է. ինչպե՞ս կարող են այդ նույն ինստիտուտի ատենադպիրները, ովքեր քաջատեղյակ են նրա ողջ անցուդարձին, թույլ տալ, որ Սարինյանը թեթեւ ձեռքով հաշվեհարդար տեսնի բոլոր նրանց հետ, ովքեր իր հիմին, մեղմ ասած, հաճելի չեն եղել կամ չեն մասնակցել իր նյութած խարդավանքներին: Եվ պատահական չէ, որ այս ցուցակում հայտվել է անգամ այնպիսի մի համեստ եւ տաղանդավոր գիտնական, ինչպիսին Պիոն Հակոբյանն էր, որին Սարինյանը մեղադրում է ամենածանր հանցանքներից մեկում՝ գրագողության մեջ, ընդ որում, ոչ սովորական գրագողության. նա իբր դարակներից թոցրել է Ասատուր Մնացականյանի թղթապանակը, հրատարակել այնտեղ ամփոփված նյութերը եւ հետո ձեւացրել, թե գտել է այն ու վերադարձրել հեղինակին: Զգալի հերյուրանք... Պիոն Հակոբյանին հիշ թե շատ ճանաչող մարդիկ կարող են վկայել, թե նա որքան բծախնդիր էր իր ամեն մի տողի, տառի նկատմամբ եւ ինչպիսի տքնաջան աշխատանքով էր երեւան հանում իր հոդվածներն ու գրքերը: Եվ անգամ տասնամյակների ընթացքում իր հավաքած նյութերը նա չէր շտապում հրատարակել՝ պատճառաբանելով, թե դրանք մշակման կարիք ունեն: Այս ամենը պատմություն է, որ շատերին է հայտնի... Բայց մարդիկ լռում են: Լռում են, քանի որ չկան նրանք, ում վարկաբեկում են, եւ ումից ոչինչ այլեւս կախված չէ, իսկ վարկաբեկողը այսօր վճռում է շատերի ճակատագիրը: Տավոք, լռում են նաեւ նրանք, ովքեր իրական գիտնական եւ գրականագետ կայացել են հենց Չրբաշյանի տնօրենության երկու տասնամյակների ընթացքում եւ նրա ջանքերով ու հովանավորությամբ պաշտպանել ատենախոսություններ, հրատարակել մենագրություններ, մասնակցել կոլեկտիվ գիտական ժողովածուների հրատարակմանը, դասականների երկերի եւ լիակատար ժողովածուների լույսընծայմանը, ի վերջո, զբաղեցրել ինստիտուտի փոխտնօրենի, գիտքարտուղարի, բաժնի վարիչի կամ գիտական խմբի ղեկավարի պաշտոնները, եղել են գիտական խորհրդի անդամ: Եվ սարինյանական գարշահոտ բնորոշումները, թե իբր այդ տարիներին ինստիտուտում տիրում էր «անվստահության, ներհակության, պառակտման վիճակ», կամ՝ «ստեղծվել էր մի յուրատեսակ մաֆիա, որ գիտական խորհրդի միջոցով օրինական ձեւ էր տալիս ցանկացած անօրինական եւ անարդարացի գործարքների», նաեւ դառնում է նրանց խղճի գործը...

Իր մահից ընդամենը մեկ-երկու տարի առաջ՝ 1997-1998 թթ., ակադեմիկոս էդ. Չրբաշյանը, արդեն բավական ծանր առողջական վիճակում որոշեց գրի առնել իր կյանքի որոշ դրվագներ եւ անմոռանալի պահեր, որոնք անջնջելի հետք էին թողել նրա հիշողության մեջ: Այդպես գոյացավ մի տետրակ, որն իր փոքր ծավալի մեջ բավական նյութ է ընդգրկում՝ սկսած մանկության հիշողություններից մինչեւ վերջին տասնամյակների գրական-հասարակական անցուդարձը: Այդ գրքույկը շուտով ամբողջական ձեւով լույս կընծայվի եւ կդառնա հանրության սեփականությունը: Իսկ ես առայժմ իմ պարտքն եմ համարում ընթերցողի ուշադրությանը ներկայացնել այն հատվածները, որոնք վերաբերում են Ս. Սարինյանին: Մարդկանց նկատմամբ ունեցած բարյացակամության եւ նրբանկատության հետ մեկտեղ Չրբաշյանը (եւ այս մասին կարող են վկայել շատերը) նաեւ անհանդուրժող էր վատի եւ չարի նկատմամբ: Եվ պատահական չէ, որ Սարինյանի կերպարն իր ամբողջության մեջ նրա համար անընդունելի էր: Այս նյութերը տարիներ շարունակ ունենալով մեր ձեռքի տակ՝ մենք պատեհ առիթ չէինք գտնում դրանք հրատարակելու: Այժմ, կարծում եմ, այդ ժամանակը եկել է...

ԱՇԽԵՆ ՉՐԲԱՇՅԱՆ

ԷԴՎԱՐԴ ՉՐԲԱՇՅԱՆ

Ո՞Վ ԷՐ ՆԱԽԱԳԱՀՈՒՄ

1997 թ. հունվարի 24-ին գրողների միության դահլիճում նշվելու էր գրականագետ Սուրեն Աղաբաբյանի ծննդյան 75-ամյակը: Հիշատակի հավաքին, որը կազմակերպել էին Ակադեմիայի գրականության ինստիտուտն ու գրողների միությունը, նախագահելու էր Հրանտ Մաթեւոսյանը: Բայց մեկ օր առաջ պարզվեց, որ նույն օրը տեղի է ունենալու նաեւ Ե. Չարենցի ծննդյան 100-ամյակը նախապատրաստող կառավարական հանձնաժողովի նիստ: Բնականաբար, մենք այդ նիստից բացակայել չէինք կարող, եւ Մաթեւոսյանը, ինչպես նաեւ Հ. Թամրազյանը եւ ես հիշատակի հավաքին հասանք որոշ ուշացումով: Հավաքն արդեն սկսվել էր, եւ նախագահողի աթոռին նստած էր Սերգեյ Սարինյանը:

Առերեւույթ ամեն ինչ հարթ անցավ, եղան ջերմ ելույթներ: Բայց իմ, գուցե նաեւ շատերի հոգում մնաց մի դառը զգացողություն, որ այդ օրը մենք նաեւ վիրավորեցինք հանգուցյալի հիշատակը՝ նախագահողի աթոռը տալով մի մարդու, որը տասնամյակներ շարունակ միայն լուսանքներ է թափել նրա վրա, իսկ այժմ հանդես է գալիս բարեկամի եւ «անձնվեր ընկերոջ» դիմակի տակ: Եվ ես ահա իմ պարտքն եմ համարում գեթ մի քանի կոնկրետ փաստերով պատմել, թե ինչպես է նա վարկաբեկել ու դառնացրել Ս. Աղաբաբյանին:

Աղաբաբյանին ամեն կերպ չարախոսելու միակ պատճառը Ս. Սարինյանի անզուսպ նախանձն էր: Առահասարակ, եթե խանդը, նախանձը (չար թե բարի) մարդկային հավերժական զգացումներ են, ապա նրա մոտ դա հասցված է ծայրահեղ, պաթոլոգիկ չափերի՝ հաճախ նրան զրկելով ոչ միայն խղճից ու ամոթից, այլեւ բանականությունից: Մի անգամ Հրանտ Թամրազյանը շատ սրամիտ ասաց. «Ինչ տարօրինակ մարդ է Սերգեյ Սարինյանը. Գոհար Գասպարյանին էլ որ ծափահարում են, նա իրեն վատ է զգում»: Մի կողմ թողնելով շատերի, այդ թվում նաեւ իմ հասցեին Սարինյանի նյութած դավերն ու զգրախոսությունները՝ ուզում եմ պատմել եւ վկայել միայն Ս. Աղաբաբյանի նկատմամբ նրա արածներից մի քանիսի մասին:

1. 1968 թ. մարտին Մախիմ Գորկու ծննդյան 100-ամյակի առթիվ Երեւանում գումարվեց համամիութենական գիտաժողով, որից հետո ճոխ ծաղկեփունջ տրվեց Աշտարակում՝ Քասախ գետի կամուրջի մոտի նորակառույց ռեստորանում: Բազմաթիվ կենացների շարում մոսկովյան գրականագետ Զոյա Կեդրինան առաջարկեց նաեւ հայ քննադատության կենացը՝ հանձին Սուրեն Աղաբաբյանի: Եվ դա իրավացի էր, քանի որ համամիութենական մասնակցող ամենից ավելի ակտիվորեն հանդես եկող հայ քննադատը այդ տարիներին Ս. Աղաբաբյանն էր: Բայց այդ կենացը պարզապես մթագնեց Սարինյանի գիտակցությունը: Եվ ահա ընդմիջման ժամանակ երկրի տարբեր ծայրերից ժամանած բազմաթիվ հյուրերի ներկայությամբ ծագեց մի անվայել պատմություն: Ինչպես հետագայում պատմեցին, Սարինյանը մի քանի անգամ անցնում է իրար հետ զրուցող Կեդրինայի եւ Աղաբաբյանի կողքով եւ հայերեն հայհոյանքներ է տալիս: Տեսնելով, որ դրանով չի կարողանում Ս. Աղաբաբյանին հանել հավասարակշռությունից, նա այս անգամ բարձրաձայն ասում է ռուսերեն. «Ты не критик, а говно». Այստեղ արդեն Սուրենը չի համբերում եւ հարվածում է նրան: Առաջացավ մի ամբողջ տուրուդմփոց, որը հիշելիս ես մինչեւ այսօր էլ ամոթի զգացում եմ ապրում: Ավտոբուսով վերադառնալիս ես Պարույր Սեւակի կողքին էի նստած: Նա նույնպես շատ դառնացած էր այդ տխուր միջադեպից, որի ամբողջ մեղքը, իհարկե, Ս. Սարինյանի վրա է ընկնում:

2. 1977 թ. հունիսին Ս. Աղաբաբյանը ծանր ինֆարկտ ստացավ եւ երկար ժամանակ պառկած էր հիվանդանոցում: Սարինյանը ոչ մի անգամ չայցելեց նրան, թեեւ առերեւույթ նրանք այդ ժամանակ նորմալ հարաբերությունների մեջ էին: Բայց ամենից խստմնելին կատարվեց դրանից հետո: Դուրս գրվելով հիվանդանոցից՝ Ս. Աղաբաբյանը երկար ժամանակ դեռ տնից դուրս չէր գալիս: Մենք էլ (ես, Կ. Մնացականյանը, Հ. Քենդերյանը եւ ուրիշներ) հաճախ այցելում էինք նրան եւ հորդորում, որ դուրս չգա տնից մինչեւ լրիվ ապաքինումը: Վերջապես, մի հոկտեմբերյան օր նա զանգահարեց եւ հայտնեց, որ արդեն իրեն լավ է զգում եւ ուզում է անպայման գալ ինստիտուտ (նրա տունը հիմնարկությանը շատ մոտ էր):

Եվ ահա մի 15-20 ռոպե անց նա ներս մտավ իմ առանձնասենյակը, բայց այնպես այլայլված ու գունատված, որ ես վախեցա: Նրա պատմածից պարզվեց, որ ինստիտուտի սանդուղքներով բարձրանալիս նա հանդիպել է Սարինյանին, որն անգամ չի բարեւել նրան, երեսը շուռ է տվել ու անցել: Պարզ է, Սարինյանը խորը հիասթափություն էր ապրել, որ Աղաբաբյանը չմեռավ, դիմացավ այդ փորձությանը եւ ահա նորից վերադառնում է աշխատանքի:

Դրանից հետո Սարինյանը նորից առերեւույթ հաշտվեց Աղաբաբյանի հետ, նույնիսկ զրջման խոսքեր էր ասել, բայց դավադրական նոր քայլերից չհրաժարվեց:

3. 70-ական թթ. վերջերին Սարինյանը ակտիվ ջանք թափեց, որպեսզի «Սովետական գրականություն» ամսագրի էջերում տպագրվի հատուկ հոդված Ս. Աղաբաբյանի «Եղիշե Չարենց» երկհատոր մենագրության դեմ: Հոդվածը գրել էր մի մերձգրական անձ՝ իրեն գրականագետ եւ ապա լեզվաբան ներկայացնող Միքայել Դարբինյանը, որի հետ Սարինյանը այն ժամանակ մտերիմ հարաբերությունների մեջ էր: Հոդվածը վերնագրված էր «Հայոց աղաբաբյանիզմը եւ նրա աղետալի հետեւանքները չարենցագիտության համար»: Սարինյանն այդ հոդվածը անձամբ էր հանձնել ամսագրի խմբագիր Ս. Կոտրիկյանին, ամեն կերպ գովաբանել եւ հանձնարարել տպագրության: Բարեբախտաբար, Ս. Կոտրիկյանը տպագրության հարցը վճռելուց առաջ դիմեց ինձ՝ իբրեւ բարեկամի եւ ամսագրի խմբագրական կոլեգիայի անդամի: Ես կտրականապես առարկեցի հոդվածի տպագրությանը, որը գիտության եւ չարության մի խառնուրդ էր: Սարինյանի ջանքերն այս դեպքում ապարդյուն անցան:

4. 1981 թ. «Լիտերատուրնայա Արմենիա» ամսագրում նրա խմբագիր Կարեն Սիմոնյանը մի պասկվիլային հոդված գրեց մեր քննադատության մասին, որը 90 տոկոսով ուղղված էր Ս. Աղաբաբյանի դեմ: Ես չեմ կարող պնդել, թե այդ վայրի գրպարտչական հրապարակումը ոգեշնչողներից մեկը եղել է Սարինյանը, թեեւ նրանց մտերիմ հարաբերությունները շատ հավանական են դարձնում այդ ենթադրությունը: Բայց ես կարող եմ վկայել մի ուրիշ բան. երբ մենք՝ մի խումբ գրողներ եւ քննադատներ, գայրացած մի համախոսական գրեցինք Կ. Սիմոնյանի հոդվածի դեմ, Սարինյանը ոչ միայն չստորագրեց այդ գրության տակ, այլեւ ուրիշներին համոզում էր նույնպես չստորագրել, քանի որ «հոդվածը շատ էլ ճիշտ է»:

Ես կարող եմ դեռ երկար շարունակել փաստերի թվարկումը, բայց ասվածն էլ բավական է հաստատելու համար, որ Սարինյանը բարոյական ոչ մի իրավունք չուներ ներկայանալու իբրեւ Ս. Աղաբաբյանի բարեկամ: Նա առհասարակ ոչ ոքի բարեկամ լինել չի կարող, բացի նրանցից, ում հետ կարող է չար գործ նյութել: Օրինակ, տխրահռչակ Աշոտ Բլեյանը, որի հովանավորությամբ ստեղծված խայտառակ դասագրքերի «ջերմ պաշտպանը» դարձավ Ս. Սարինյանը (նա միակ գրականագետն է, որը ստորագրեց դրանց հաստատման պաշտոնական փաստաթուղթը): Բայց դա, իհարկե, առանձին խոսակցության նյութ է:

Դա վրիպակ չէ

Պարույր Սեւակի եղերական մահից շատ չանցած՝ սկսեց հրատարակվել նրա երկերի ժողովածուն 6 հատորով: Շատերը ուշադրություն դարձրին այդ հրատարակության համար Ս. Սարինյանի գրած առաջաբանի առաջին նախադասությանը. «Հայ քնարերգության գեղարվեստական զարգացման արդի էտապը նշանավորվում է այնպիսի ճեծ անհատականություններով, որոնցից են Նահրի Զարյանը, Գեղամ Սարյանը, Եղիշե Չարենցը, Հովհ. Շիրազը, Պարույր Սեւակը» (հատոր 1. 1972, էջ V):

Այս ինչ տարօրինակ դասավորություն է անունների. ինչպե՞ս է եղիշե Չարենցը ընկել Զարյանից եւ Սարյանից հետո: Չէ՞ որ ոչ միայն իր գեղարվեստական մեծությամբ, այլեւ ամենաարագ ժամանակագրությամբ Չարենցն այս թվարկման մեջ առաջինը պետք է լիներ: Եվ երբ ոմանք առաջաբանի հեղինակին հարցնում էին, թե երեւի դա տեխնիկական սխալի հետեւանք է, նա ամբարտավան կեցվածքով պատասխանում էր. «Ոչ մի սխալ էլ չկա: Չարենցն ինչ բանաստեղծ է որ... Նրա անունը այդտեղ նույնիսկ կարող էր չլինել»: Ինչ գեղարվեստական չափանիշներով է առաջնորդվել Ս. Սարինյանը՝ վերանայելով Չարենցի տեղը մեր բանաստեղծության պատմության մեջ: Ոչ մի գիտական մոտեցում, իհարկե, այստեղ չկա. Սարինյանը Չարենցի մասին առհասարակ ոչ մի հոդված չի գրել: Ինչպես բնորոշ է նրան, այս անգամ եւս նա առաջնորդվել է միայն նեղ անձնական նկատառումներով: Դրանում համոզվելու համար պետք է համադրել որոշ փաստեր:

70-ական թթ. սկսվել էր Եղիշե Չարենցի գրական ժառանգության ուսումնասիրության նոր փուլը: Ակադեմիայում ստեղծվեց Ս. Աղաբաբյանի «Եղիշե Չարենց» երկհատոր մենագրությունը, իսկ համալսարանում տեղի էին ունենում ամենամյա չարենցյան ընթերցումներ, որոնց նյութերը պարբերաբար լույս տեսան մի քանի գրքով: Այս բոլորը չէր կարող չանհանգստացնել Սարինյանին, որն ամեն մի լավ գործի նկատմամբ ունի հիվանդագին-խանդոտ վերաբերմունք: Եվ ահա այս դեպքում նա դիմեց այսպիսի «ինքնաիշխ» եղանակի. Ս. Աղաբաբյանի աշխատանքն արժեզրկելու համար ամեն կերպ նսեմացնել Չարենցի նշանակությունը՝ նրան թողնելով Ն. Զարյանի եւ Գ. Սարյանի «ստվերի տակ»: Այստեղ է «թաղված շան գլուխը». ուրիշ ոչ մի «փիլիսոփայություն» կամ «գիտական» չափանիշ մի՛ որոնեք այդ արտառոց նախադասության մեջ:

Այժմ, երբ շատ են հոսել, Սարինյանը, երեւի հասկանալով իր գրածի ողջ անհեթեթությունը, որը տարածվել է 50 հազար տպաքանակով, զանազան առիթներով փորձում է անտեղյակներին հավատացնել, թե այդ իրողությունը գրաբարի եւ սրբագրիչի անփութության արդյունք է: Բայց սա հերթական կեղծիքն է. այստեղ ոչ մի վրիպակ կամ տեխնիկական սխալ չկա: Կա միայն անսկզբունք չարություն, որի հետեւանքով նա պատրաստ է ոտնահարել ամեն մի պատմական ու գեղարվեստական ճշմարտություն:

Իսկ Եղիշե Չարենցի հետմահու ճակատագրի մեջ այս դրվագը կհիշվի իբրեւ մի անխելք հարձակում՝ «չնչին, որպես Արարատին նետված մի քար»: ■

Մամուլ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆԸ ՏԵՂԵԿԱՑՆՈՒՄ Է

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՃԱՆՈՒՑՈՒՄ

ՀՀ Արարատի մարզի Վեղի հարսի Արարատյան 70 հասցեում գտնվող շենքի օտարման մրցույթի անցկացման մասին (ծածկագիր՝ 1047-Ա-1)

Առաջնորդվելով ՀՀ կառավարության 2006թ.-ի հուլիսի 27-ի թիվ 1047-Ա որոշման 1-ին մասով՝ ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությունը հրավիրում է բոլոր սուբյեկտներին՝ մասնակցելու ՀՀ ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարության ենթակայության ՀՀ Արարատի մարզի Վեղի հարսի Արարատյան 70 հասցեում գտնվող 926,4 քառ.մ. մակերեսով շենքի (այսուհետեւ՝ գույք) օտարման մրցույթին (ծածկագիր՝ 1047-Ա-1):

1. Տեղեկություններ օտարվող գույքի մասին

1.1.	Գույքի հասցեն	ՀՀ Արարատի մարզ, Վեղի, Արարատյան 70
1.2.	Գույքի օտարման մասին ՀՀ կառավարության որոշման համարը	1047-Ա
1.3.	Գույքի օտարման մասին ՀՀ կառավարության որոշման ամսաթիվը	27.07.2006թ.
1.4.	Անշարժ գույքի մակերեսը (քառ.մ.)	926,40
1.5.	Գույքի հաշվեկշռային արժեքը (հազ. դրամ)	5124,65
1.6.	Գույքի գնահատված արժեքը (հազ. դրամ)	26818,00
1.7.	Գույքի գնահատման ամսաթիվը	11.05.2006թ.
1.8.	Գույքի արժեքի որոշման հետ կապված վճարը (հազ. դրամ)	676,80
1.9.	Անշարժ գույքի սեփականության իրավունքի պետական գրանցման վկայականի համարը	N695064
1.10.	Անշարժ գույքի սեփականության իրավունքի պետական գրանցման վկայականի տրման ամսաթիվը	25.01.2002թ.
1.11.	Անշարժ գույքի զբաղեցրած, ինչպես նաեւ դրա օգտագործման եւ սպասարկման համար անհրաժեշտ հողամասի մակերեսը (հա)	0,1112
1.12.	Անշարժ գույքի զբաղեցրած, ինչպես նաեւ դրա օգտագործման եւ սպասարկման համար անհրաժեշտ հողամասի կադաստրային արժեքը (հազ. դրամ)	13818,82

2. Տեղեկություններ օտարվող գույքի կազմի մասին

Հ/Հ	Գույքի անվանումը	Հաշվեկշռային արժեքը (հազ. դրամ)	Գնահատված արժեքը (հազ. դրամ)
2.1.	Հիմնական միջոցներ		26818,00
	այդ թվում՝		
	Շենքեր (1 հաս)		26818,00

3. Մրցույթին մասնակցելու պայմաններ

3.1. Մրցույթին մասնակցելու իրավունք ունեն մասնակցության այն սուբյեկտները (կամ նրանց լիազոր ներկայացուցիչները), որոնք ստանձնած կարգով վճարել են մրցույթի նախավճարը (տես 6.1 եւ 6.2 կետերը) եւ 6.3 կետում նշված ժամկետում ներկայացրել են մրցույթի մասնակցության հայտ (ձեւը կարելի է ստանալ ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությունից), որը ներառում է հետեւյալ փաստաթղթերը՝

- գրավոր առաջարկ մրցույթի պայմանների վերաբերյալ (տես՝ 4.12 կետը),
- նախավճարի մուծումը հաստատող փաստաթղթերի պատճենները,
- գրանցման եւ հիմնադիր փաստաթղթերի պատճենները (իրավաբանական անձանց համար), հարկահանների համար՝ անձնագրի պատճենը, սոցիալական հարցի պատճենը,
- հայտատուի կողմից տրված լիազորագիր (եթե մրցույթին ներկայանում է լիազորված անձը),
- գործարար նոպիր,
- իրավաբանական անձանց համար նաեւ գրավոր հավաստում առ այն, որ Հայաստանի Հանրապետության օրենքներով կամ դիմողի (հայտատուի) կանոնադրությամբ տվյալ գույքը տվյալ ձեռով գնելու համար պետական հանձնարարական մարմինների կամ ներքին մարմինների (խորհուրդ, ընդհանուր ժողով) հանձնարարությունը չի պահանջվում, կամ պահանջվող հանձնարարությունները ստացված են՝ կցելով այդ հանձնարարությունները,
- գործարար նոպիր:

4. Մրցույթի մասնակցության հայտերի ներկայացման կարգը

4.1. Մրցույթի մասնակցության հայտերը ներկայացվում են ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն՝ մինչեւ 6.3 կետում նշված ժամկետի լրանալը:

Մրցույթի մասնակցության հայտերը՝ 3.1. կետում նշված մրցույթի մասնակցության համար անհրաժեշտ փաստաթղթերով, ներկայացվում են սոսնձված եւ ստորագրված ծրարով՝ անձամբ կամ փոստով: Փոստով ուղարկված հայտերի (ծրարների) ներկայացման ժամկետ է համարվում ծրարի Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն մուտի օրը եւ ժամը:

4.2. 4.1. կետին չհամապատասխանող հայտերն առանց ծրարը բացելու վերադարձվում են հայտ ներկայացնողին:

4.3. Մրցույթի հայտատուները՝ մինչեւ մրցույթի մասնակցության հայտերի ընդունման վերջնական ժամկետի ավարտը (մինչեւ 6.3 կետում նշված ժամկետի լրանալը) կարող են փոփոխել կամ հետ վերցնել հայտը: Մրցույթի հայտի փոփոխությունը կատարվում է հայտերի ներկայացման կարգով՝ ծրարի վրա ավելացնելով «Փոփոխում» բառը:

Մրցույթի մասնակցության հայտերի ընդունման վերջնական ժամկետի ավարտից հետո (մինչեւ 6.3 կետում նշված ժամկետի լրանալուց հետո) ներկայացված հայտի փոփոխության կամ հետ վերադարձման դիմումները ենթակա չեն քննարկման:

4.4. Մրցույթի մասնակիցների՝ մրցութային պայմաններին համապատասխան ներկայացրած առաջարկությունները պետք է արտահայտված լինեն թվային ցուցանիշներով եւ փոխ չլինեն ՀՀ կառավարության կողմից սահմանված նվազագույն արժեքից (տես 4.12 կետը):

4.5. Մրցույթին ներկայացվող փաստաթղթերը ներկայացվում են տպագիր կամ պարզ ընթեռնելի ձեռագրով:

Մրցութային առաջարկները ներկայացվում են հայերեն լեզվով, իսկ օտար լեզուներով գրված փաստաթղթերը կարող են ուղեկցվել թարգմանություններով: Թարգմանությունների բացակայության դեպքում փաստաթղթերը կթարգմանվեն հանձնաժողովի կողմից:

4.6. Ծրարը պետք է հագեցնված լինի մրցութային հանձնաժողովին՝ նշելով մասնակիցների օբյեկտի անվանումը եւ մրցույթի ծածկագիրը (ծածկագիր՝ 1047-Ա-1):

4.7. Մրցութային առաջարկները կարող են ընդունվել նաեւ ֆաքսիմիլային կապով: Ստացված փաստաթղթերը ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությունում դրվում են ծրարի մեջ եւ փակվում:

Ներկայացված ծրարները ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության կողմից կնքվում եւ մուտագրվում են:

4.8. 6.3 կետում նշված ժամկետի լրանալուց հետո ներկայացված առաջարկները չեն ընդունվում:

4.9. Մրցույթի հայտը գրանցվում է հատուկ գրանցամատյանում՝ հայտատուին տալով ստացական մրցույթի մասնակցության հայտը ընդունելու վերաբերյալ:

4.10. Մրցույթի հայտատուները 6.2 կետում նշված հատուկ հաշվին մուծում են մրցույթի մասնակցության նախավճար 6.1 կետում նշված գումարի չափով:

Մրցույթում հաղթող ճանաչված մասնակցի նախավճարն ընդգրկվում է մասնակցի կողմից առաջարկված գույքի մասնավորեցման (օտարման) գնի մեջ: Մրցույթում հաղթող ճանաչված մասնակցի (կամ նրա լիազոր ներկայացուցչի) կողմից մրցույթի արդյունքների ամփոփումը չստորագրելու, հետագա վճարումները չկատարելու եւ (կամ) պայմանագիր չկնքելու դեպքերում նախավճարը չի վերադարձվում եւ մասնակցությունը հասարակում է չկայացած:

Մրցույթում հաղթող չճանաչված մասնակիցները, ինչպես նաեւ մասնակցի կարգավիճակ չստացած հայտատուները, մրցույթի մասնակցության նախավճարի վերադարձման նպատակով պետք է դիմեն ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն:

Հայտային վաղեմության ընդհանուր ժամկետում մրցույթում հաղթող չճանաչված հայտատուի (կամ նրա լիազոր ներկայացուցչի) կողմից հասարակական դիմում չներկայացնելու դեպքում մրցույթի մասնակցության նախավճարը հաշվանցվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի հասարակական հաշվին:

4.11. Մրցույթի պահանջներին մրցութային առաջարկի անհամապատասխանության դեպքում մրցութային առաջարկ ներկայացրած սուբյեկտին մրցույթի մասնակցի կարգավիճակ չի տրվում եւ մրցութային առաջարկը հանվում է հետագա ենթարկումից:

4.12. Մրցույթի հաղթողի որոշման համար առաջարկվում են հետեւյալ պայմանները.

օտարվող գույքի համար առաջարկվող գինը (նվազագույն գինը՝ 8 238,28 հազ. դրամ),

ներդրումների չափը՝ առաջիկա 3 տարվա կտրվածքով:

4.13. Մրցույթի հաղթող է ճանաչվում այն մասնակիցը, որի առաջարկը առավելագույն չափով է բավարարում մրցույթի պայմաններին:

4.14. Մրցույթում հաղթողին է օտարվում նաեւ անշարժ գույքի զբաղեցրած, ինչպես նաեւ դրա օգտագործման եւ սպասարկման համար անհրաժեշտ 1.11. կետում նշված հողամասը՝ 1.12. կետում նշված կադաստրային արժեքով:

5. Վճարումներ եւ պայմանագրի կնքում

5.1. Մրցույթի հաղթողը 10-օրյա ժամկետում ստանում է մրցույթի արդյունքների հաստատված արձանագրության օրինակը: Մրցույթի դիտ մասնակիցները կարող են ստանալ արձանագրության պատճենները:

5.2. Մրցույթի հաղթողը գույքի վաճառքի գումարը պետք է վճարի մրցույթը արձանագրությունը ստորագրելու օրվանից եռօրյա ժամկետում Հայաստանի Հանրապետության արժույթով՝ գույքի վաճառքի գնի 70%-ն ոչդրելով «Պետական սեփականության հանձնվող հիմնական միջոցների (ֆոնդերի) օտարման գումարից ոչնչացնելու, 30%-ը «Վերջ հարկային հաշվի ֆոնդային բյուջե, իսկ հողի վաճառքի գումարը՝ «Պետական սեփականություն հանդիսացող հողի վաճառքից ոչնչացնելու գանձարանային հաշվին:

5.3. Հաշվարկն ՀՀ կառավարության 2006թ.-ի հուլիսի 27-ի թիվ 1047-Ա որոշման՝ օտարման պայմանագրում պետք է նախատեսվի, որ.

օտարվող գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման եւ գույքի արժեքի որոշման հետ կապված վճարները եւ տուրքերն կատարվում են գնորդի հաշվին՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: Գույքի արժեքի որոշման հետ կապված վճարը սահմանվել է 676800 դրամ:

5.4. Մրցույթով մասնակցության արդյունքում գնորդը հանդիսանում է նաեւ գնահատման պահից հետո առաջացած իրավունքների եւ պարտավորությունների իրավահաջորդը:

5.6. Վճարումները կատարվում են ՀՀ արժույթով:

5.7. Սահմանված ժամկետում վճարումները չկատարելու դեպքում մրցույթի հաղթողի վճարած նախավճարի գումարը նրան հետ չի վերադարձվում, եւ մրցույթը հասարակում է չկայացած:

6. Մրցույթի անցկացման այլ պայմաններ

6.1	Մրցույթի նախավճարի չափը	411 914 դրամ
6.2	Մրցույթի նախավճարի մուտագրման հաշիվ հաշիվը	Թիվ 1 գանձապետական բաժանմունք դրամական - 900013145017
6.3	Մրցութային առաջարկի ներկայացման վերջին ժամկետը	2006 թվականի դեկտեմբերի 21-ը , ժամը 13:00
6.4	Մրցութային առաջարկի ներկայացման վայրը	Երեւան, Տիգրան Մեծի 4, ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն, 438 սենյակ:
6.5	Մրցույթի անցկացման օրը, ժամը եւ վայրը	2006 թվականի դեկտեմբերի 25-ը, ժամը 15:00 Երեւան, Տիգրան Մեծի 4, ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն
6.6	Ֆաքսիմիլային կապ	(37410) 581441
6.7	Ինտերնետ	URL: //www.privatization.am

7. Գույքը մրցույթով չվաճառվելու դեպքում նոր մրցույթների անցկացումը

7.1 Գույքը մրցույթով չվաճառվելու դեպքում այն վաճառելու նպատակով կազմակերպվում է նոր մրցույթներ 1-6 կետերում նշված կարգով եւ հետեւյալ պայմաններով.

Մրցույթի անցկացման օրը եւ ժամը	Մրցութային առաջարկի ներկայացման վերջին ժամկետը	Օտարվող գույքի նվազագույն գինը (հազ. դրամ)	Մրցույթի նախավճարի չափը (դրամ)
2006 թվականի նոյեմբերի 13, ժամը 15:00	2006 թվականի նոյեմբերի 9, ժամը 13:00	16 090,40	804 520
2006 թվականի նոյեմբերի 27, ժամը 15:00	2006 թվականի նոյեմբերի 23, ժամը 13:00	12 872,32	643 616
2006 թվականի դեկտեմբերի 11, ժամը 15:00	2006 թվականի դեկտեմբերի 6, ժամը 13:00	10 297,86	514 893
2006 թվականի դեկտեմբերի 25, ժամը 15:00	2006 թվականի դեկտեմբերի 21, ժամը 13:00	8 238,28	411 914
2007 թվականի հունվարի 15, ժամը 15:00	2007 թվականի հունվարի 11, ժամը 13:00	6 590,63	329 531
2007 թվականի հունվարի 29, ժամը 15:00	2007 թվականի հունվարի 25, ժամը 13:00	5 272,50	263 625
2007 թվականի փետրվարի 12, ժամը 15:00	2007 թվականի փետրվարի 8, ժամը 13:00	4 218,00	210 900
2007 թվականի փետրվարի 26, ժամը 15:00	2007 թվականի փետրվարի 22, ժամը 13:00	3 374,40	168 720
2007 թվականի մարտի 12, ժամը 15:00	2007 թվականի մարտի 7, ժամը 13:00	2 699,52	134 976
2007 թվականի մարտի 26, ժամը 15:00	2007 թվականի մարտի 22, ժամը 13:00	2 159,62	107 981

Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն՝ 581441 հեռախոսահամարով:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՃԱՆՈՒՑՈՒՄ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ «ԱՇՈՒՐԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ՀՐԱՎԻՐՈՒՄ Է ԱՇՈՒՐԻ, ՈՐԸ ՏԵՂԻ ԿՈՒՆԵՆԱ՝

2006թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 18-ԻՆ, 2007թ. ՀՈՒՆՎԱՐԻ 3-ԻՆ, 18-ԻՆ, ԺԱՄԸ 11:30-ԻՆ, «ԱՇՈՒՐԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՈՒՄ, ՀԱՍՑԵՆ՝ Ք.ԵՐԵՎԱՆ, Դ.ԱՆՀԱՂԹ 23 /4-ՐԴ ՀԱՐԿ/

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

ՀՀ կառավարության 17.02.05թ. N460-Ն որոշմամբ լուծարվող «Հայքուրթեդ» ՓԲԸ-ի (հասցեն՝ Երեւան, Խանջյան 11) հաշվեկշռում գտնվող գույքը՝

N	Գույքի անվանումը	Թողարկման/շահագործման տարեթիվ	Մասվածության %-ը	Գնահատված արժեքը	Մեկնարկ. գինը (նեռարյալ ԱՍՀ-ն) դրամ
1	Ավտոմեքենա «Կոայլեր LHS-35» (գի՝ 144 LU 64)	1994թ./2004թ.	25	3733100	933275

Աճուրդը կանցկացվի դասական (գնի ավելացման) եղանակով:

Աճուրդին կարող են մասնակցել ֆիզիկական եւ իրավաբանական անձինք, ինչպես նաեւ հաստատությունները, որոնք մինչեւ յուրաքանչյուր աճուրդի նախորդող աշխատանքային օրը, ժամը17:00 աճուրդային հանձնաժողովին են ներկայացրել.

-աճուրդի նախավճարի մուծման անդորագիրը, որի չափն է 46670դրամ, մուտագրման հաշիվն է Հայինայբանկի թիվ 16000665 1014 դրամային հաշիվը: Նախավճարը կարող է վճարվել նաեւ կանխիկ «Աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ-ի դրամարկղ.

-անձնագիրը, իսկ իրավաբանական անձինք հիմնադիր փաստաթղթերի պատճենները եւ լիազորությունները հաստատող փաստաթղթերը:

Աճուրդին չեն կարող մասնակցել այն անձինք, որոնք վաճառվող լոտի նկատմամբ չեն կարող ունենալ սեփականության իրավունք:

Վերը նշված փաստաթղթերի առկայության դեպքում աճուրդային հանձնաժողովը մասնակցին տրամադրում է մասնակցի վկայական:

Աճուրդին կարող են ներկա գտնվել դիտորդներ՝ աճուրդի մասնակից չհամարվող այն անձինք, ովքեր վճարել են մուտի վճար՝ 3000 դրամ:

Աճուրդին կարող են ներկա գտնվել դիտորդներ՝ աճուրդի մասնակից չհամարվող այն անձինք, ովքեր վճարել են մուտի վճար՝ 3000 դրամ:

Աճուրդի մասնակցի վկայականները տրամադրվում են «Աճուրդի կենտրոն» պետական ոչ առեւտրային կազմակերպությունում (հասցեն՝ Երեւան, Դ.Անհաղթի 23 /4-րդ հարկ) մինչեւ յուրաքանչյուր աճուրդի նախորդող աշխատանքային օրը, ժամը17:00, իսկ դիտորդի տոմսերը վաճառվում են մինչեւ աճուրդի սկսվելը:

Աճուրդին մասնակցել ցանկացողները վաճառվող լոտին (գույքին) կարող են ծանոթանալ սույն ծանուցման հրապարակման պահից մինչեւ աճուրդի բացմանը նախորդող օրն ընկած ժամանակահատվածը՝ յուրաքանչյուր երկուշաբթի, չորեքշաբթի եւ ուրբաթ օրերին, ժամը 9:00-ից մինչեւ 17:00 (բացառությամբ ժամը 13:00-ից մինչեւ 14:00):

Գույքի պահպանումը իրականացվում է ընկերության հավատարմագրային կառավարչի կողմից:

Նախնական աճուրդի սկսվելը աճուրդային հանձնաժողովը գրանցում է մասնակիցներին եւ յուրաքանչյուր մասնակցին, ներկայացված մասնակցի վկայականի համարին համապատասխան, տրամադրում է քարտ:

Աճուրդը վարում է աճուրդավարը:

Աճուրդավարը մասնակիցներին առաջարկում է մեկնարկային գնով գնել լոտը: Տանկացած մասնակից իրավունք ունի, նախկին աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածը, ներկայացնել նոր գնային հայտ, որը պետք է գերազանցի մասնակիցների կատարած նախորդ գնային հայտը՝ նվազագույնը հավելման (հայտի) չափով:

Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդի հաղթած մասնակից: Եթե մի քանի մասնակից միաժամանակ գնային հայտ են ներկայացրել հավասար չափով, որից հետո ավելի բարձր գնային հայտ չի ներկայացվել, արդյունքում աճուրդի հաղթած մասնակից է համարվում վիճակահանության արդյունքներով ընտրված մասնակիցը:

Աճուրդավարի կողմից աճուրդի հաղթող համարված մասնակիցը պարտավոր է՝ հանձնարարագիր ստանալուց 30 րոպեի ընթացքում, վճարել իր առաջարկած գնի առնվազն 3 տոկոսի չափով գումար, որը սահմանված ժամկետում (10 օրվա ընթացքում) հետագա վճարումները կատարելու դեպքում նախավճարի հետ միասին հաշվարկվում է վճարման ենթակա գումարի մեջ, իսկ վճարումներից խուսափելու դեպքում՝ չի վերադարձվում եւ տվյալ մասնակիցը զրկվում է աճուրդի մասնակցելու իրավունքից, իսկ լոտի աճուրդը վերսկսվում է մեկնարկային գնից: Եթե աճուրդում հաղթող հանդիսացող մասնակիցը սահմանված ժամկետում (հանձնարարագիր ստանալուց 30 րոպեի ընթացքում) վճարում է իր առաջարկած գնի առնվազն 3 տոկոսի չափով գումար, արդյունքում նա ճանաչվում է աճուրդի հաղթող եւ ստորագրում է աճուրդի արդյունքների մասին արձանագրությունը:

Աճուրդում չհաղթաց մասնակիցներին, գրավոր դիմումի առկայության դեպքում, մուծված նախավճարը վերադարձվում է աճուրդի ավարտից մեկ աշխատանքային օրվա ընթացքում:

Վաճառվող լոտին (գույքին) ծանոթանալու համար զանգահարել՝ (091) 41-91-41 հեռախոսահամարով:

Աճուրդի կանոնակարգին ծանոթանալու (որը տրամադրվում է դիմումի առկայության դեպքում, մեկ օրվա ընթացքում, պատճենահանման ծախսերը վճարելու պայմանով) եւ լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել Երեւան, Դ.Անհաղթի 23 /4-րդ հարկ/ հասցեով կամ զանգահարել աճուրդային հանձնաժողովին՝ հեռախոս՝ 24-67-25, ինտերնետ՝ URL: //www.privatization.am:

Հնարավոր փոփոխությունները եւ լրացումները կհրապարակվեն այն դեպքում, ինչպես կարավել է աճուրդի մասին սույն հրապարակային ծանուցումը:

«Աճուրդի կենտրոն» պետական ոչ առեւտրային կազմակերպություն

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ
մրցույթի անցկացման մասին
(ծածկագիր՝ 1047-Ա-2)

Առաջնորդվելով ՀՀ կառավարության 2006թ.-ի հուլիսի 27-ի թիվ 1047-Ա որոշման 2-րդ մասով՝ ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությունը հրավիրում է բոլոր սուբյեկտներին՝ մասնակցելու ՀՀ կրթության եւ գիտության նախարարության «Գեղարվեստական դաստիարակության եւ մշակույթի մանկապատանեկան կենտրոն» պետական ոչ առեւտրային կազմակերպությանն ամրացված՝ Երեւան հասցեի Ազաթանգեղոսի 3 հասցեում գտնվող ուսումնական մասնաշենքի առաջին հարկի 83.1 հա.մ. մակերեսով տարածքի (այսուհետեւ՝ գույք) օտարման մրցույթին (ծածկագիր՝ 1047-Ա-2):

1. Տեղեկություններ օտարվող գույքի մասին

1.1.	Գույքի հասցեն	ք. Երեւան, Ազաթանգեղոսի 3
1.2.	Գույքի օտարման մասին ՀՀ կառավարության որոշման համարը	1047-Ա
1.3.	Գույքի օտարման մասին ՀՀ կառավարության որոշման ամսաթիվը	27.07.2006թ.
1.4.	Անշարժ գույքի մակերեսը (հա.մ.)	83,10
1.5.	Գույքի գնահատված արժեքը (հազ. դրամ)	33200,00
1.6.	Գույքի գնահատման ամսաթիվը	25.05.2006թ.
1.7.	Գույքի արժեքի որոշման հետ կապված վճարը (հազ. դրամ)	796,80

2. Տեղեկություններ օտարվող գույքի կազմի մասին

ՀՀ	Գույքի անվանումը	Հաշվեկշռային արժեքը (հազ. դրամ)	Գնահատված արժեքը (հազ. դրամ)
2.1.	Հիմնական միջոցներ		33200,00
	այդ թվում՝		
	Տարածք շենքի առաջին հարկից (1 հա)		33200,00

3. Մրցույթին մասնակցելու պայմաններ

3.1. Մրցույթին մասնակցելու իրավունք ունեն մասնավորեցման այն սուբյեկտները (կամ նրանց լիազոր ներկայացուցիչները), որոնք սահմանված կարգով վճարել են մրցույթի նախավճարը (տես 6.1 եւ 6.2 կետերը) եւ 6.3 կետում նշված ժամկետում ներկայացրել են մրցույթի մասնակցության հայտ (ձեւը կարելի է ստանալ ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությունից, 438 սենյակ), որը ներառում է հետեւյալ փաստաթղթերը՝

- գրավոր առաջարկ մրցույթի պայմանների վերաբերյալ (տես՝ 4.12 կետը),
- նախավճարի մուծումը հաստատող փաստաթղթերի պատճենները,
- գրանցման եւ հիմնադիր փաստաթղթերի պատճենները (իրավաբանական անձանց համար), խղճահարների համար՝ անձնագրի պատճենը, սոցիալական քարտի պատճենը,
- հայտատուի կողմից տրված լիազորագիր (եթե մրցույթին ներկայանում է լիազորված անձը),
- գործարար ծրագիր,
- իրավաբանական անձանց համար նաեւ գրավոր հավաստում առ այն, որ Հայաստանի Հանրապետության օրենքներով կամ դիմողի (հայտատուի) կանոնադրությամբ տվյալ գույքը տվյալ ձեռով գնելու համար պետական հատուկ թույլտվություններ կամ ներքին մարմինների (խորհուրդ, ընդհանուր ժողով) համաձայնությունը չի պահանջվում, կամ պահանջվող համաձայնությունները ստացված են՝ կցելով այդ համաձայնագրերը:
- գործարար ծրագիր:

4. Մրցույթի մասնակցության հայտերի ներկայացման կարգը

4.1. Մրցույթի մասնակցության հայտերը ներկայացվում են ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն՝ մինչեւ 6.3 կետում նշված ժամկետի լրանալը:

Մրցույթի մասնակցության հայտերը՝ 3.1. կետում նշված մրցույթի մասնակցության համար անհրաժեշտ փաստաթղթերով, ներկայացվում են սոսնձված եւ ստորագրված ծրարով՝ անձամբ կամ փոստով: Փոստով ուղարկված հայտերի (ծրարների) ներկայացման ժամկետ է համարվում ծրարի Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն մուտքի օրը եւ ժամը:

4.2. 4.1. կետին չհամապատասխանող հայտերն առանց ծրարը բացելու վերադարձվում են հայտ ներկայացնողին:

4.3. Մրցույթի հայտատուները՝ մինչեւ մրցույթի մասնակցության հայտերի ընդունման վերջնական ժամկետի ավարտը (մինչեւ 6.3 կետում նշված ժամկետի լրանալը) կարող են փոփոխել կամ հետ վերցնել հայտը: Մրցույթի հայտի փոփոխությունը կատարվում է հայտերի ներկայացման կարգով՝ ծրարի վրա ավելացնելով «փոփոխում» բառը:

Մրցույթի մասնակցության հայտերի ընդունման վերջնական ժամկետի ավարտից հետո (մինչեւ 6.3 կետում նշված ժամկետի լրանալուց հետո) ներկայացված հայտի փոփոխության կամ հետ վերադարձման դիմումները ենթակա չեն քննարկման:

4.4. Մրցույթի մասնակիցների՝ մրցութային պայմաններին համապատասխան ներկայացրած առաջարկությունները պետք է արտահայտված լինեն թվային ցուցանիշներով եւ փոքր չլինեն ՀՀ կառավարության կողմից սահմանված նվազագույն արժեքից (տես 4.12 կետը):

4.5. Մրցույթին ներկայացվող փաստաթղթերը ներկայացվում են տպագիր կամ պարզ ընթեռնելի ձեռագրով:

Մրցութային առաջարկները ներկայացվում են հայերեն լեզվով, իսկ օտար լեզուներով գրված փաստաթղթերը կարող են ուղեկցվել թարգմանություններով: Թարգմանությունների բացակայության դեպքում փաստաթղթերը կդարձվեն հանձնաժողովի կողմից:

4.6. Ծրարը պետք է հագեցված լինի մրցութային հանձնաժողովին՝ նշելով մասնավորեցվող օբյեկտի անվանումը եւ մրցույթի ծածկագիրը (ծածկագիր՝ 1047-Ա-2):

4.7. Մրցութային առաջարկները կարող են ընդունվել նաեւ ֆաքսիմիլային կապով: Ստացված փաստաթղթերը ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությունում դրվում են ծրարի մեջ եւ փակվում:

Ներկայացված ծրարները ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության կողմից կնքվում եւ մուտագրվում են:

4.8. 6.3 կետում նշված ժամկետի լրանալուց հետո ներկայացված առաջարկները չեն ընդունվում:

4.9. Մրցույթի հայտը գրանցվում է հատուկ գրանցամատյանում՝ հայտատուին տալով ստացական մրցույթի մասնակցության հայտը ընդունելու վերաբերյալ:

4.10. Մրցույթի հայտատուները 6.2 կետում նշված հատուկ հաշվին մուծում են մրցույթի մասնակցության նախավճար 6.1 կետում նշված գումարի չափով:

Մրցույթում հաղթող ճանաչված մասնակցի նախավճարն ընդգրկվում է մասնակցի կողմից առաջարկված գույքի մասնավորեցման (օտարման) գնի մեջ: Մրցույթում հաղթող ճանաչված մասնակցի (կամ նրա լիազոր ներկայացուցչի) կողմից մրցույթի արդյունքների արձանագրությունը չստորագրելու, հետագա վճարումները չկատարելու եւ (կամ) պայմանագիր չկնքելու դեպքերում նախավճարը չի վերադարձվում եւ մասնավորեցումը համարվում է չկայացած:

Մրցույթում հաղթող չճանաչված մասնակիցները, ինչպես նաեւ մասնակցի կարգավիճակ չստացած հայտատուները, մրցույթի մասնակցության նախավճարի վերադարձման նպատակով պետք է դիմեն ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությանը:

Հայտային վաղեմության ընդհանուր ժամկետում մրցույթում հաղթող չճանաչված հայտատուի (կամ նրա լիազոր ներկայացուցչի) կողմից համապատասխան դիմում չներկայացնելու դեպքում մրցույթի մասնակցության նախավճարը հաշվանցվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի համապատասխան հաշվին:

4.11. Մրցույթի պահանջներին մրցութային առաջարկի անհամապատասխանության դեպքում մրցութային առաջարկ ներկայացրած սուբյեկտին մրցույթի մասնակցի կարգավիճակ չի տրվում եւ մրցութային առաջարկը հանվում է հետագա քննարկումից:

4.12. Մրցույթի հաղթողի որոշման համար առաջադրվում են հետեւյալ պայմանները.

օտարվող գույքի համար առաջարկվող գինը (նվազագույն գինը՝ 10 199.04 հազ. դրամ),

ներդրումների չափը՝ առաջիկա 3 տարվա կտրվածքով:

4.13. Մրցույթի հաղթող է ճանաչվում այն մասնակիցը, որի առաջարկը առավելագույն չափով է բավարարում մրցույթի պայմաններին:

4.14. Մրցույթում հաղթողին է անցնում շենքի տակ գտնվող հողամասի նկատմամբ ընդհանուր բաժնային սեփականության իրավունքը՝ մրցույթի հաղթողի բաժինն ընդհանուր բաժնային սեփականության հողամասի նկատմամբ որոշելով մրցույթի հաղթողին օտարվող գույքի մակերեսի հարաբերությամբ շենքի ամբողջ տարածքների մակերեսների գումարին՝ արտահայտված կոտորակով:

5. Վճարումներ եւ պայմանագրի կնքում

5.1. Մրցույթի հաղթողը 10-օրյա ժամկետում ստանում է մրցույթի արդյունքների հաստատված արձանագրության օրինակը: Մրցույթի մյուս մասնակիցները կարող են ստանալ արձանագրության պատճենները:

5.2. Մրցույթի հաղթողը գույքի վաճառքի գումարը մրցույթի հաղթողը գույքի գինը պետք է վճարի մրցույթի արձանագրի գնի 70%-ն ուղղելով «Պետական սեփականություն հանդիսացող հիմնական միջոցների (ֆոնդերի) օտարումից մուտքեր» գանձապետական հաշվին, 30%-ը Երեւանի խաղատեղատարածքի այդ նպատակով բացված հատուկ հաշվին, իսկ ընդհանուր բաժնային սեփականության հողամասի իր բաժնի կադաստրային արժեքը՝ «Պետական սեփականություն հանդիսացող հողի վաճառքից մուտքեր» գանձապետական հաշվին:

5.3. Համաձայն ՀՀ կառավարության 2006թ.-ի հուլիսի 27-ի թիվ 1047-Ա որոշման՝ օտարման պայմանագրում պետք է նախատեսվի, որ.

օտարվող գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման եւ գույքի արժեքի որոշման հետ կապված վճարները եւ տուրքերը կատարվում են գնորդի հաշվին՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: Գույքի արժեքի որոշման հետ կապված վճարը սահմանվել է 796800 դրամ:

5.4. Մրցույթով մասնավորեցման արդյունքում գնորդը հանդիսանում է նաեւ գնահատման պահից հետո առաջացած իրավունքների եւ պարտավորությունների իրավահաջորդը:

5.6. Վճարումները կատարվում են ՀՀ արժույթով:

5.7. Սահմանված ժամկետում վճարումները չկատարելու դեպքում մրցույթի հաղթողի վճարած նախավճարի գումարը նրան հետ չի վերադարձվում, եւ մրցույթը համարվում է չկայացած:

6. Մրցույթի անցկացման այլ պայմաններ

6.1	Մրցույթի նախավճարի չափը	509992 հազ. դրամ
6.2	Մրցույթի նախավճարի մուտագրման հատուկ հաշիվը	Թիվ 1 տեղական գանձապետական բաժանմունք դրամային - 900013145017
6.3	Մրցութային առաջարկի ներկայացման վերջին ժամկետը	2006 թվականի դեկտեմբերի 22-ը, ժամը՝ 13:00
6.4	Մրցութային առաջարկի ներկայացման վայրը	ք.Երեւան, Տիգրան Մեծի 4, ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն,438 սենյակ
6.5	Մրցույթի անցկացման օրը, ժամը եւ վայրը	2006 թվականի դեկտեմբերի 26ա-ը, ժամը՝15:00 ք.Երեւան, Տիգրան Մեծի 4, ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն
6.6	Ֆաքսիմիլային կապ	(37410) 581441
6.7	Ինտերնետ	URL: //www.privatization.am

7. Գույքը մրցույթով չվաճառվելու դեպքում նոր մրցույթների անցկացումը

7.1 Գույքը մրցույթով չվաճառվելու դեպքում այն վաճառելու նպատակով կազմակերպվում է նոր մրցույթներ 1-6 կետերում նշված կարգով եւ հետեւյալ պայմաններով.

Մրցույթի անցկացման օրը եւ ժամը	Մրցութային առաջարկի ներկայացման վերջին ժամկետը	Օտարվող գույքի նվազագույն գինը (հազ. դրամ)	Մրցույթի նախավճարի չափը (դրամ)
2006 թվականի նոյեմբերի 14, ժամը 15:00	2006 թվականի նոյեմբերի 10, ժամը 13:00	24900	1245
2006 թվականի նոյեմբերի 28, ժամը 15:00	2006 թվականի նոյեմբերի 24, ժամը 13:00	15 936,00	796 800
2006 թվականի դեկտեմբերի 12, ժամը 15:00	2006 թվականի դեկտեմբերի 8, ժամը 13:00	12 748,80	637 440
2006 թվականի դեկտեմբերի 26, ժամը 15:00	2006 թվականի դեկտեմբերի 22, ժամը 13:00	10 199,04	509 952
2007 թվականի հունվարի 16, ժամը 15:00	2007 թվականի հունվարի 12, ժամը 13:00	8 159,23	407 962
2007 թվականի հունվարի 30, ժամը 15:00	2007 թվականի հունվարի 26, ժամը 13:00	6 527,39	326 369
2007 թվականի փետրվարի 13, ժամը 15:00	2007 թվականի փետրվարի 9, ժամը 13:00	5 221,91	261 095
2007 թվականի փետրվարի 27, ժամը 15:00	2007 թվականի փետրվարի 23, ժամը 13:00	4 177,53	208 876
2007 թվականի մարտի 13, ժամը 15:00	2007 թվականի մարտի 9, ժամը 13:00	3 342,02	167 101
2007 թվականի մարտի 27, ժամը 15:00	2007 թվականի մարտի 23, ժամը 13:00	2 673,62	133 681

Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն՝ 581441 հեռախոսահամարով:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆԸ ՀՐԱՎԻՐՈՒՄ Է ԱՃՈՒՐԴԻ, ՈՐԸ ՏԵՂԻ ԿՈՒՆԵՆԱ «ԱՃՈՒՐԴԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՈՒՄ, ՀԱՍՑԵՆ՝ Ք. ԵՐԵՎԱՆ, Դ.ԱՆՀԱՂԹԻ 23 /4-ՐԴ ՀԱՐԿ/
ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

«Ֆյունիկ» ՓԲԸ-ի լուծարումից հետո մնացած շարժական գույքը

N	Գույքի անվանումը	Գույքի գտնվելու վայրը	Քանակը (հատ)	Գնահատ. արժեքը /դրամ/	Վերջին աճուրդի մեկն.գինը /դրամ/	03.11.06թ. աճուրդի մեկնարկ. գին /դրամ/	20.11.06թ. աճուրդի մեկնարկ. գին /դրամ/	05.12.06թ. աճուրդի մեկնարկ. գին /դրամ/	20.12.06թ. աճուրդի մեկնարկ. գին /դրամ/	04.01.07թ. աճուրդի մեկնարկ. գին /դրամ/	19.01.07թ. աճուրդի մեկնարկ. գին /դրամ/	05.02.07թ. աճուրդի մեկնարկ. գին /դրամ/
1	Շաղախման հանգույց	ք.Վանաձոր, Բազումի 1 ա	1	8200630	2050157	1640126	1476114	1328503	1195653	1076088	968480	871632

Աճուրդները կանցկացվեն դասական (գնի ավելացման) եղանակով:

Բոլոր աճուրդները սկսվում են ժամը 12:30-ին «Աճուրդի կենտրոն» պետական ոչ առեւտրային կազմակերպությունում (հասցեն՝ ք.Երեւան,Դ.Անհաղթի 23 /4-րդ հարկ):

Աճուրդով չվաճառված գույքի մեկնարկային գինը յուրաքանչյուր հաջորդ աճուրդի ժամանակ նվազեցվում է վերջին աճուրդի գույքի մեկնարկային գնի 10 տոկոսի չափով: Տվյալ լոտի աճուրդը կայանալու դեպքում հաջորդ աճուրդ(ներ)ը չի (չեն) անցկացվում:

Աճուրդին կարող են մասնակցել մասնակցության իրավունք ձեռք բերած մասնավորեցման սուբյեկտները կամ նրանց կողմից լիազորված անձինք:

Աճուրդին մասնակցելու իրավունք են ձեռք բերում մասնավորեցման այն սուբյեկտները, որոնք յուրաքանչյուր աճուրդի համար մինչեւ աճուրդի նախորդող աշխատանքային օրը, ժամը 17:00 աճուրդային հանձնաժողովին են (հասցեն՝ ք. Երեւան, Դ.Անհաղթի 23 /4-րդ հարկ) ներկայացրել.

- աճուրդի մասնակցության հայտը,
- աճուրդի մասնակցության վճարի անդորագիրը՝ առաջին աճուրդի մասնակցության վճարի չափն է՝ 82006 դրամ, մուտագրման հաշիվն է՝ թիվ 1 տեղական գանձապետական բաժանմունքի աճուրդի մասնակցության նախավճարի դրամային թիվ 900013145025 հաշիվը (յուրաքանչյուր հաջորդ աճուրդի համար աճուրդի նախավճարը հաշվարկվում է տվյալ աճուրդի մեկնարկային գնի 5 տոկոսի չափով,
- իրավաբանական անձինք ներկայացնում են հիմնադիր փաստաթղթերի պատճենները:

Աճուրդի մասնակիցները պետք է ձեռք բերեն աճուրդի մասնակցի տոմս, որի գինն է 5000 դրամ, աճուրդի մասնակից չհամարվող անձանց (դիտորդների) տոմսի գինն է 3000 դրամ:

Մասնակիցների անձնագրի առկայությունը պարտադիր է:

Նախքան աճուրդի սկսվելը աճուրդային հանձնաժողովը գրանցում է մասնակիցներին եւ յուրաքանչյուր մասնակցին տրամադրում է քարտ:

Աճուրդը անցկացնում է աճուրդավարը, որը հրապարակում է վաճառվող գույքը բնութագրող ցուցանիշները, գույքի մեկնարկային գինը, աճուրդային քայլի չափը: Աճուրդի մասնակիցը բարձրացնում է իր տոմսին համապատասխանող համարը, որով տալիս է իր համաձայնությունը հայտարարված գնով գույքը ձեռք բերելու մասին: Յուրաքանչյուր գնորդ կարող է գույքի գինն ավելացնել մեկ կամ մեկից ավելի քայլերով կամ կողմից առաջարկված գինը 3-րդ անգամ հայտարարելուց հետո, համարվում է աճուրդի հաղթող եւ պարտավոր է 30 րոպեի ընթացքում ներկայացնել մասնակցի տոմսն ու վճարել իր առաջարկած գնի առնվազն 5 տոկոսի չափով գումար եւ ստորագրել աճուրդի մասին արձանագրությունը: Վերը նշված պարտավորությունները չկատարելու դեպքում նրա մուծած մասնակցության վճարը չի վերադարձվում եւ նա զրկվում է աճուրդին մասնակցելու իրավունքից եւ դուրս է հրավիրվում դահլիճից: Այդ դեպքում գույքի աճուրդը վերսկսվում է մեկնարկային գնից:

Աճուրդի մասին արձանագրությունը ստորագրելուց հետո, որպես աճուրդում հաղթող ճանաչված մասնակից, նրան տրվում է վճարման հանձնարարագիր՝ մնացած վճարման ենթակա գումարը սահմանված ժամկետում՝ 10 օրվա ընթացքում վճարելու համար: Սահմանված ժամկետում նշված վճարումը չկատարելու դեպքում իր կողմից վճարած մասնակցության վճարը եւ իր առաջարկած գնի առնվազն 5%-ի չափով գումարը հետ չի վերադարձվում, իսկ աճուրդը համարվում է չկայացած:

Գույքին ծանոթանալու համար զանգահարել Ս.Կոտոյանին, ք.Վանաձոր 5-83-73 հեռախոսահամարով:

Վճարումները կատարվում են Հայաստանի Հանրապետության արժույթով: Լրացուցիչ տեղեկությունների համար (յուրաքանչյուր աճուրդի նախավճարի չափի մասին) կարող եք դիմել ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության «Աճուրդի կենտրոն» պետական ոչ առեւտրային կազմակերպություն, զանգահարել 23-73-00 հեռախոսահամարով, ինտերնետ՝ URL: //www.privatization.am:

Հնարավոր փոփոխությունների ու լրացումների մասին տեղեկությունը կհրապարակվի այն դեպքում, ինչպես կատարվել է աճուրդների մասին սույն հրապարակային ծանուցումը:

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն

Երգարվեստ

Վոկալական ձայնի հմայքը

ՆԱՏԱԼՅԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Բարսեղ Թումանյանի երգեցիկ արվեստն այն եզակի երեւույթներից է, երբ վարպետորեն մշակված հզոր, ծավալուն, հարուստ եւ ճկուն ձայնը, զուգակցվելով բարձր արհեստականության եւ ինտելեկտի հետ, տվել է մշակութային մեծ արժեք ներկայացնող բացառիկ երեւույթ:

Լինելով մեր ժողովրդի ամենասիրված երգիչներից մեկի՝ պրոֆ. Արշավիր Կարապետյանի սանը, Բարսեղ Թումանյանը սկսել է երգել Երեւանի Ալ.Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի թատրոնի բեմում դեռեւս 1980-ական թվականին եւ արդեն այն ժամանակ հայտագրերի վրա նրա անունը աղահովում էր լեցուն դահլիճ: Սակայն ամենաբարձր չափանիշների ձգտող երգիչը, իր մասնագիտական գիտելիքներն ու հմտությունները էլ ավելի հղկելու, կատարելագործելու ձգտումով հաջորդաբար ծանոթացավ եւ տիրապետեց Միլանի Լա Սկալայի (1982-83 թթ.) եւ, այնուհետեւ, Մոսկվայի կոնսերվատորիայի երգեցիկ դպրոցների ավանդույթների հետ: Ուսանելով չափազանց խստապահանջ Կարլո Բերգոնցիի, Զուլիետա Սիմոնատայի եւ Եվգենի Նեստերենկոյի դասարաններում, նա ոչ միայն կուլ չգնաց ակադեմիական կրթությանը, այլ, լինելով հզոր անհատականություն, կարողացավ նոր փայլ եւ խորություն հաղորդել իր արտահայտիչ կատարումներին, թույլ չտալով, որ տեխնիկական անթերիությունը ճնշի իր մտքի եւ երեւակայության թռիչքը: Զարմանալի չէ, որ այնուհետեւ նրա ձայնի ազնվական հնչեղանգը մեծ արձագանք գտավ աշխարհի գրեթե բոլոր ծայրերում. սկսած լոնդոնյան Կովենտ-Գարդեն թագավորական թատրոնից, ուր դեռ 1989 թ-ից նա գտավ հիանալի ընդունելություն, մինչեւ Եվրոպայի (Փարիզ, Մյունխեն, Համբուրգ, Վիեննա, Բոնն, Ամստերդամ), Հարավային (Բուենոս-Այրես) եւ Հյուսիսային Ամերիկայի (Նյու-Յորք, Վաշինգտոն, Բոստոն, Պրովիդենս, Մոնրեալ, Տորոնտո), ինչպես նաեւ Ավստրալիայի (Սիդնեյ, Մելբուռն) քաղաքների բեմերը:

▼▼▼

Երգչի հերթական համերգը դաշնակահար Լեւոն Զավադյանի ընկերակցությամբ կայացավ Բեռլինի Ֆիլարմոնիայի Կամերային դահլիճում նոյեմբերի 11-ին: Տեսագրության շնորհիվ «ներկա գտնվելով» այդ համերգին, կարող եմ վկայել ջերմ եւ հագեցված փոխըմբռնման մթնոլորտի մասին, որ գոյացել էր համերգի ընթացքում երկու հայ երաժիշտների եւ բեռլինյան երաժշտասերների միջեւ: Երեւի, հնարավոր չէ խոսքերով վերարտադրել Հերբերտ ֆոն Կարայանի ոգով ներթափանցված վեցանկյունաձեւ բեռլինյան ֆիլարմոնիկ կամերային դահլիճի բեմը՝ շրջապատված բոլոր կողմերից դեպի վեր ուղղված նույնպես վեցանկյունաձեւ ամֆիթատրոնով: Մանավանդ, երբ քո իսկ արտիստական հանդերձարանի դռան վրա ամրացված հատուկ տախտակը հիշեցնում է հանճարեղ դիրիժորի անունը, եւ երբ գիտես, որ հենց այդ նույն պահին ֆիլարմոնիայի հարակից Մեծ դահլիճում նվագում է նրա ղեկավարման տարիներին լեգենդ դարձած բեռլինյան սիմֆոնիկ նվագախումբը՝ այժմ արդեն հրավիրված Սայմոն Ռեթթլի ղեկավարությամբ: (Իմիջիայլոց, նույնիսկ ֆիլհարմոնիայի շենքը Հերբերտ ֆոն Կարայան շրջան 1 հասցեով կարելի է գտնել):

Կարելի է կռահել, թե ինչպիսի գերագույն պահանջմունքի մթնոլորտ էր դա, որի դաշտում յուրաքանչյուր արտիստ ներքուստ կազմակերպվում եւ միաժամանակ, հսկայական ուժ եւ ստեղծագործական ազատություն է ստանում: Եվ, հենց Հենդելի «Il mio caro» արիայի առաջին նոտայից վեհաշունչ, ջերմ եւ ներքին դրամատիզմով հագեցված տոնը պահպանվեց ողջ համերգի ընթացքում՝ ամեն մի նոր երգի եւ օպերային կերպարի հետ հարստանալով նորանոր իմաստային երանգներով: Համերգի առաջին բաժնում հնչեցին Շուբերտի «Կարպի երգեր» վերջին երգաշարից խոր ողբերգական «Երկնմանակն», որից հետո բուռն-տարերային «Հանգրվանը» լարվածության զգալի թեթեւացում բերեց: Այդ՝ Չայկովսկու «Օրհնում եմ ձեզ, անտառներ» ռոմանսը եւ արիաներ Ռուբինշտեյնի «Դեմոն», Ռախմանինովի «Ալեկո» պուշկինյան ռոմանտիկ օպերաներից: Առաջին բաժինը ավարտվեց Մուսորգսկու «Լու» երգով, որի դառը երգիծանքը ժամանակի ընթացքում ոչ միայն չի կորցրել իր արդիականությունը, այլեւ է՛լ ավելի է աճել...

Համերգի երկրորդ բաժինը նշանավորվեց Կոմիտասի «Անտունի» մեներգով: Հատկանշական է, որ երգիչը, խիզախելով ընտրել է դաշնամուրային նվագակցությունից զատ այնպիսի նոր միասնական եւ բազմազան հնչողություններ հայտնաբերել նրանում, որ այդ ոչ այնքան ծավալուն երգի նեայդ ոչ այնքան ծավալուն երգի նեայդ ոչ այնքան ծավալուն երգի նեայ

Տեսակետ-առաջարկ

«Հայոց լեզու եւ գրականություն» առարկայից ֆնության թեստերի փորձարկման արդյունքները

Հայոց լեզուն եւ գրականությունը հանրակրթության հայասանի անկախության տարիներին հաճախ են դարձել փորձության առարկա. Պարույր Սեւակի բանաձեւած ժողովրդական ասույթը՝ «Հայոց լեզուն հո որքի գլուխ չէ՞, որ ամեն մեկը մկրատն առած վրան վարսավիրություն սովորի», այսօր դարձել է ցավալի իրականություն: Կրթակարգի փոփոխությունը՝ դրանից բխող լավ կամ վատ հետեւանքներով, հասկանալի է, բայց ինչո՞ւ ենք պետական կառույցներն ու մենք, աչքներս բաց, այսօր մերժում մեր ունեցածը եւ ընդունում մի բան, որի համար վաղը գլուխներս ենք ծեծելու: Միշտ կողմ ենք եղել վաղը, թերին լավով ու կատարյալով փոխարինելուն: Իսկ հիմա ինչը ինչով ենք փոխարինում:

Սիա գործընթացի մեջ են ՀՀ ԿԳ նախարարության՝ գիտելիքների գնահատման եւ թեստավորման կենտրոնի հանձնարարությամբ կազմված թեստերը, որոնք արդեն փորձարկվել են Երեւանի եւ մարզերի մի շարք դպրոցներում: Եթե հարցնեք դրանք կազմողներին եւ փորձարկողներին, կասեն՝ ամեն ինչ հրաշալի է. կան մանր թերություններ, որոնք կվերացվեն հետագայում: Կասեն, որովհետեւ ամեն ինչ արել են թախուն, սահմանափակ ուսուցչական կազմով, որն ամենեւին էլ հանրապետության ուսուցչության կարծիքը ներկայացնել չէր կարող, արել են առանց լուրջ մասնագիտական ֆնարկման, առանց դպրոցում տեւականորեն փորձարկելու: Դժվար չէ պատկերացնել, թե ինչ անակնկալ է մատուցվելու շրջանավարտ-դիմորդին, եթե ողջամտությունը կորցրած որոշ պաշտոնատարներ որոշեն հենց այս տարվանից կիրառել այն:

Ինչ է տացվել. 50 հարց պարունակող Ա մակարդակի թեստերը նախատեսված են միայն դպրոցի շրջանավարտների համար, իսկ 10 հարցերից բաղկացած Բ մակարդակը, նախորդի հետ միասին, միասնական ֆնություն հանձնող դիմորդների համար: Դրանց միջեւ, սակայն, էական տարբերություն չկա. մինչդեռ տրամաբանական կլիներ, որ Ա մակարդակն ընդգրկեր միջին բարդության նյութ, իսկ Բ մակարդակ՝ ավելի բարդ նյութ: Սրա դիմաց երկու մակարդակներում կան կրկնվող հարցեր՝ Ա 22, Ա 40, Ա 43, Բ 4, Բ 7 եւ այլն:

Փորձնական ֆնությունն իրականացվել է դպրոցներում. Ա մակարդակի արդյունքները ստուգել է համակարգիչը եւ գնահատել 50 միավորի սահմաններում: Բ մակարդակը հնարավոր չէր համակարգիչով ստուգել (կոռուպցիան մյուսներ չի՞ կարող սողոսկել), ուստի միտի ստուգելին մասնագետները եւ գնահատելին 40 միավորի սահմաններում: Սիա այս վերջին փոխում են թեստերը կազմողների եւ շուրջ երկու տասնյակ ուսուցիչների հետ ներգրավվել նաեւ Երեւանի պետական համալսարանի հինգ մասնագետները, որոնց կարծիքն էլ ներկայացնում ենք հանրության ուշադրությանը:

Առաջին տպավորությունն այն է, որ շահագրգիռ անձինք ամեն ջանք գործադրում են այս անկատար ու անհաս ֆնակարգը ներդնելու համար՝ հաշվի չառնելով ոչ դպրոցի պատրաստվածությունը, ոչ աշակերտի գիտելիքները, ոչ հայոց լեզվի ու գրականության եւ ազգային դպրոցի շահը: Եվրոպականացման ու արդիականացման անվան տակ նպատակասլաց իրականացվում է հայոց լեզվի եւ հայ գրականության փոշիացում, որի տխուր հետեւանքները հետո անկարելի պիտի լինի շտկել:

Թող սխալ չհասկացվի. մենք ֆնակարգի փոփոխությանը, ֆնության ու գնահատման առաջավոր ձեւերի ներդրմանը դեմ չենք, սակայն վճռաբար դեմ ենք հարմեցությանը, այս որակին ու մակարդակին: Վերջին տարիներին գործածության մեջ եղած հայոց լեզվի հարցաշարերի շտմարանից դժգոհողները նրա դիմաց պիտի դնեին հայոց լեզվի եւ գրականության գիտելիքները համակողմանիորեն ստուգող եւ արդարացիորեն գնահատող ֆնակարգ, մինչդեռ թեստերի այս մակարդակն ու որակը շատ են զիջում նախորդին, ուղղակի նահանջ են մի քանի քայլով: Ճիշտ է, հայ գրականությունն այդ շտմարանում չկար, որ շատ կոպիտ ու ճակատագրական սխալ էր, բայց նրանով գոնե հայոց լեզվի ուղղագրությունը, կետադրությունը, բառակազմությունը, իմաստաբանությունը, ձեւաբանությունը, շարահյուսությունը, ոճաբանական որոշ իմացություններ աշակերտության կողմից յուրացվում եւ նախորդ ֆնությանն ու նրա ստուգմանը, ուր, ինչպես համոզվեցինք, կամայականություններն անվերահսկելի են եղել եւ այդպես էլ մինելու են, հանի որ գրավոր աշխատանքները հիմնականում ստուգել ու գնահատել են հենց թեստ կազմողները եւ նախագահի ընտրած ուսուցիչները: Իսկ կրկնական ու փորձագիտական ստուգումներն էլ հիմնականում կատարվել են նրանց ձեռքով, եւ վերջին դեպքերում փոխանակ ուսուցիչների գնահատածները համալսարանականներին տալու կրկնական կամ փորձագիտական ստուգման, համալսարանականների ստուգածներն էին ուսուցիչներին տալիս կրկնական կամ փորձագիտական ստուգման:

Նկատվեց, որ Բ մակարդակում աշակերտները միշտ թե շատ բառագիտական առաջադրանքներն են «կատարել»՝ կազմողների շրջանի չափանիշների շնորհիվ «վստակելով» 20-23 միավոր, որ, գումարվելով համակարգչի շնորհած 40-50 միավորին, արդեն դառնում է անցողիկ շուրջ 70 միավոր: Սիա ինչու են թեստերը կազմողներն ու փորձարկողները ասում՝ բռաՀվո, ամեն ինչ հաջող է, ֆնակարգն արդարացնում է իրեն. պիտի ներդնենք: Իսկ մյուս առաջադրանքներն աշակերտները շատերին զրկում ենք մատչության տառերով գրելու, հայ գրին տիրապետելու եւ հայերեն մտածելու ունակությունից, հանի որ տառ կամ բառ գրելու փոխարեն նա պիտի Ա մակարդակի ձեւաթղթի պահանջվող վանդակում ընդամենը խաչ (X) դնի, երկրորդ՝ այդ «ավտոմատացումը» անհամեմատ կդյուրացնի հուշելու եւ կեղծելու գործը: Շահագրգիռ անձը կարող է նույնիսկ մատների տարբեր զուգորդումներով ֆնաստենյակում հուշել առաջադրանքի թիվն ու ճիշտ պատասխանի համարը, այսինքն՝ միավոր բերող խաչերի ճիշտ տեղը: Վերջապես, աշակերտ-դիմորդի փոխարեն ձեւաթղթն իրենք կարող են լրացնել այնպես, որ ոչ մի ձեռագրական փորձագետ չկարողանա զանազանել, որովհետեւ ձեռագիր չկա: Իսկ համակարգիչն էլ ստուգում է ոչ թե աշակերտ - դիմորդի բուն գրավոր աշխատանքը, այլ ձեւաթղթի վանդակներում դրված խաչերը միայն: Կարելի է պատկերացնել, թե մի լավ լրացված ձեւաթղթով քանի՞ աշակերտ - դիմորդի կարելի է «շնորհել» ցանկալի գնահատական (իհարկե, հետո հայտնված շահագրգիռ անձինք իրենց ուզած, նաեւ «ձախ» կամ կողմնակի, ձեւաթղթի վանդակներում անհրաժեշտ խաչերը ճիշտ կդնեն, սակայն մտահոգիչ է, թե աշակերտ - դիմորդն ինքը այդ ճակատագրական խաչերը ձեւաթղթում ճի՞շտ կտեղադրի, թե՞ սխալ, չէ՞ որ աշակերտին ուղղված հրահանգում հստակ գրված է. «Ձեւաթղթում պատասխանների ճիշտ լրացումից է կախված Ձեր ավարտական ֆնության միավորը»):

Բ մակարդակի առաջադրանքները թեեւ պարունակում են գրավոր հանձնարարականներ, բայց ստուգված հազարավոր գրավորները ցույց տվին, որ Բ1, Բ2, Բ3, Բ4, Բ7 առաջադրանքների պատասխանները պարտադրաբար աշակերտների կողմից նույնացվում են: Այսինքն՝ նրանց հուշողների «բարեգործությունը» դարձել է իսկական չարագործություն, որովհետեւ ամենապարզ արտագրության դեպքում էլ անտեղյակ աշակերտը ցուցադրում է իր չիմացությունը: Նկատի ունենք այն, որ անգամ ճիշտ հուշվածը աշակերտները գրել են կոպիտ տառասխալներով: Իսկ ինչո՞վ կբարեհաճեն բացատրել այն իրողությունը, որ համեմատաբար բարդ առաջադրանքներ կատարած աշակերտները չեն կատարել ամենապարզ առաջադրանքները:

Ի տարբերություն հանձնաժողովի նախագահի եւ նրա թիմակից թեստեր կազմող ուսուցիչների՝ համալսարանական ստուգողներս այդպես էլ չտեսանք Ա մակարդակի որեւէ ոչ գրավոր աշխատանք, ոչ էլ դրա ձեւաթղթի՝ համակարգչով ստուգված ու գնահատված տարբերակ: Իսկ դա նշանակում է՝ մենք անտեղյակ ենք արդեն իրականացված ֆնությանն ու նրա ստուգմանը, ուր, ինչպես համոզվեցինք, կամայականություններն անվերահսկելի են եղել եւ այդպես էլ մինելու են, հանի որ գրավոր աշխատանքները հիմնականում ստուգել ու գնահատել են հենց թեստ կազմողները եւ նախագահի ընտրած ուսուցիչները: Իսկ կրկնական ու փորձագիտական ստուգումներն էլ հիմնականում կատարվել են նրանց ձեռքով, եւ վերջին դեպքերում փոխանակ ուսուցիչների գնահատածները համալսարանականներին տալու կրկնական կամ փորձագիտական ստուգման, համալսարանականների ստուգածներն էին ուսուցիչներին տալիս կրկնական կամ փորձագիտական ստուգման:

Նկատվեց, որ Բ մակարդակում աշակերտները միշտ թե շատ բառագիտական առաջադրանքներն են «կատարել»՝ կազմողների շրջանի չափանիշների շնորհիվ «վստակելով» 20-23 միավոր, որ, գումարվելով համակարգչի շնորհած 40-50 միավորին, արդեն դառնում է անցողիկ շուրջ 70 միավոր: Սիա ինչու են թեստերը կազմողներն ու փորձարկողները ասում՝ բռաՀվո, ամեն ինչ հաջող է, ֆնակարգն արդարացնում է իրեն. պիտի ներդնենք: Իսկ մյուս առաջադրանքներն աշակերտները զանգվածաբար չէին կատարել. պատճառը. շատերը առաջադրված հարցն անգամ չէին հասկացել, դրա համար էլ մի քանիսն անկեղծորեն գրել էին. «Էս ինչ տուֆտա հարց եք տալիս»: Իսկ **«Համառոտագրեցեք պրոֆեսոր բառը» հարցին շատերը պատասխանել էին՝ բանիմաց, գիտուն մարդ: Մեկը նույնիսկ գրել էր. պրոֆ - արմաս, եսոր - ածանց**:

Մի խայտառակ շրջադարձ էլ է աչքի զարնում՝ հարցերի եւ առաջադրանքների ոչ մասնագիտական անհեթեթ ձեակերպումները, որոնցից սատանան էլ գլուխ չի հանի: Օրինակ՝ ինչպե՞ս աշակերտ-դիմորդը հասկանա եւ կատարի հետեւյալ պահանջները.

Ա 46. Ներդրված ի՞նչ միավորներ են թավ գրվածները.

Արծի՛վ, սե՛գ արծիվ, թոցրո՛ւ ինձ քեզ հետ,
Տա՛ր ինձ հարազատ դաշտերն հեռավոր:

Ի՞նչ նկատի ունեն կազմողները եւ ի՞նչ պատասխան են պահանջում:

Ա 35. Նշվածներից ո՞րն է միտիկ գրող.
Ֆրիկ
Գրիգոր Նարեկացի
Նահապետ Քուչակ
Ներսես Շնորհալի

Նախ՝ այս հարցի պատասխանը կազմողն ինքը գիտի՞: Եթե աշակերտ- դիմորդը Գրիգոր Նարեկացու փոխարեն ընտրի Ներսես Շնորհալի՝ նկատի ունենալով նրա «Հիսուս որդի» կրոնամիստիկական պոեմը, կամ ընտրի Ֆրիկ՝ նկատի ունենալով նրա հոգեւոր բանաստեղծությունները, պիտի սխա՞լ համարեն:

Ա 43. **Հովի. Թումանյանի ո՞ր պոեմում է արծարծվում (փոխանակ արծարծված) կյանքի անցողիկության եւ գործի անմահության գաղափարը.**

«Հառաչանք»
«Անուշ»
«Թմկաբերդի առումը»
«Լոռեցի Սաֆոն»

Իհարկե, համեմատաբար ճիշտ պատասխանը 3-ը է, բայց ո՞վ կարող է պնդել, թե նույն գաղափարը չկա մյուս գործերում, ասենք, «Անուշում»:

Ա 36. **Ո՞վ է այս քառատողի հեղինակը.**

Երբ սերն ի յաշխարհ եկաւ,
Եկավ իմ սիրտս բնակեցաւ,
Ապա յիմ սրտէ ի դուրս՝
յերկրէ յերկիր թափեցաւ:

Ո՞ր է քառատողը, չէ՞ որ սա ֆուչկյան հայրենի երկու տողն է միայն:

Ա 35. **Ո՞ր ստեղծագործության մեջ է պատկերված հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարը արաբական տիրապետության դեմ.**

«Ողբ Եդեսիո»
«Սամվել»
«Սասունցի Դավիթ»
«Հայոց պատմություն»

Ո՞ւմ «Հայոց պատմությունը» նկատի ունեն կազմողները՝ Ագաթանգեղոսի՞, Բուզանդի՞, Խորենացո՞ւ, Փարպեցո՞ւ... Իսկ եթե աշակերտ - դիմորդն ընտրի Հովհաննես Դրասխանակերտցու «Հայոց պատմությունը», ուր իրոք պատկերված է հայ ժողովրդի ազգային - ազատագրական պայքարը արաբական տիրապետության դեմ, եւ որի փաստերի հիման վրա Մուրացանը գրել է «Գեւորգ Մարզպետունի» վեպը, ինչպե՞ս են սխալ համարելու:

Ինչպես տեսնում ենք, նման հարցերը (իսկ դրանք դժբախտաբար շա՞տ - շատ են) թեստերում ներդրել են հայ գրականությունից գրեթե անտեղյակ մարդիկ:

Գրագիտության երկու կարեւոր բաղադրիչները՝ ուղղագրությունն ու կետադրությունը, ստուգվում են միայն երկու-երեք օրինաչափությունների վերաբերող առաջադրանքներով, որոնց ճշգրիտ պատասխանների դեպքում անգամ հնարավոր չէ ամբողջական պատկերացում կազմել դիմորդի գիտելիքների մասին: Մինչդեռ ուղղագրության եւ կետադրության իմացությունն է գրագետ մարդուն տարբերակում կիսագրագետից եւ անգրագետից: Համեմատաբար դեպքս, «Որ նախադասությունների առաջին բառի վրա օրենքով պետք է բութ դրվի» կամ «Որ նախադասության մեջ եւ կամ ու շաղկապից առաջ ստորակետ պետք է դրվի» հարցերով չի կարող լուծվել կետադրության ստուգման խնդիրը:

Պետք է հաշվի առնել եւ այն իրողությունը, որ այսօր գնալով ավելի ու ավելի փոքր մարդիկ են կարողանում գրավոր հակիրճ շարադրանք ներկայացնել, փոքր դա դիմում, տեղեկանք թե ինքնակենսագրություն: Ներդրվող այս մակարդակի թեստային ֆնակարգը հայ սերունդներին էլ ավելի կհեռացնի հայերենից ու հայ գրականությունից:

Աշակերտը թեստային առաջադրանքները կատարելիս հաճախ է հայտնվելու անակնկալի առաջ: Գաղտնիք չէ, որ ամենից հանրահայտ առածներն անգամ բովանդակությամբ միանշանակ չեն: Հերիք չէ՝ դիմորդը թեստում տեսնում է պատահական մի առած, որի իմաստը չի հասկանում, դեռ նրա նկատմամբ էլ պիտի վերաբերմունք արտահայտի մեկ բարդ նախադասությամբ: Հատուկենտ ընդունելի պատասխանների կողքին մեզ հանդիպել են բազում անմտություններ, որոնք ոչ մի կապ չունեն տրված առածի բովանդակության եւ առհասարակ գրագիտության հետ:

Սխալ կամ գոնե վիճահարույց է չնորմավորված եւ վերջնականապես չկանոնակարգված լեզվական իրողությունների ընդգրկումը: Դա հատկապես երեւում է ուղղախոսության ստուգման առաջադրանքներում: Տրվում են բառեր, որոնց մեջ ուղղագրական-ուղղախոսական արժեք ունեցող բաղաձայնի արտասանությունը երկակի՞ է (որջ, վրձին, արձան եւ այլն):

Ստուգումները երեւան հանեցին նաեւ մի այլ խայտառակ փաստ. համատարած 100 տոկոսանոց արտագրություն կամ շահագրգիռ մարդկանց կողմից կազմակերպված հուշում. այլապես ինչո՞վ բացատրել միեւնույն առածի նկատմամբ հարյուրավոր աշակերտների միատեսակ վերաբերմունքը, այն էլ նույն բարդ նախադասությամբ: Տրված կրկնադիր կամ զուգադիր շաղկապներով կազմված հարյուրավոր նույն նախադասությունները ինչի՞ հետեւանք են, եթե ոչ արտագրության կամ նախօրոք հստակ պատրաստության: Ինչո՞ւ բառագիտական առաջադրանքները գրեթե անսխալ կատարած աշակերտները թեստի մյուս հանձնարարականները կամ բնավ չեն կատարել, կամ կատարել են ուղղագրական, կետադրական, քերականական, տրամաբանական աղաղակող սխալներով եւ կամ շատ քիչ միավոր են վաստակել, կամ բնաՀվ չեն վաստակել:

Տես էջ 5

ԱԶԳ-ՆԵՐԴԻՐ

Տեսակետ-առաջարկ

Ջ էջից

Աչխակաությունն ու ժողովրդի աչիին թոզ փչելը ուրիշ ինչ կերպ է լինում:

Պարզ է, այս ինչակարգում էլ գործել է այն չգրված կանոնը, այն չարիքը, որի անունն է արտագրություն: Սա է աշակերտին զրկում մտածելու, ինքնուրույն ստեղծագործական աշխատանք կատարելու հնարավորությունից:

Չորս թեստերի փորձարկման 3 600 գրավոր աշխատանքների ստուգումը թեեւ վերջնական կարծիք չի ստեղծում ամբողջի մասին, սակայն ակնառու է դարձնում ներդրվող համակարգի մյուս աղաղակող թերությունները:

Կազմողներն ու փորձարկողներն ինչո՞վ կբացատրեն հայրենավոր մաքուր, սրիտակ, առանց որեւէ բառ կամ տառ պարունակող գրանցված թղթերի առկայությունը: Կամ ինչպե՞ս կարդարացնեն աշակերտների՝ ոչ իրենց, այլ ուրիշ թեստի առաջադրանքների այսպես կոչված լուծումները, որոնք նախագահը պահանջում էր անդայման ստուգել եւ գնահատել: Սա անլուրջ վերաբերմունքի արտահայտություն չէ միայն, սա հոգեբանորեն եւ մտավորապես նման ինչության անդատրաստ այսօրվա մեր դպրոցի իրական դեմքն է, որ հիմա այս փորձարկումով երեւում է անսխալ ու անգունազարդ:

Բայց սա նաեւ ներդրվող ինչակարգի էական թերությունն է: Ընդ որում, բոլոր թերությունները բխում են հենց ընտրված ձեւից եւ թեստերը կազմողների մասնագիտական տկարությունից ու անձարակությունից, որոնք համակարգչի «խմահաճույքներին» են զոհաբերում լեզվական ու գրական ամեն գիտելիք: Մենք բոլոր խոցելի օրինակներին ու առաջադրանքներին անդրադառնալ չենք կարող, եւ դրանք փոխելով կամ թերությունները մասամբ շտկելով՝ ոչ մի արդյունքի չենք հասնի, որովհետեւ ամբողջ սրությամբ զգացվում է ոչ թե իրենցով ոգեւորված ուսուցիչների, այլ լուրջ մասնագետների միջոցով թեստերի արմատական վերակառուցման անհրաժեշտություն, այդ ամենը դպրոցում կիրառելու տեւական ժամանակ:

Ի՞նչ կարելի է սպասել այն հանձնաժողովից, որն իր կազմած թեստերում աշակերտից պահանջում է **ծանրաքարշ**-ի դիմաց գրել **թեթեւասահ** հականիշը, **անօրեն** ի դիմաց՝ **արյունարբու** հոմանիշը, **աչք դնել** դարձվածի իմաստն արտահայտել **հավանել** բառով եւ այլն: Թեստ կազմողները մի՞թե չգիտեն, որ փոխաբերական իմաստով **սիրամարգ** - ը միայն խայտաբղետ հագուստներով պճնված **կին** չէ, **գոհար**- ը միայն **ընտիր, լավագույն** չի նշանակում, **ոսկի**- ն միայն ազնիվը չէ, եզ - ն էլ միայն **կոպիտ, անտաշ մարդը չէ, թուրք**- ն էլ ամենեւին ուրիշի **խոսափող** չէ, այլ **սեփական կարծիքից զուրկ**, ուրիշի **խոսքերը կրկնող մարդ** (եւ սրանք են անդարկեշտորեն ընդգծում պատկառելի մասնագետների կազմած շեմարանի դեմ ու ճգնում «սաղացնել» իրենց կազմած խեղճուկրակ թեստերը):

Եթե սա է թեստ կազմողների մասնագիտական մակարդակը, ապա բնավ չպիտի զարմանանք, որ փորձարկված այս որակի թեստային առաջադրանքները հարկադիր կատարող աշակերտներն էլ պիտի կազմեին հայրենից իրենց բացարձակ անտեղյակությունն ապացուցող հետեւյալ «գոհարները».

գառ - գազանաբարո մարդ
գայլ - հեզաբարո մարդ
սանձ - մաղձ
արարիչ - այծյամ
ժանիք - անեծք
բորենի - խեղճ, ողորմելի մարդ
աղոս - գիրք
ջայլամ - կամակոր մարդ
անզոր - գեղանի
կխտար - նզովք
նզովք - թուրք ու գիր
այգաբաց - մաղձ
վաղորդայն - այծյամ
արարիչ - ոսկրուն
խորունկ - ինքուր
եզ - գազանաբարո մարդ

Ընդհանրապես ոչ միարժեք պատասխաններ ենթադրող առաջադրանքների ընդգրկումը հնարավոր է դարձնում ստուգման ընթացքում կամայականությունների առաջացումը, մանավանդ որ թեստը կազմողները լուծման միայն իրենց իմացած տարբերակն են ճիշտ համարելու, եւ դա էլ, ինչպես տեսաք, առաջ է բերում կամ երկակի, կամ ուղղակի սխալ լուծում:

Առարկան կոչվում է «Հայոց լեզու, գրականություն»: Չգիտես ինչու, կազմողները Բ մակարդակում չեն ընդգրկել գրականությունից որեւէ հարց: Բուհ ընդունվողը չպե՞տք է իմանա գրականությունից գոնե նվազագույն գիտելիքներ: Կարող են ասել՝ Ա մակարդակում եղած գրականության հարցերը բավական են: Սա արմատապես սխալ մոտեցում է: Խորհրդային կրթակարգով նախատեսված էր, որ անգամ բնագիտական մասնագիտություններ՝ ֆիզիկա, քիմիա, մաթեմատիկա, կիբեռնետիկա, կենսաբանություն, երկրաբանություն ընտրած դիմորդները ընդունելության քննություն հանձնեն հայոց լեզվից եւ գրականությունից գրավոր շարադրության տեսքով: Այդ ամենը հենց անկախության առաջին տարիներին, ցավոք, անտեսվեց: Այսօր աստիճանաբար փոխվում է գրականության նկատմամբ պետական վերաբերմունքը, եւ գոհ պիտի լինենք, որ գոնե ավարտական քննության թեստերում ընդգրկել են նաեւ հայ գրականության իմացություն ստուգող առաջադրանքներ: Բայց ինչ արժեք ունեն դրանք: Ռաֆֆու, Մուրացանի, Չարենցի ծննդավայրի իմացությունը կամ գրական երկերի հերոսների տարբերակումը, այս կամ այն բանաստեղծության բաց թողած տողի տեղադրումը դեռեւս ստեղծագործության բովանդակության կամ գեղարվեստական արժանիքների իմացություն չի ենթադրում: Աշակերտը նորից գոնե դպրոցական ծրագրով նախատեսված նվազագույն գրականությունը չի կարդալու, միայն հերոսների մի ցուցակ կկազմի եւ դա կսովորի: Իսկ նա եթե գրականություն չկարդա, իր բառապաշարը չհարստացնի, մտահորիզոնն ու ներաշխարհը չընդլայնի, կմնա նույն աղքատիմացը: Այս խնդիրը հրամայաբար պահանջում է արմատական վերանայում. վարժարանական մտահաճույքի փոխարեն՝ համակարգված մոտեցում՝ գիտական ստույգ չափանիշներով:

Շարադրությունը, ըստ էության, լավ առաջադրանք է, կատարված խոսք, որով կարելի է ստուգել շրջանավարտ-դիմորդի մտածելու եւ շարադրելու կարողությունը: Սակայն սա էլ բնավ չի լուծում առաջադրված խնդիրը: Բոլոր աշխատանքների մեջ հազի՞վ երկու-երեք միջ թե շատ տանելի շարադրություն հայտնվեց: Աշակերտների բացարձակ մեծամասնությունը խուսափել էր շարադրություն գրելուց. ընդ որում նկատվում էր, որ քաղաքային կամ մարզական մի քանի դպրոցներում աշակերտներին ուղղակի պարտադրել էին շարադրություն գրել, եւ որոշ քանակությամբ միանման աշխատանքներում էլ երեւում էր ուսուցչի անցանկալի ներկայությունը:

Ստուգված շարադրությունները ցույց տվեցին, որ ինչվողը գիտակցաբար խուսափում է ուղղագրական դժվարություն ունեցող բառեր գործածելուց, կետադրական դժվարություն ներկայացնող բարդ կառույցներ ու նախադասություններ կազմելուց. լավագույն դեպքում դիմում է պարզ ընդարձակ նախադասությունների: Այդ պատճառով էլ սացվում է պարզունակ, մակերեսային, անբովանդակ ու անհեթեթ գրություն, ուր ոչ տրամաբանություն կա, ոչ էլ մտքի հաջորդականություն, իսկ առավել հաճախ՝ հենց միտք չկա: Տրված այդ «սկզբով» կաշկանդված դիմորդը չի կարողանում ինքը ստեղծել սյուժե եւ կերպար, դրա համար էլ, ուզած - չուզած նա իր նախապես «պատրաստած» շարադրությունն է կցում-կցմցում: Հետեւանքն այն է, որ շարադրություններում հայտնվում են ծով, խորտակված նավակներ ու ծովահեններ, մարտաֆիլմերի դաժան պատկերներ, մի ալեհեր մարդ, որի բարի ձեռքը կամ քանդակում է, կամ նկարում, այդ բարի մարդը մի շարք դեպքերում Մեսրոպ Մաշտոցն է, խորենացին կամ Սմբատ Գունդստաբլը, ուրիշ դեպքերում՝ ԱԼՍ-ի Տիգրան Կարապետովիչը...

Պետք է շարադրություններն ունենան որոշակի ուղղվածություն, վերնագիր, որից շեղումը դիտվի սխալ: Թող լինեն երբեմն գրական եւ ազատ թեմաներ, որոնցից դիմորդն ընտրություն կատարի. այսպես գոնե կլուսավի միասնական քննության հարցերում գրականության պակասը: Ավելի լավ չէ՞, որ աշակերտները նույնիսկ յուրացնեն մեր գրականության, մշակույթի, պատմության մասին կաղապարներ, գրեն Աբովյանի, Ռաֆֆու, Թումանյանի, Չարենցի, Բակունցի ծրագրային երկերի համառոտ վերլուծական շարադրություններ, քան երեւակայությամբ «երկնեն» իրենց չտեսած բաների՝ գիշերային ծովի, ծովահենների, քաջուխ պատասխանող երիտասարդների եւ այլոց մասին վերացական անմտություններ: Շարադրությունն անհրաժեշտ է, եթե ոչ հիմա, գոնե հաջորդ տարիներին, որովհետեւ առանց կատակցված խոսք կազմելու կարողության հնարավոր չէ պատկերացնել հայրենի լիարժեք իմացություն. դա նույնն է, թե մարդը չի կիրառում մտածողության եւ հաղորդակցության գործիք մայրենի լեզուն, որովհետեւ եթե լեզվի պարզ բաղադրիչները նույնիսկ առանձին-առանձին գիտի, ապա դրանք կատակցել չգիտի ու չի կարող գրավոր արտահայտվել: Ուրեմն՝ հետագայում արմատապես պետք է փոխվեն թե շարադրության բնույթը, թե գնահատման ուղղակի զավեշտական չափանիշները:

«Առավոտ» թերթի նոյեմբերի 3-ի համարում Հ. Բոստաղյանի հաղորդումից տեղեկանում ենք, որ Թեստավորման ու գնահատման կենտրոնում առանց համալսարանականներիս մասնակցության այս օրերին կազմակերպվել է «մասնագիտական ինքնարկում», որի արդյունքում «հնարավոր է, որ թեստերից շարադրության կետն առհասարակ հանվի»: Բայց ինչ պատճառաբանությամբ: «Դրա պատճառը ոչ միայն այն է, որ աշակերտները խիստ դժվարանում են կատակցված խոսք կազմել(իսկ ԿԳ նախարարը հակված է գնալ թեստերի պարզեցման), այլեւ այն, որ ինքնարկվում է ստուգման գործընթացում մարդկային գործոնի վերացման հարցը. բոլոր հարցերը պետք է կազմվեն այնպես, որ պատասխանների ստուգումն էլ լինի ավտոմատացված: Այլապես զուր է խոսել կոռուպցիայի մակարդակը 0-ի հավասարեցնելու մասին»,- կարդում ենք հաղորդման մեջ: Ինչպես տեսնում ենք, ինքնարկի կատարելագործման ճանապարհին էականը մասնագիտական խնդիրները չեն, այլ մարդկային գործոնն ու ոմանց դժգոհությունը իրենց համար անցանկալի պահանջներից: Ամեն հայերեն խոսող ու գրող իրեն մասնագետ է կարծում. դրա հետեւանքն են ոչ միայն թեստերում ընդգրկված անհեթեթությունները, այլեւ լրագրողի կամ հանձնաժողովի նախագահի չիմացությունը: Նույն հաղորդման մեջ կարդում ենք. «Այս թեստերով ինքնություն հանձնելը նշանակում է, որ ավարտական դասարանների աշակերտը պետք է անգիր իմանա ծրագրով նախատեսված բոլոր բանաստեղծությունները (հարցաշարում կարող է լինել այսպիսի առաջադրանք՝ շարունակել բանաստեղծական քառյակը կամ լրացնել քառյակի մի տողում բաց թողնված բառը, պետք է իմանա դասականների բանաստեղծությունների ժողովածուները, ճանաչի հայտնի գործերի հերոսներին եւ այլն)»: Ուշադիր նայեք ընդգծված բանաստեղծական քառյակ արտահայտությունը: Չի՞ երեւում, որ թեստերի կազմող նախագահն ու լրագրողը դեռեւս չեն տարբերակում քառյակը քառատող տնից. ե՞րբ պիտի նրանք սովորեն, որ քառյակը բանաստեղծության առանձին տեսակ է, ինքնուրույն եւ ավարտուն գեղարվեստական միավոր է, իսկ քառատող տունը՝ բանաստեղծության մաս կամ բաղադրիչ:

Մասնագիտական այս որակն է նաեւ ազդել թեստերի մակարդակի ու որակի վրա:

Կրկնում ենք՝ դեմ չենք նոր ինքնարկի ներդրմանը, բայց ստուգումների արդյունքները բերում են միահամուռ մի հանգման. այս որակի թեստերով եւ այսպիսի հաղթությամբ մեր դպրոցի ներկա մակարդակում անկարելի է անցկացնել ոչ ավարտական, ոչ էլ միասնական քննություն: Թեստերը պետք է փոխվեն արմատապես, դրանց ընդունելի նմուշներին պետք է նախապես՝ մի փորձաշրջան ծանոթացնել աշակերտությանը, բարձրացնել հայոց լեզվի գրականության դասավանդման մակարդակը դպրոցում, ապա նոր մտածել այս ինքնարկի ներդրման մասին:

Ելնելով վերոհիշյալ մասնագիտական, մանկավարժական դիտողություններից ու մտահոգություններից՝ առաջարկում ենք այս տարվա ընդունելության քննությունների համար որպես հիմք ընդունել նախորդ շեմարանը (ընդ որում 2005 թ. բարեփոխված, լրամշակված հրատարակությունը)՝ պայմանով, որ հեղինակավոր մի հանձնաժողով զգալի քանակությամբ ավելացնի նրա որոշ բաժինների առաջադրանքների թիվը:

Հաջորդ տարվա համար առաջարկում ենք ձեւավորել բոլոր շահագրգիռ կողմերը համամասնորեն ներկայացնող հանձնաժողով, որը ինքնարկի նոր համակարգի պահանջների համաձայն, նաեւ նկատի ունենալով նախորդ շեմարանների եւ ներկա թեստերի փորձագիտական եզրակացությունները, ստեղծի որակապես նոր թեստեր, փորձարկի դրանք դպրոցում ու ինքնարկի բոնեերի եւ մասնավորապես ԵՊՀ հայոց լեզվի եւ հայ գրականության մասնագիտական ամբիոններում, եւ ինքնարկը դպրոցի դրական վերաբերմունքն ստանալու դեպքում նոր միայն ներդրվի:

ՄԱՄՈՒԵԼ ՄՈՒՐԱԴՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր, ԵՊՀ հայ գրականության ամբիոնի վարիչ, փորձարկված գրավոր աշխատանքները ստուգող հանձնաժողովի նախագահի տեղակալ, փորձագետ

ԼԵՎՈՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Բան. գիտ. թեկնածու, ԵՊՀ հայոց լեզվի ամբիոնի դոցենտ

ՓԱՌԱՆՁԵՄ ՄԵՅԹԻՈՆՅԱՆ
Բան. գիտ. թեկնածու, ԵՊՀ հայոց լեզվի ամբիոնի դոցենտ

ՆԱՐԻՆԵ ՊԻՍԱՐՅԱՆ
Բան. գիտ. թեկնածու, ԵՊՀ հայոց լեզվի պատմության ամբիոնի դոցենտ

ՄԵՐԻ ՍԱՐԳՍՅԱՆ
Բան. գիտ. թեկնածու, ԵՊՀ հայ գրականության ամբիոնի դոցենտ

P. S. «Առավոտը» մեր հոդվածը տպագրել էր այնպիսի միտումնավոր կրճատումներով ու աղավաղումներով, որ այն գրեթե դուրս էր բերել մեր դեմ: Երբ ինչ - որ մարդիկ խորհրդավոր գաղտնիությամբ կազմում էին մասնագիտական կոպիտ սխալներով թեստերը եւ կազմակերպում փորձարկում, չէին հիշում, որ իրենք գործընկեր ունեն գործընկերներին, իսկ հիմա, երբ համազգային ու համատեսական նշանակության այդ գործում մասնակցվել են աղաղակող սխալներն ու ոչ-մասնագիտական մոտեցումները եւ բարձրաձայն ասվել է բուն ճշմարտությունը, ցավագնորեն համարում են որպես վիրավորանք ու մեր կողմից թույլ տրված «անպարկեշտություն» եւ դիմում ավելորդ ինքնարդարացման: Միանգամայն խնայողաբար ու ոչ ոռոգությամբ տրված մեր հոդվածը, ցավոք, այդպիսի արձագանք ունեցավ, եւ արձագանքողը հարկավ պիտի լիներ թեստերը կազմող հանձնաժողովի նախագահը: Նա այս պահին է հանկարծ հիշել մեր գործընկեր լինելը եւ սակայն թեստերի որակի վերաբերյալ մեր եւ ոչ մի մասնագիտական դիտողության չի հերքել ու անհամաձայնություն չի հայտնել: Ընդհակառակը, առիթն օգտագործելով՝ շեփորել է իր հոդվածները, բառարանները, Նոր կտակարանի եւ Սաղմոսագրքի հրատարակությունները, որոնք որեւէ առնչություն չունեն թեստերի հետ: Անշուշտ գնահատում ենք Դ. Գյուրջինյանի վաստակը, բայց հետու ենք մեր գիտական ներդումներով եւ աշխատությունների ցանկերով պարծենալու եւ զարմացնելու մեծամոլությունից: Նաեւ խոստովանենք՝ «դիմորդներ վարժեցնելու» հաճույքից ա՞ն ենք հոգնել, թեեւ դրանով մենք տասնամյակներ շարունակ լրացրել ենք դպրոցի բացերը, ու եթե այսօր կա գրագիտության որոշ մակարդակ, նաեւ մեր ջանքերի արդյունքն է: Ուզո՞ւմ եք վերացնել կրկնուսուցումը՝ բարձրացրեք դպրոցի մակարդակն այնքան, որ դրա կարիքն իսկապես վերանա: Իսկ եթե մենք այսօր ասում ենք՝ թեստերը պիտի ունենան մասնագիտական որակ, դա նշանակում է «ֆինանսական շահագրգռությո՞ւն» ունենք: Սա՝ է պարկեշտությունը: Առնվազն պարկեշտ չէ եւ խիստ վիրավորական է Դ. Գյուրջինյանի եւ «Առավոտի» ու նրա աշխատակցի դիրքորոշումը: Ինչո՞ւ են ծռում մեր ասածը եւ բուն ճշմարտությունը թաքցնում ժողովրդից: Ինչո՞ւ մենք, թերթի ասելով, «նամակ» պիտի գրենք մի մարդու, որին, մեղմ ասած, հաճելի չի եղել մեր մասնակցությունը ստուգումների արդյունքների ինքնարկմանը, որն արել են մեզնից թաքուն: Չի եղել այդպիսի նամակ, ո՞վ կարող է ցույց տալ. դրա փոխարեն մենք բացորոշ գրել ենք մասնագիտական կարծիք, որից չգիտես ինչու վիրավորվել է Դ. Գյուրջինյանն եւ համալսարանականների ու շեմարանի դեմ կազմակերպել այս անպարկեշտ արշավանքը:

Ըստ լուրերի՝ այսօր բազմաթիվ ուսուցիչներ նախապատրաստվում են Դ. Գյուրջինյանի կազմած թեստերն ամոնը ստուգելու համար: Իսկ բազմահազար աշակերտ - դիմորդնե՞րն ինչպես են նախապատրաստվելու այդ փորձությանը եւ ինչպես են պատասխանելու նրա սխալ հարցադրումներին... ■

Ներսում՝ մտավորականի հանդեպ վստահության, իսկ դրսում՝ այսօրվա ստեղծածի պակաս

ԹԱՄԱՐ ՄԻՆԱՍՅԱՆ

Արամ Սուքիասյանը ծնվել է 1976 թվականին, Երեւանում: Սովորել է Երեւանի թատերական արվեստի պետական ինստիտուտում, երաժշտական թատրոնի բաժնում, ապա՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայում: Որպես դերասան աշխատել է Պատանի հանդիսատեսի, «Համազգայինի» թատրոններում, «Խ. Աբրահամյան եւ թատրոն» հիմնադրամում, եղել է «Հայեր» մշակութային կենտրոնի տոումեն, Ստեփանակերտի պետական թատրոնի դերասան-ռեժիսոր, 1700-ամյակի եկեղեցական հանձնաժողովի մշակութային ծրագրերի ղեկավար, Հ. Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի թատրոնի փոխտնօրեն: Այժմ Արամ Սուքիասյանը Հայաստանի երիտասարդության ազգային խորհրդի եւ «ԱՄՔ» մշակութային կենտրոնի նախագահն է:

Տարածաշրջանի առաջին ֆիլմ ռոք-օպերան՝ Հայաստանում

Մուբեղ Իշխանի «Մեռնիլը որքան դժվար է» պիեսի հիման վրա գրված ֆառայինի եւ տրագիկոմիկական ժանրին պատկանող «Վերջ» ռոք-օպերան, որը հեղինակել է Արամ Սուքիասյանը, նախատեսվում է հանդիսականի դատին հանձնել 2007 թվականի աշնանը: Ստեղծագործության գործիավորողն Արման Էլբերտն է, երգչախմբի խմբավարը՝ Նարինե Առաքելյանը, ձայնագրման ռեժիսորը՝ Լեւոն Հախվերդյանը, իսկ երաժշտական պրոդյուսերն Արմեն Սուքիասյանն է: Ռոք-օպերայում ձայնագրվել են Արմեն Աղամյանը, Արման Էլբերտը, Սարգիս Մանուկյանը, Աստղիկ Արծրունին, Անահիտ Շարյանը եւ այլք: Ստեղծագործության կոմպոզիտոր, փիբրեիստ Արամ Սուքիասյանի գնահատմամբ, հատկապես երիտասարդության շրջանում ֆիլմ ռոք-օպերան մեծ հետաքրքրություն է վայելում. այն արվեստների սինթեզ է, որտեղ կա եւ երգարվեստ, եւ խոսքի ու դերասանական արվեստ, եւ նկարչություն, եւ ռեժիսուրա, եւ ֆիլմարվեստ: «Վերջը» գիտության զարգացման հետեւանքով մարդ արարածի համար թույլատրելի սահմանները խախտելու եւ Աստծո գործերին խառնվելու հետեւանքների մասին է: Արամ Սուքիասյանը վստահ է, որ ֆիլմը լուրջ հաջողություն կունենա նաեւ միջազգային մի շարք փառատոներում: Նշենք, որ այն առաջինը կլինի ոչ միայն Հայաստանում, այլեւ որոշ Կովկասում: Ընդհանրապես տարածաշրջանում ռոք-օպերաների եւ մյուզիքլների բեմադրությամբ ու նկարահանմամբ մասնագիտացած թատրոն եւ առանձին տեսատուդիա միայն Սանկտ Պետերբուրգում կա:

Հայաստանում ռոք-օպերայի զարգացման եւ տարածման հեռանկար Արամ Սուքիասյանը տեսնում է: «Համենայն դեպս, 2001 թվականին Երեւանի «Կասկադ» համալիրում ներկայացված «Գրիգոր Լուսավորիչ» ռոք-օպերայի արձագանքները դրա վկայությունն են, ասում է Սուքիասյանը: Այն մեծ արձագանք գտավ Հայաստանում եւ հատկապես սփյուռքում: Ներկայացումն իր տեսակի մեջ արտառոց էր, անսպասելի նորություն, եւ երիտասարդության զգալի հատվածը շատ խանդավառված ընդունեց երեւույթը»:

Ռոք-օպերան հյուրախաղերի մի շարք առաջարկներ է ստացել, սակայն բոլորն էլ մերժվել են, քանի որ միշտ առաջարկվել է կրճատել 120-հոգանոց կազմը, ինչի պատճառով, Սուքիասյանի համոզմամբ, ստեղծագործությունը որակական անկում կապրեր: «Իսկ ես համաձայն չեմ հատկապես դրսում մեր նորօրյա արվեստը որակական անկմամբ ներկայացնել: Ընդհանրապես կարծում եմ, որ բավական է՝ մենք արտերկրում խեղճ ներկայանանք, եւ մեզ նայեն որպես «դե, որ այսքանն էլ արվել է, ուրեմն փառք ու պատիվ Հայաստանին»: Ոչ, Հայաստանը համահավասար երկիր է, եւ կարծում եմ, որ մենք պետք է ավելի բարձր ներկայանանք, քան այսօր ներկայանում ենք: Ես հաճախ տեսնում եմ, որ մենք ունենք լավ պրոտենցիալ, բայց մի շարք երկրներում հայաստանյան օրերի բացումը եւ փակումը երկրին պատվաբեր չափանիշներով չեն արվում»:

Ֆինանսական պակասը տաղանդն ու հնարամտությունն են լրացնում

Ա. Սուքիասյանը համոզված է, որ մյուզիքլը չի կարող փոքր գումարներով խեղճ բեմադրություն լինել, այն ճոխ եւ հարուստ երկրի արվեստի տեսակ է, որտեղ փայլ ունենալը պարտադիր պայման է: Այն մասսայականություն է ենթադրում, պահարվեստ, դերասանական կազմի հսկայական ներուժ եւ մեծ ծախսեր: Սուքիասյանը համոզված է, որ Հայաստանը դերասանական կազմի խնդիր բացարձակ չունի: «Կան փայլուն ոկալիստներ, որոնք թեեւ հանրությունը չի նայում, բայց միանգամայն շնորհալի մարդիկ են. շատ ու շատ հանրահայտներին բնավ չզիջող, կոնկրետ այս ժանրում՝ վստահաբար առավել, ովքեր միանգամայն ի զորու են խաղացանկային ներկայացումներով հարուստ մյուզիքլի լուրջ թատրոն ստեղծել: Խնդիրը բացառապես ֆինանսական է: Միջազգային չափանիշներին համահունչ որակ ապահովելու համար առնվազն 150.000 դոլար է անհրաժեշտ «Գրիգոր Լուսավորիչ» ռոք-օպերայի պես ներկայացման բեմադրությանը», ասում է Սուքիասյանը:

Նրա գնահատմամբ, վերջին շրջանում հայ հասարակությունը սկսել է հետաքրքրություն ցուցաբերել արվեստի այս տեսակի հանդեպ, այսօր բազմաթիվ հեռուստաընկերություններ սկսել են ավելի հաճախ հեռարձակել համաշխարհային ռոք-օպերաներ:

Պետական միջոցառումների մի նոր չափանիշ

Այս տարի սեպտեմբերի 21-ին Վ. Սարգսյանի անվան մարզադաշտում Հայաստանի հանրապետության անկախության 15-ամյակին նվիրված «Ոգու տոն» միջոցառման սցենարի հեղինակն ու բեմադրող ռեժիսորը եւ Արամ Սուքիասյանն էր: Տոնին նվիրված տարվա թիվ 1 մշակութային միջոցառումն իրականացնելու պատասխանատվությունը նա մեծ ուրախությամբ եւ հպարտությամբ է ստանձնել: «Թեման ինձ՝ որպես հայ մարդու, խիստ հոգեհարազատ էր: Կային համարձակ քայլեր. ներկայացվում էր թե՛ հայ իրականության փառքն ու վերելքը, թե՛ նվաստացումը, ընդհուպ հայոց արհավիրքի անկում, մութ ու ցուրտ տարիներ: Չեմ հիշում որեւէ այլ մշակութային միջոցառում, այն էլ՝ պետական, որտեղ այս մասին խոսվի: Ամենը հանդիսատեսին ներկայացվեց գեղարվեստական լեզվով, եւ մարզադաշտում իսկապես ոգու տոն ստեղծվեց»:

Բեմադրող ռեժիսորը խոստովանում է, որ այս ամենի կողքին միջոցառման նախապատրաստական փուլում մտահոգություն է ունեցել, թե տոնակատարությունը հասարակությունը միանշանակ չի ընդունի: «Հաճախ միանշանակ չի ընկալվում նույնիսկ «անկախություն» հասկացությունը, ուր մնաց՝ միջոցառումները, որ ծախսերի հետ են կապված: Մտածում էի՝ արդո՞ւ մարդիկ պատրաստ են իրականում ուրախանալու եւ տոն նշելու: Բայց պարզվեց, որ հասարակությունը ոչ միայն պատրաստ էր, այլեւ դրա անհրաժեշտությունն ուներ: Այնպիսի կանչեր եւ արձագանքներ եղան, որ դահլիճային պայմանների միջոցառումներին են բնորոշ»: Սուքիասյանն ուրախ է, որ պետության տոնին եկած հանդիսատեսի զգալի հատվածը երիտասարդներ են եղել, ուրախ է, որ երիտասարդներն այսօր կարետորում են իրենց պետականության օրը: «Ես այդ օրը զգացի, որ հայերս սկսել ենք սիրել մեր պետությունը: Մարդիկ եկել էին դրոշներով, համապատասխան զգեստներով, շանաքներով: Սա հատուկ չեղավ, սա եղավ նախադեպ, որ երկրի տոնը կարելի է նշել հպարտության իրական սիրով»: Ի դեպ, ծրագրում «ասդղերի» մասնակցությունը սահմանափակ էր. «Հաճախ հասարակությունը հոգնում է այն երգիչ-կատարողներից, ովքեր անընդհատ ու անընդմեջ հանդես են գալիս գրեթե նույն երգերով՝ որեւէ ֆիրմայի այս կամ այն ապրանքի շնորհանդեսին՝ չզլանալով նույնը կատարել պետական հանդիսություններին: Հետեւաբար, ընտրվել էր մի ձեւաչափ, ըստ որի յուրաքանչյուր երգիչ-կատարող կոնցերտային այս ներկայացման որեւէ ժամանակի կերպար էր, ոչ թե «հնչեղ անուն-ազգանուն»: Համոզված եմ, որ խորեոգրաֆիկ պատկերներով, շուրջ 2700 մասնակիցներով կայացած այս ծրագիրը պետական մակարդակի մշակութային ծրագրերի համար նախադեպ եւ չափանիշ կդառնա»:

Ըստ Արամ Սուքիասյանի, ընդհանրապես հասարակության շրջանում գաղափարախոսությունների տարածման լուրջ քարոզչամիջոց է մասսայական միջոցառումը, որը կարող է գաղափարներ ծնել, հանրության մեջ թաքնված երեւույթներ ու էմոցիոնալություններ արթնացնել: Նա համոզված է, որ պետությունն իսկապես պետք է գիտակցի այսօրինակ միջոցառումների կարեւորությունը, այնինչ հաճախ փորձն այլ բան է ապացուցում: «Աշխարհում նման միջոցառմանը սկսում են պատրաստվել մեկ տարի առաջ՝ մեծ բյուջեով: Հասկանալի է, որ մեզանում բյուջեն կարող է բոլորովին այլ թվաբանությամբ լինել, սակայն մոտեցումը պետք է նույնը լինի: Որեւէ մեկի համար գաղտնի՞ էր, որ 2006 թվականի սեպտեմբերի 21-ը ՀՀ անկախության 15-ամյակի օրն է: Այնինչ, տոնից ընդամենը 2.5 ամիս առաջ, կարծես անակնկալի եկած, հարցեր եւ հարց:տաղ մի գործընթաց սկսվեց: Բարեբախտաբար ստեղծագործական այնպիսի թիմ ձեւավորվեց՝ բարձր պրոֆեսիոնալների եւ հաղթահարական զգացում ունեցող մարդկանց խումբ՝ ի դեմս պրոդյուսեր Գետրգ Գետրգյանի, բալետմայստերներ Նորայր Մեհրաբյանի եւ Վանուշ Խանամիրյանի, երաժշտական պրոդյուսեր Արմեն Սուքիասյանի եւ նկարիչ Աշոտ Համբարձումյանի, ովքեր կարողացան պատշաճ ներկայացում ապահովել»:

Հասարակարգ պետք է ձեւավորվի, որ հասարակությունը վստահի իր արվեստագետին

Հայ մտավորականության ու այսօրվա արվեստագետների մասին դիտարկումներ անելիս Արամ Սուքիասյանը հիշ տխրում է: Մեր երկիրն այսօր հեղինակությունների խնդիր ունի, չկան մարդիկ, ում կարծիքը կարող է հասարակության վրա լուրջ ազդեցություն թողնել, ինչպես ժամանակին Տիգրան Լեւոնյանի, Հրանտ Մաթեւոսյանի, Խորեն Աբրահամյանի խոսքը: Այսօր հանրությունը չի վստահում իր մտավորականներին, քանի որ նրանք վերջին տարիներին տարաբնույթ լիցքերի եւ ուժերի են ենթարկվել, եւ առնվազն 10-15 տարի է հարկավոր՝ այս բացասական ազդեցությունից ազատվելու համար:

«Մի շարք արվեստագետներ հասարակությանը խաբելու մեծ վարպետներ են դարձել, ասում է Սուքիասյանը: Աշխարհում «միջազգային» տարբեր փառատոներ են տեղի ունենում՝ ընդամենը 2-3 երկրի մասնակցությամբ, որտեղ 3-րդ տեղ գրաված արվեստագետը երեւանյան ողջ մամուլով հայտարարում է իր մեծ հաղթանակի մասին: Երբ այս կամ այն «միջազգային հեղինակավոր» մրցույթին մասնակցած եւ այնտեղ գնահատանքի արժանացած ստեղծագործությունը ներկայացվում է հայ լսարանին, հանդիսատեսը տարակուսանքի մեջ է ընկնում՝ լավ չհասկանալով՝ ինչն է ճաշակից զուրկ, թե՞ աշխարհում չափորոշիչներն են փոխվել, եւ ինքը հետ է մնացել: Աշխարհի մի շարք մրցույթների մասին դեռ հստակ պատկերացում չունեցող մեր հասարակությանը պետք չէ թյուրիմացության մեջ գցել»:

Այսօր հայ ստեղծագործողները եւս մեկ խնդիր ունեն. իրենց ստեղծագործությունները հայրենիքում ուշադրության չեն արժանանում: Իսկ կատարածն էլ հեռուստատեսության աշխարհի «կոմերցիոն մտածելակերպի» պատճառով չի ներկայացվում հանրությանը: «Հասկանում եմ, որ հսկայական այդ քարոզչամեքենան մեծ մասամբ կոմերցիոն բնույթի է, ասում է Սուքիասյանը, հասկանում եմ, որ մի շարք երգիչ-երգչուհիներ վճարում են՝ իրենց տեսահոլովակը հաճախ եթեր հեռարձակելու համար: Բայց արդո՞ւ սա չի ազդում այդ կոմերցիոն մտածողությամբ մարդկանց երեխաների բարոյահոգեբանական դաստիարակության վրա»: Պրոֆեսիոնալ երաժշտություն ինչ է գրվում նաեւ այն պատճառով, որ տեխնիկայի զարգացումը ամեն մեկին կարող է երգիչ դարձնել, այնինչ նախկինում շատ կոմպոզիտորներ գրում էին հատուկ այս կամ այն երգչի համար: «Ունեմ ընկերներ, որոնք իրենց ստեղծագործությունները, ցավոք, պահոցներում են թողնում, քանի որ նրդասակահարմար չեն համարում հիմա ցուցադրել, չեն գտնում այն մարդուն, ով կկարողանա լիարժեք ներկայացնել: Պետք է բացառապես կենդանի երաժշտության ժամանակը գա: Իհարկե, դա էլ մի ինչ դժվար կլինի, որովհետեւ դահլիճներում հիմնականում այդ երգիչների ընկեր-ընկերուհիներն են, եւ ծափահարությունները մի ինչ սուբյեկտիվ են»:

Հայ հեղինակներին աջակցելու գործում Արամ Սուքիասյանը պետական միջամտության անհրաժեշտություն է տեսնում: Կան պետական թատրոններ, նկատմամբ, որոնց գեղարվեստական ղեկավարներին ու դիրիժորներին չի պարտադրվում հայ հեղինակների ստեղծագործություններ կատարել: Դիրիժորի համար առավել պատվաբեր է ղեկավարել Մոցարտի, քան հայ նոր մի կոմպոզիտորի ստեղծագործություն: «Դասական երաժշտություն գողը պետք է իր ստեղծագործությունը դահլիճում լսի: Այնինչ այսօր բոլորը սինթեզատորով են աշխատում: Եթե Հայաստանում չի կատարվում կոմպոզիտորի ստեղծագործությունը, նա ինչո՞ւ պետք է ստեղծագործի»:

Արդյունքում հայ մշակույթն աշխարհին ներկայացնելիս դիմում ենք մեր անցյալի ստեղծագործություններին, միջազգային փառատոներում մեր երկիրը ներկայանում է բացառապես պատմամշակութային արժեքներով: «Այսօր մենք չկանք, այսօր մենք արվեստ չենք ստեղծում, մտածում է Սուքիասյանը: Որքա՞ն կարելի է բավարարվել պապերի ստեղծած արժեքներով: Դրանք մեզ համար վաղուց հիացմունքի առարկաներ են դարձել, մեր ներսից ինչ-որ առումով դուրս են մղվել, մենք արդեն դրա կրողը, վերարտադրողն ու տարածողը չենք»: Հարցին, թե ո՞րն է պատճառը, ինչպե՞ս է հնարավոր մի քանի տարում անգրագետ ու անմշակույթ դառնալ, Սուքիասյանը պատասխանում է. «Հրանտ Մաթեւոսյանին հարցնում եմ՝ ինչո՞ւ չես գրում, ասում է՝ ես սովետական գրող եմ, ես հիմա ոնց գրեմ, իմ ներսում սովետական գյուղի խնդիրներն են: Կարծում եմ, մեծ ճշմարտություն կա ասվածի մեջ: Պատճառն այն է, որ այսօր հասարակարգ ձեւավորված չէ, բայց վստահ եմ՝ կձեւավորվի»: ■

Հատված «Գրիգոր Լուսավորիչ» ռոք-օպերայից

Վատիկանին «Նոր պահպանողականներն» են վերահսկո՞ւմ

Թե՞ նշանակելով Քիսինջերին, Լուսին եւ Վոլֆովիցին խորհրդական, Հռոմի պապը դաշինք է կնքում նրանց հետ

Հռոմի Բենեդիկտոս 16-րդ պապը նոյեմբերի 28-ից դեկտեմբերի 1-ը Թուրքիա կատարած այցելության ընթացքում Քեմալ Աթաթուրքի դամբարան բարձրանալիս ծածկել էր կրծքի խաչը, դամբարանում խոնարհվելով աղոթել եւ նույն աղոթքը Այա Սոֆիայի տաճարում կատարելու փոխարեն կատարել էր սուլթան Ահմեդի մզկիթում, իմամի հետ երեսով դեպի Մեքքա շրջված:

Նրա այցը լայն արձագանք էր գտել ինչպես Արեւմուտքում, այնպես էլ իսլամական աշխարհում: Ինչ վերաբերում է խաչը ծածկելու, մզկիթում աղոթելու արարքներին, թեեւ դրանք միանշանակ չէին ընկալվել Վատիկանում, այնուամենայնիվ, թուրքական իշխանություններն այդ արարքները վերագրել էին Թուրքիայի եւ նրա հիմնադրի նկատմամբ Հռոմի պապի հարգանքին, ինչպես նաեւ Արեւմուտքի հետ իսլամական աշխարհի երկխոսությանը նպաստելու պատրաստակամությանը:

Միջազգային մամուլը նույնպես այցի կարեւոր արդյունքներից էր համարել Բենեդիկտոս 16-րդի այս պատրաստակամությունից բխող նպաստը, որը նա իբր բերել է երկու հակադիր աշխարհների երկխոսությանը: Մինչդեռ սեպտեմբերին Գերմանիայում պապը վիրավորանք հասցնելով իսլամական արժեքներին, հայտարարել էր, որ Մոհամմեդ մարգարեն անմարդկայնությունից եւ սատանայությունից զատ որեւէ նորություն ասպարեզ չի բերել:

Ակամա հարց է ծագում. ինչպե՞ս է պատահել, որ սեպտեմբերին Գերմանիայում իսլամական աշխարհին կոպտորեն վիրավորող Բենեդիկտոս 16-րդ պապը նոյեմբերի վերջին թուրքիայում կերպարանափոխվում է եւ սկսում ծառայել մահմեդականների հետ հրիսոնյաների միասնությանը:

Հարցի պատասխանը նոյեմբերի 4-ի համարում անուղղակիորեն տվել է իտալական «Լա Ստամպա» թերթը, նշելով, որ Բենեդիկտոս 16-րդը դիմել է 83-ամյա Հենրի Քիսինջերին եւ առաջարկել նրան դառնալ իր խորհրդականը: Առաջարկն ընդունվել է: Ըստ իտալական թերթի, որը հենվում է Վատիկանի աղբյուրների վրա, Քիսինջերը Հռոմի պապին խորհուրդներ է տալու արտաքին քաղաքականության, իսլամական աշխարհի հետ հարաբերությունների, Պաղեստին-Իսրայել հակամարտության եւ Իրանի հարցերում: Նույն աղբյուրների համաձայն, Բենեդիկտոս 16-րդ պապը իսլամական աշխարհի վրդովմունքին արժանացած հայտարարություններն արել է Քիսինջերի ազդեցությամբ:

«Ենի շաֆակ» դեկտեմբերի 12-ի համարում թերթի հեղինակ Իբրահիմ Կարագյուլը «Սուլթան Ահմեդի աղոթքն ու Վատիկան-«Նոր պահպանողականներ» դաշինքը» խորագրով նշում է, որ նախորդ՝ Հովհաննես-Պողոս Երկրորդ պապն էլ խորհրդական էր նշանակել սառը պատերազմի մեկ այլ ներկայացուցիչ Զբիգնեւ Բժեզինսկուն, պատճառաբանելով. «Նշանակել էր, որովհետեւ երկուսն էլ լեհասանցի էին, իսկ Ռացինգերը Գերմանիայի Բավարիա երկրամասից է, ծնունդով Բավարիայից է նաեւ հրեա ընտանիքի որդին՝ Քիսինջերը, որը նախկին Երկրորդ համաշխարհային պատերազմը նացիստների ցեղասպանության գոհը չդառնալու համար փախուստի էր դիմել»:

Կարագյուլը, նկատի ունենալով Քիսինջերի, Լուսիի եւ Վոլֆովիցի նշանակումները Հռոմի Բենեդիկտոս 16-րդ պապի խորհրդականներ, հարցնում է. «Վատիկանը «Նոր պահպանողականներն» են գրավե՞լ, թե՞ նրանց մեջ գոյություն ունի գաղտնի դաշինք»: Ապա նա եզրակացնում է. «Կարդինալ Ռացինգերը Հռոմի պապ ընտրվեց, որովհետեւ բազե էր: Վատիկանն, ինչպես առաջներում, վերսին տեղ է զբաղեցնում մեծ պատերազմում»:

Հռոմի պապի խորհրդականների պատասխանում Քիսինջերի, Լուսիի եւ Վոլֆովիցի նշանակման պարագայում խնդիրը ոչ այնքան Վատիկանի հետ «Նոր պահպանողականների» դաշինքն է, որքան Իսրայելից ուղղորդվող եւ պատասխանական Վաշինգտոնի գործունեությունը լիարժեքորեն վերահսկող «Նոր պահպանողականների» վերահսկողության հաստատումը նաեւ Վատիկանի վրա: Դա իրականացվում է անմիջականորեն պապի միջոցով:

Ինչ վերաբերում է իսլամական աշխարհի հետ Արեւմուտքի երկխոսությանը նպաստելու նրա այսպես կոչված պատրաստակամությանը, ապա դա էլ պետք է պայմանավորել «Քաղաքակրթությունների հակամարտության փոխարեն հակամարտությունը տվյալ քաղաքակրթության ներսում հրահրելու» խորհրդական Քիսինջերի թեզով:

Ակնհայտ է, որ մահմեդական արժեքներին հասցված ամեն մի վիրավորանք, այն էլ Վատիկանից, սերտորեն կմիավորի իսլամական աշխարհին, իսկ միավորումը որպես այդ աշխարհն Արեւմուտքին հակադրելու դրսեւորում, միանգամայն հակասում է հակամարտությունը քաղաքակրթության ներսում հրահրելու տրամաբանությանը: Այլ կերպ, Թուրքիա կատարած այցի ընթացքում իսլամական աշխարհի եւ Արեւմուտքի երկխոսությանը «նպաստելիս» Հռոմի պապը ոչ թե կերպարանափոխվել է, այլ «Նոր պահպանողականները», համոզվելով «Քաղաքակրթությունների հակամարտության» անողոքակահարմարության մեջ, փոխել են իրենց ռազմավարությունը եւ որդեգրել «հակամարտությունը տվյալ քաղաքակրթության ներսում հրահրելու դիրքորոշում»:

ՀԱՅՈՐ ՅԱՔԻԲՅԱՆ

ՈՒՍՍԱՍՏԱՆ

«Պուտինը նախագահ կմնա միայն 3-րդ աշխարհամարտի կամ արտակարգ դրության դեպքում»

Ռուսաստանի Դաշնության ԿԸՀ ղեկավար Ալեքսանդր Վեշնյակովը հրապարակել է Ռուսաստանի 2008 թ. նախագահական ընտրությունների օրը: Նրա հաշվարկների համաձայն, քվեարկությունը տեղի կունենա կիրակի օրը՝ 2008 թ. մարտի 9-ին:

Այս կապակցությամբ «Նեզավիսիմայա գազետա» թերթը գրում է, որ Վեշնյակովն իր հայտարարությամբ վերջ դրեց պետության ներկայիս ղեկավարի պատասխանատվության 3-րդ ժամկետի հնարավորության հետ կապված խոսակցություններին:

Անդրադառնալով նախագահի վարչակազմի խորհրդական Գլեբ Պավլովսկու վերջերս տված հարցազրույցին, թերթը հետեւություն է անում. «Հիմա Վլադիմիր Պուտինի նախագահական լիազորությունների ժամկետը կարող են երկարաձգել միայն երկու իրադարձություններ՝ 3-րդ աշխարհամարտի ծագումը կամ սոցիալ-քաղաքական իրավիճակի սրման հետեւանքով երկրում արտակարգ դրության հաստատումը»:

«Կոմերսանտ» թերթն իր հերթին մեջբերում է «Լեւադա» հետազոտական կենտրոնի տվյալները, որոնց համաձայն ՌԴ նախագահական ընտրություններում գլխավոր ախոյանները կլինեն փոխվարչապետ Դմիտրի Մեդվեդեւը եւ պատասխանության նախարար Սերգեյ Իվանովը: Եթե ընտրություններն անցկացվեին առաջիկա կիրակի, նրանք կստանային համապատասխանաբար 38 եւ 23 տոկոս (անշուշտ, Պուտինի թեկնածության բացակայության դեպքում):

Պ. Ք.

Պոլոնիումից ռումբ չես սարքի

Ակադեմիկոս Յուրի Հովհաննիսյանը, որը Դուբնայի միջուկային հետազոտությունների միացյալ ինստիտուտում միջուկային ռեակցիաների լաբորատորիայի ղեկավարն է, ռուսական լրատվամիջոցներում հայտարարել է, որ անցյալում գերհզել է այն տեսակետը, թե պոլոնիում-210-ը կարող է լինել էներգիայի աղբյուր, մասնավորապես ալֆա-մասնիկների շնորհիվ: Բայց հետագայում գիտնականներն այդ մտադրությունից հրաժարվել են պոլոնիումի կարճակեցության եւ ճառագայթային պատասխանության բարդությունների պատճառով:

Շատ լաբորատորիաներում չնչին քանակությամբ պոլոնիում կա զանազան դետեկտորների կարգաբերման համար: Իսկ ատոմային ռումբ պոլոնիումից անհնար է պատրաստել: Պոլոնիումը պահպանվում է 138 օր, ընդսմին վտանգավոր չէ, եթե պահվում է բացարձակ հերմետիկ փաթեթավորմամբ:

Ինչ վերաբերում է Անգլիայում պոլոնիումի հայտնվելուն, այնտեղ չեն հոգացել հերմետիկության մասին: Պատասխանական հաղորդումներում (Լիտվինենկոյի թունավորում եւ այլն) խոսվում է միլիգրամների մասին: Բայց հարկ է իմանալ, որ 1 միլիգրամ պոլոնիումի ճառագայթումը 40 կյուրի կազմող վիթխարի ռադիոակտիվություն է եւ համապատասխանում է մոտ 40 գրամ ռադիումին: Նման ռադիոակտիվությունը հետը «քարշ տալը» պարզապես խելահեղություն է: Պոլոնիումի նույնիսկ հազարապատիկ պակաս քանակությունը կարող է մեծ բարդություններ առաջացնել:

Գեներալները Բուշին հորդորում են Իրաքում փոխել ռազմավարությունը

Ամերիկյան բանակի շտաբների պետերի միացյալ կոմիտեի բարձրաստիճան անդամները նախագահ Ջորջ Բուշին խորհուրդ են տվել Իրաքում փոխել զինված ուժերի օգտագործման ռազմավարությունը: «Վաշինգտոն փոստ» թերթի տվյալներով, զորապետները պահանջում են, որ ամերիկյան զորաբաժնի գլխավոր խնդիրը դառնա ոչ թե գրոհայինների դեմ կռվելը, այլ իրաքյան բանակին աջակցելը եւ ահաբեկիչներ որոնելը:

Իրաքում ամերիկյան ուժերի հրամանատար, գեներալ Ջորջ Քեյսին մտադիր է ներկայացնել իրաքյան քաղաքներից բոլոր զորքերի դուրսբերման եւ մի քանի հենակետերում դրանց կենտրոնացման ծրագիր: Դրա համաձայն, գրոհայինների դեմ գործող 15 բրիգադների կեսը պետք է զբաղվի Իրաքի անվտանգության ուժերի մարզումներով:

Գեներալներն անհրաժեշտ չեն համարում Իրաքում ամերիկացի զինծառայողների թվակազմի ավելացումը: Օրերս «Իրաքի հետազոտման խմբի» պատրաստած զեկուցագրի հրապարակումից հետո նախագահ Բուշը խոստովանել էր իրաքյան ռազմավարության փոփոխման անհրաժեշտությունը, բայց հրաժարվել էր գրոհայինների առաջնորդների հետ վարվող բանակցություններին մասնակից դարձնել Իրանի եւ Սիրիայի ներկայացուցիչներին:

Պաղեստինցիների փոխհրաձգության ժամանակ վիրավորվել է վարչապետի որդին

Հանիեն 35 մլն դոլար թողեց Եգիպտոսում

Պաղեստինի վարչապետ, «Համաս» արմատական շարժման գործիչ Իսմայիլ Հանիեի գլխավորած պատվիրակությունը Եգիպտոսից Գազայի հատված վերադառնալիս հինգշաբթի ուշ երեկոյան գնդակահարության տակ է ընկել: Դրա հետեւանքով տպանվել է վարչապետի թիկնապահներից մեկը: Վիրավորվել են վարչապետի 27-ամյա որդին՝ Աբեդ Հանիեն, ինչպես նաեւ քաղաքական խորհրդականը եւ մեկ ուրիշ թիկնապահ: Հաղորդվում է, որ Աբեդ Հանիեի կյանքին վտանգ չի սպառնում:

Ֆրանսիայի Լուսնը նշում է, որ միջադեպը տեղի է ունեցել Ռաֆահ քաղաքի սահմանային անցակետում: Նույն օրն ավելի վաղ մի քանի անգամ փոխհրաձգություն էր ծագել պաղեստինյան հակամարտ շարժումների՝ «Համասի» եւ նախագահական «Ֆաթհի» զինախմբի միջեւ: Վերջին փոխհրաձգությունն սկսվել է այն պահին, երբ մի քանի ժամ սպասելուց հետո Հանիեի պատվիրակությունն իրավունք է ստացել հատելու Ռաֆահի անցակետը:

Պատվիրակության վերադարձն ուշացրել էին եվրոպացի դիտորդները, որոնք երկար ժամանակ չէին բացում անցակետը, վախենալով սահմանի մոտ հավաքված հազարավոր համասականների հարձակումից:

Դրանից առաջ անցակետը փակ էր Իսրայելի պատասխանության նախարար Ամիր Պերեցի կարգադրությամբ, որպեսզի Հանիեն Գազա չվերադառնա 35 մլն դոլար կանխիկ դրամով: Արեւմուտքի ֆինանսական օգնությունից զրկված Պաղեստինի վարչապետն այդ գումարը հանգանակել էր արաբական երկրներում իր շրջագայության ընթացքում եւ ի վերջո ստիպված եղավ թողնել Եգիպտոսի բանկերից մեկում, որտեղից հետագայում փողերը պետք է փոխանցվեն Պաղեստինյան ինքնավարության հաշիվներին:

Հանիեի շախմբի ուշացումից դժգոհ «Համասի» զինյալները ուշ երեկոյան գրոհել են անցակետը: Նրանք շտապեցին ներխուժել «Ասված մեծ է, ազատագրենք այս վայրը» բղավոցներով, օդ կրակելով, պատուհանները, կահույքը եւ համակարգիչները ջարդելով:

Ի պատասխան՝ Ռաֆահի անվտանգությունն ապահովող նախագահական թիկնազորի մարտիկները կրակ են բացել հարձակվողների վրա: Փոխհրաձգության ընթացքում վիրավորվել են առնվազն 25 անձինք, այդ թվում՝ «Համասի» երկու ակտիվիստներ:

Սահմանի մոտ հավաքված խաղաղ բնակիչները սարսափահար փախուստի են դիմել: Օտարերկրացի դիտորդները սահմանապահների պատասխանությամբ հեռացել են:

Միջադեպի շրջանում նույն օրը որոտացել է երկու ուժգին պայթյուն, իսկ Ռաֆահից մեկուկես կիլոմետր հեռավորության վրա գրոհայիններն անցք են բացել սահմանային արգելափակոցի մեջ:

Պաղեստինյան Վաֆա գործակալության տվյալներով, նախագահ Մահմուդ Աբբասն «ափսոսանք» է արտահայտել փոխհրաձգության կապակցությամբ:

Վարչապետ Հանիեն սահմանում եղած քաոսի համար մեղադրել է Իսրայելի իշխանություններին: Իսկ փոխհրաձգության համար նա պատասխանատու է համարում նախագահ Մահմուդ Աբբասի պահակազորին: «Մենք գիտենք, թե ով է կրակել մեր ավտոմեքենայի վրա եւ վիրավորել իմ մարդկանց: Գիտենք, թե ինչ ենք անելու», ասաց է Հանիեն:

Պ. Ք.

Մշակույթ

«Մարտիրոս Սարյանը հատելու եւ անցնելու է միլիոն դոլարի սահմանը»

Եթե գեղարվեստական արժեքը պայմանավորված է նաեւ դրամական արժեքով

*Երեկվա «Ազգ»-ի համարում տեղեկացրել էինք Լոնդոնի Սոթբիի աճուրդի տանը բարձր գնով վաճառված Մ. Սարյանի բնանկար ափսեաներից մեկի մասին: Սարյանական նկարի գնի ցայսօր ամենաբարձր այս ցուցանիշը մեզ մեծ գոհունակություն պատճառեց, եւ վերջապես հավաստեց ամենակարեւորը՝ XX դարի գույնի յուրատիպ, մեծ վարպետի արվեստի միջազգային արժեւորումը: Մինչեւ Սոթբի հասնելը «Փողոց. երեկո» նկարն ունեցել է հետաքրքրական պատմություն, որի անմիջական գործող անձը Սարյան բանգարանի երկարամյա տնօրեն, վարպետի ցուցահանդեսները եվրոպական մի շարք երկրներում կազմակերպած, արվեստաբան **Շահեն Խաչատրյանն** է. նրան էլ դիմեցինք մանրամասնելու այն:*

-Պրն Խաչատրյան, Սոթբիում Սարյանի նկարին տրված գինը ձեզ նոկնոթն զարմանք է պատճառել:

-Շատերին գուցե դա զարմանալի է թվում, սակայն ինձ՝ ոչ: Խորապես ճանաչելով Սարյանի արվեստը եւ իր լուվային, եւ դա հարյուր տոկոսով տարյանական գործ է, եւ որ անմիջապես պետք է գնալ Բրյուսել եւ բերել այդ նկարը: Մեկ ժամ անց նա մեկնեց: Ես գլխի ընկա, թե ինչու Չերկալովան Սարյանի 100-ամյակին նվիրված կասոյի թանգարանում կազմակերպված վարպետի վաղ շրջանի գործերի ցուցահանդեսին: Իհարկե, եթե բարեկամիս՝ Կարիկին խնդրեի, կգիջեր այդ գործը մեր թանգարանին, բայց իմ խնդրանքով նա մի հրաշք վերադարձրեց մի քանի օր առաջ Լոնդոնի աճուրդի կասալոգը, որտեղ այդ նկարի մասին ներկայացված էր իմ կարծիքը եւ հասվածներ իմ հոդվածից: Մյունխենյան այս նկարը ինձ խիստ կասկածելի էր թվում, ուզում էի պարզել՝ արդյոք նշվել է իմ անունը այդ նկարի առիթով: Ինքնաթիռի ուղեւորման պատճառով ինձ բախտ չվիճակվեց ներկա գտնվել վաճառքին, բայց բարեկամս հետեւել էր աճուրդի ողջ ընթացքին եւ տեղեկացրեց, որ Սարյանի նկարը վաճառվել է 120.000 եվրոյով եւ ինձ տվեց կասալոգը: Նկարի մասին տեղեկությունները ինձ զարմացրին: Նկարի հաստատումը տվել էր Մոսկվայի Գրաբարի անվ. ինստիտուտը: Մի քանի տարի առաջ Սարյանի մեկ նկարի իսկությունը ճշտելու համար ինձ հրավիրել էին Մոսկվա, իսկ այս առիթով ոչ մի հարցում չէր եղել: Մինչդեռ այս նկարը տեսել էի համակարգչի ծրագրերից մեկում եւ ասել, որ դա Սարյանի վրձնին չի պատկանում: Հայտնի է, որ 1912-ին վարպետը նկարել է «Աբով սարը եւ անցնող ուղտերը», որ լեռնալանջերը կանաչ շերտերով են պատկերված: 1926 թվականին նա ստեղծել է մեկ այլ գործ՝ Բաքու գնալու ճանապարհի տպավորությամբ, ուղտեր պատկերող «Քարավան» նկարը, որ հեռվում երեւացող լեռնալանջերին կանաչ շերտեր չկան: Կարո՞ղ էր արդյոք 1926-ին արված գործում 1912-ին նկարված լեռները հայտնվեին: Վաճառված նկարում Սարյանին բնորոշ կենդանության շունչը բացակայում է: Թույլ է պատկերի գեղանկարային կառուցվածքը:

«Փողոց. երեկո», 1910

«Գեղամա սարերը», 1926

«Քարավան», 1926



Մարտիրոս Սարյան ?, «Ուղտեր», 1926

-Դուք, ինչպես մեզ է հայտնի, տասնյակներով նկարներ եք բերել Սարյան թանգարան: Ինչո՞ւ այդ մեկն էլ չբերեցիք:

-Նախ չմոռանամ ասել, որ այս գործը Պասմաճյանը սիրահոժար տրամադրել է ներկայացնելու եվրոպական քաղաքներում (Պադուա, Դարմշտատ, Բոլոնիա) կազմակերպված վարպետի անհատական ցուցահանդեսներին: Կարիկի՝ մոսկովյան անհետացումից հետո կինը չզլացավ նկարը ցուցադրելու Սարյանին եվրոպական լայն ճանաչում բերած, Պիսական նկարների վաճառքին, որ ընդգրկված էր նաեւ Սարյանի «Ուղտեր» նկարը՝ արված 1926 թ.: Ուզում էի անպայման ներկա լինել եւ գնել վաճառքի կասալոգը, որվհետեւ ձեռքիս էր մի քանի օր առաջ Լոնդոնի աճուրդի կասալոգը, որտեղ այդ նկարի մասին ներկայացված էր իմ կարծիքը եւ հատվածներ իմ հոդվածից: Մյունխենյան այս նկարը ինձ խիստ կասկածելի էր թվում, ուզում էի պարզել՝ արդյոք նշվել է իմ անունը այդ նկարի առիթով: Ինքնաթիռի ուղեւորման պատճառով ինձ բախտ չվիճակվեց ներկա գտնվել վաճառքին, բայց բարեկամս հետեւել էր աճուրդի ողջ ընթացքին եւ տեղեկացրեց, որ Սարյանի նկարը վաճառվել է 120.000 եվրոյով եւ ինձ տվեց կասալոգը: Նկարի մասին տեղեկությունները ինձ զարմացրին: Նկարի հաստատումը տվել էր Մոսկվայի Գրաբարի անվ. ինստիտուտը: Մի քանի տարի առաջ Սարյանի մեկ նկարի իսկությունը ճշտելու համար ինձ հրավիրել էին Մոսկվա, իսկ այս առիթով ոչ մի հարցում չէր եղել: Մինչդեռ այս նկարը տեսել էի համակարգչի ծրագրերից մեկում եւ ասել, որ դա Սարյանի վրձնին չի պատկանում: Հայտնի է, որ 1912-ին վարպետը նկարել է «Աբով սարը եւ անցնող ուղտերը», որ լեռնալանջերը կանաչ շերտերով են պատկերված: 1926 թվականին նա ստեղծել է մեկ այլ գործ՝ Բաքու գնալու ճանապարհի տպավորությամբ, ուղտեր պատկերող «Քարավան» նկարը, որ հեռվում երեւացող լեռնալանջերին կանաչ շերտեր չկան: Կարո՞ղ էր արդյոք 1926-ին արված գործում 1912-ին նկարված լեռները հայտնվեին: Վաճառված նկարում Սարյանին բնորոշ կենդանության շունչը բացակայում է: Թույլ է պատկերի գեղանկարային կառուցվածքը:

Համենայնդեպս, չի բացառվում, որ արվեստի գործերի վաճառքի ընթացքում նման երեւույթներ արձանագրվեն:

-Այնուամենայնիվ, Լոնդոնյան Սոթբին հիշարժան է մեզ համար եւ, ինչ եք կարծում, Սարյանի գործերը հաճախ կհայտնվե՞ն նշանավոր աճուրդներում:

-Չեմ կարծում: Նման աճուրդներում Մ. Սարյանը, ինչպես եւ մի շարք հայ նկարիչներ ներկայացվում են ռուսական բաժնում: Եվ թանգարաններից դուրս մնացած սարյանական վաղ շրջանի եւ գեղարվեստական բարձրարժեք գործեր շատ քիչ կան: Ուստի, ներկայացվող նկարները առավելաբար սովետական շրջանի գործեր կլինեն, որոնք վարպետը մեծ մասամբ կամ նվիրել, կամ վաճառել է:

Եվ պատահական չէ, որ «Փողոց. երեկո» նկարը շուրջ 800.000 դոլարով վաճառվեց, թեեւ իմ համոզմամբ նա շատ ավելին արժե: Կարեւորն այն է, որ նման աճուրդները ֆինանսական այսքիսի արտահայտությամբ նպաստում են ավելի խոր ճանաչելու Սարյանի ստեղծագործության գեղարվեստական բուն արժեքը: Եվ կարծում եմ, եթե չլինեին խորհրդային ժամանակները, Մ. Սարյանը շատ ավելի երիտասարդ ոգիի վայելեր իր արվեստի փառքը:

Հարցազրույցը՝
ՄԵԼԻՆԱ ԲԱԲԱՅԱՆԻ

ՓՈՌՈՏՈՒ

«Դեղձանիկ»-ի կատարողները հավակնում են հաղթանակի

Սոչիում անցկացվում է «Արեւը ժպտում է բոլորին» վեցերորդ մոսկովյան միջազգային երիտասարդական մրցույթ-փառատոնը, որի շրջանակներում երիտասարդները կմրցեն վոկալի, խորեոգրաֆիայի, գործիքային կատարումների եւ կրկեսային ժանրերում: Այս մասին հաղորդում է Ռուսաստանի հայերի «Երկրամաս» թերթը, որի տեղեկությամբ մրցույթ-փառատոնին մասնակցում են Ռուսաստանի 67 քաղաքների երիտասարդ պարողներ եւ երգիչներ:

Թերթին հայտնել են, որ մրցույթում հաղթելու լուրջ հավակնություն ունի Ադլերից ժամանած «Դեղձանիկ» վոկալ եռյակը, որի կատարումները հայերեն են: Եթե անգամ նրանք չհաղթեն մրցույթում, արդա միեւնույնն է կբարունակեն իրենց կարիերան Մոսկվայում, որտեղից արդեն ստացել են ներկայանալի առաջարկներ:

Գ. Գ.

ՅՈՒՅՍԱՀԱՆԳԵՍ

Գերմանացի, հայ եւ վրացի ժամանակակից նկարչությունն ազգային պատկերասրահում

Ազգային պատկերասրահում երեկ ներկայացվեց ժամանակակից գեղանկարչական արվեստի ցուցադրություն՝ մասնակցությամբ գերմանացի, վրացի եւ հայ նկարիչների ափսեաների: Ցուցահանդեսը գերմանական դեսպանատան նախաձեռնությունն է, որը 2 ամիս առաջ Թբիլիսիում կազմակերպել էր ցուցահանդես՝ «Հանդիպում Փիրոսմանիի հետ» խորագրով: Երեւանյան «Հանդիպում Սարյանի հետ» ցուցահանդեսում ներկայացված նկարների գերակշիռ մասի հեղինակները գերմանացիներ էին, շուրջ 30 ափսեաների՝ Ինգե Շմիդ, Պիտեր Հերման, Ռոբերտ Վեբեր, Քրիստիան Լանգնդորֆ, Անդրեաս Հոմբերգ եւ ուրիշներ: 5 նկարիչներ ներկայացնում էին Վրաստանը, Հայաստանի մասնակցությունն ապահովել էին «Արամե» եւ «Գետրգյան» պատկերասրահները՝ Գետրգ Եղիազարյան, Ռուբեն Աբովյան, Տարոն Մուրադյան, Լիլիթ Սողոմոնյան... Ինչպես յուրաքանչյուր նմանաբնույթ ցուցահանդեսի նպատակը, այս մեկինն էլ արվեստի գործերի միջոցով տարբեր ժողովուրդների միջեւ փոխըմբռնումներն ակտիվացնելն է, հարաբերություններ ստեղծելը: Այս առումով երեկվանը ինչոր տեղ նաեւ քաղաքական նշանակությամբ էր, թեեւ ադրբեջանցիները մերժել էին իրենց մասնակցության հրավերը: Պատկերասրահի հասարակական կապերի պատասխանատու Անահիտ Մինասյանն այն կարծիքին է, որ ժամանակակից արվեստի շունչը ամենուր գրեթե նույնն է, որքան էլ, օրինակ գերմանացիների ազատության անհամեմատ հնարավորություններին: Բայց յուրաքանչյուր ժողովուրդ իր մշակութային կենսագրությամբ, չնայած համաշխարհայնացման տենդենցին, այսօրվա արվեստում էլ մնում է իր հոգեւոր հարստությունների կրողն ու արտահայտողը: Ինչպես ազգային պատկերասրահի տնօրեն Փարավոն Միրզոյանն ասաց. «Արվեստը հայրենիք չունի, բայց ամեն հայրենիք իր արվեստն ունի»:

Մ. Ք.

Վլադիմիր Կրամնիկ. «Մարդը դեռեւս հնարավորություն ունի հաղթելու»

«Դիտ Ֆրից» համակարգչային ծրագրից ափխարհի չեմպիոն Վլադիմիր Կրամնիկի պարտությունը շախմատի մասնագետներից շատերին այն համոզմանը բերեց, որ այլեւս անիմաստ է նման մրցախաղերի անցկացումը: Իսկ ահա «Սպորտ Էքսպրեսի» թղթակցի հետ ստորեւ ներկայացվող հարցազրույցում Վլադիմիր Կրամնիկն այլ կարծիքի է:

-Առաջին երկու պարտիաներն անցան ձեր առավելությամբ, 3-4-րդում թեեւ համակարգիչը խլեց նախաձեռնությունը, սակայն դուք դիմադրեցիք, 5-րդ պարտիան էլ ավարտվեց ոչ-ոքի: Եվ եթե 6-րդ պարտիայում էլ ոչ-ոքի խաղայիք, ապա կարելի էր ասել, որ դուք պատվով դուրս եկաք դժվարին քննությունից: Գուցե չարժե՞ր ռիսկի դիմել ավարտական պարտիայում:

-Ի՞նչ տարբերություն, թե ինչպիսի հաշվով պարտվեցի: 6-րդ պարտիայում վա-բանկ գնացի: Գիտեի, որ բարդ իրադրությունում կարող էի եւ հաղթել, թեեւ պարտվելու հավանականությունն ավելի մեծ էր: Սակայն ցանկանում էի փրկել խաղը, ինչը ցավոք չստացվեց:

-Բայց շախմատասերները դժվար են համակերպվում այն մտքին, որ ափխարհի չեմպիոնը պարտվեց համակարգչային ծրագրին: Դրանում ինչ-որ անբնական բան կա:

-Ընդհակառակը, անբնականն այն է, որ մարդը կարող է ինչ-որ չափով մրցակցել վայրկյանում 10 մլն գործողություն կատարող մեքենայի հետ: Իհարկե, հասկանում եմ, որ շախմատասերները իմ հաղթանակն էին ցանկանում: Բայց վաղուց արդեն պարզ է, որ համակարգիչների հետ մրցելը շատ դժվար է: Թեեւ եթե մրցախաղի նախապատրաստության համար ավելի շատ ժամանակ ունենայի, արդյունքն այլ կլիներ:

-Տպավորությունն այնպիսին էր, որ խաղային որակներով համակարգիչը ձեզ չգերազանցեց:

-Մրցախաղը հիմնականում հավասար պայքարում անցավ: Խնդիրն էլ հենց այն է, որ մարդը մնում է մարդ եւ կարող է սխալվել, ինչպես պատահեց ինձ հետ 2-րդ պարտիայում: Դա պայմանավորված էր այն բանով, որ Թոփալովի հետ ծանր մրցախաղից հետո լիովին չէի վերականգնվել:

-Մարդու պայքարը համակարգչի հետ կարելի՞ է ավարտված համարել:

-Այդպես չեմ կարծում: Հնարավոր է, մի քանի տարի անց նման մրցախաղ կրկին կայանա եւ այն ժամանակ 3-4 ամիս կհատկացնեմ նախապատրաստությանը: Կարծում եմ, որ համակարգչին հաղթելու շախմատիստի հնարավորությունը պահպանվում է:

-Ձեր կարծիքով նման մրցախաղերն ինչ-որ բան տալի՞ս են շախմատին:

-Կարծում եմ, մրցախաղը մեծ հետաքրքրություն էր առաջացրել ափխարհում: Այն լուսաբանեցին բազմաթիվ լրագրողներ, ինտերնետով մրցախաղին հետեւեցին միլիոնավոր շախմատասերներ: Այս ամենը շատ լավ է շախմատի համար:

-Իսկ ձեզ անձամբ ի՞նչ են տալիս այդ մրցախաղերը:

-Համակարգչային ծրագրերն այնքան են ուժեղացել, որ դրանցից հնարավոր է շատ բան սովորել:

-Ձեր առաջիկա ծրագրերն ու նպատակներն ինչպիսի՞ն են:

-Նախ ցանկանում եմ վերականգնվել ծանր մրցաշրջանից հետո: Սկզբունքորեն այն շատ հաջող էր ինձ համար, թեեւ բավական ծանր էր: Իսկ հետո կշարունակեմ խաղալ, կփորձեմ լավ արդյունքների հասնել: Իմ գլխավոր խնդիրն ափխարհի չեմպիոնի տիտղոսը պահպանելն է:

-Մրցախաղի ընթացքում Թոփալովի մենեջեր Սիլվիո Դանաիլովը հայտարարել էր, որ գումար են հայթայթել ձեր հետ նոր մրցամարտ անցկացնելու համար:

-Նրա հայտարարությունը մեկնաբանելու ցանկություն չունեմ: Նա եւ Թոփալովը շատ են սել: Քանի դեռ կոնկրետ ոչինչ չկա, չեմ ցանկանում այդ մասին խոսել:

-Ի՞նչ կասեք հունվարին անցկացվելիք Վեյք Ան Ձեեի մրցաշարի մասին:

-Կձգտեմ գրավել առաջին տեղը: Իմիջիայլոց, բոլոր մրցաշարերում էլ իմ առջեւ նման նպատակ եմ դնում: Մրցաշարն իրոք, որ ուժեղ կազմ է հավաքել: Ցավոք, կրկին ժամանակը չի բավականացնի, որպեսզի ինչպես հարկն է նախապատրաստվեմ:

-Բոննում մրցաշարի բացման արարողության ժամանակ դուք համակրելի աղջկա հետ էիք: Խոսակցություններ եղան, որ պատրաստվում եք ամուսնանալ:

-Շատ բան կարող են խոսել: Առայժմ ամուրի եմ:

-Այժմ, որտե՞ղ եք բնակվում:

-Շատ եմ ճանապարհորդում: Բնակվելու տեղ ունեմ Փարիզում, Գերմանիայում եւ Ռուսաստանում: Իսկ այն լուրերը, թե իբր ամենուր միլիոնավոր դոլարներ արժեցող բնակարաններ ունեմ, իրականությանը չեն համապատասխանում:

-Ի՞նչ կցանկանայիք ինքներդ ձեզ Նոր տարում:

-Ավելի ամուր առողջություն, երջանկություն անձնական կյանքում: Եվ իհարկե կցանկանայի շարունակել աղացուցել, որ ափխարհի ուժեղագույն շախմատիստն եմ:

Էնեն Արդենին շնորհվել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի չեմպիոնի տիտղոս

Ափխարհի այս տարվա լավագույն թենիսիստուհի, բելգիացի Ժյուստին Էնեն Արդենն արժանացել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի չեմպիոնի պատվավոր տիտղոսին: Իր պատմության մեջ առաջին անգամ ՅՈՒՆԵՍԿՕ-ն պատվավոր տիտղոսը շնորհում է մարզուհուն: Մրցանակի հանձնման հանդիսավոր արարողությունը տեղի է ունեցել Փարիզի Ռոլան Գարոսի անվան թենիսի կորտերում: Հենց այնտեղ էլ Էնեն Արդենը 3 անգամ հաղթող է ճանաչվել թենիսի Ֆրանսիայի բաց առաջնությունում: Պատվավոր մրցանակը բելգիացի թենիսիստուհուն հանձնեց ՅՈՒՆԵՍԿՕ-ի տնօրեն, ճապոնացի Կոիչիրո Մացուուրան:

Էնեն Արդենը 29 մրցաշարերի հաղթող է: Պարգեւը ստանալուց հետո նա նշել է, որ ոչ միայն սպորտով է զբաղվում, այլ երջանիկ է նախեւառաջ իր ընտանիքով: Որպես ՅՈՒՆԵՍԿՕ-ի չեմպիոն, այժմ նա պարտավոր է այդ կազմակերպությանն ամեն կերպ աջակցել դոպինգի դեմ մղվող պայքարում:

Հիշեցնենք, որ բոլորովին վերջերս ՅՈՒՆԵՍԿՕ-ի չեմպիոնի տիտղոսը շնորհվել էր Կլիչկո եղբայրներին: Պատվավոր տիտղոսին տարբեր տարիներ արժանացել են նաեւ հոկեյիստ Վյաչեսլավ Ֆետիսովը, հանրահայտ ձողացատկորդ, ափխարհի բազմակի ռեկորդակիր Սերգեյ Բուբկան, գերմանացի ավտոմրցարշավորդ Միխայիլ Շումախերը, ֆուտբոլի արքա Պելեն, ֆրանսիացի ձյուդոյիստ Դավիթ Դույեն:

Ասաֆա Պաուելը Ճամայկայի լավագույն մարզիկ

100 մ վազքի ափխարհի ռեկորդակիր Ասաֆա Պաուելը ճանաչվել է Ճամայկայի լավագույն մարզիկ: Ընթացիկ մրցաշրջանում էլ անվանի արագավազորը հիանալի հանդես եկավ եւ երկու անգամ կրկնեց իր իսկ համաափխարհային լավագույն ցուցանիշը՝ մրցասարածությունը հաղթահարելով 9,77 վրկ-ում: Բացի այդ, Պաուելը թեթեւ աթլետիկայի պատմության մեջ առաջին մարզիկն է, որին հաջողվել է 12 անգամ մեկ մրցաշրջանի ընթացքում 100 մ մրցասարածությունը հաղթահարել 10 վրկ-ից շուտ: Այս ցուցանիշը եւս ռեկորդային է եւ այդ անվանակարգում էլ նրա անունը կարող է գրանցվել Գինեսի ռեկորդների գրքում: Ներկայումս նա այդ գրքում գրանցված է որպես ափխարհի ամենաարագավազ մարդ:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Միխայ Ստոյկիցան պաշտոնանկ է արվել

Հայաստանի հավաքականի եւ Երեւանի «Փյունիկի» նախկին գլխավոր մարզիչ, ռումինացի Միխայ Ստոյկիցան պաշտոնանկ է արվել Քուվեյթի գլխավոր մարզչի պաշտոնից: Երկրի ֆուտբոլի ֆեդերացիայի տարածած հայտարարության մեջ նշվում է, որ Ստոյկիցան հաշվի չէր առնում ազգային հավաքականների կոմիտեի խորհուրդները, չէր արձագանգում իր հասցեին հնչած կառուցողական քննադատությանը, չէր կարետրում Ծոցի գավաթի առաջիկա խաղարկությունը իր գլխավորած հավաքականի համար:



Ստոյկիցան Քուվեյթի հավաքականի ղեկը ստանձնել էր 2005 թ. հուլիսից՝ գլխավոր մարզչի պաշտոնում փոխարինելով Մոհամեդ Իբրահիմին: Նրան չհաջողվեց հավաքականի հետ նվաճել 2006 թ. ափխարհի առաջնության եզրափակիչ փուլի եւ 2007 թ. Ասիայի գավաթի խաղարկության ուղեգիր:

Քուվեյթի հավաքականի գլխավոր մարզչի պաշտոնակատար է նշանակվել Սալեխ Զակարիան, որին օգնելու են Ֆուզիա Իբրահիմն ու Զամալ Յակուբը: Զակարիան Քուվեյթի հավաքականը գլխավորել էր դեռեւս 1978 թ.: Նրա գլխավորությամբ քուվեյթցիները դարձել են Ծոցի գավաթակիր:

Վիճակահանությունն անվանեց մրցակիցներին

Երեկ Շվեյցարիայի Նիոն քաղաքում կայացավ չեմպիոնների լիգայի եւ ՈՒԵՖԱ-ի գավաթի խաղարկությունների վիճակահանությունը:

Չեմպիոնների լիգայի մրցաշարում նախապես մասնակից թիմերը բաժանվել էին երկու զամբյուղի: Մի զամբյուղում ընդգրկվել էին խմբային մրցաշարում առաջին տեղերը զբաղեցրած թիմերը, մյուսում՝ խմբերում 2-րդը ճանաչված ակումբները: Բացի այդ, վիճակահանության ընթացքում պահպանվեցին հետեւյալ սահմանափակումները. միեւնույն երկրի եւ խմբի թիմերը հաջորդ փուլում միմյանց հետ չեն կարող հանդիպել: Վիճակահանությամբ, չեմպիոնների լիգայի 1/8 եզրափակիչում կհանդիպեն հետեւյալ զույգերը:

«Պորտո» (Պորտուգալիա)-«Չելսի» (Անգլիա)
«Սելթիկ» (Շոտլանդիա)-«Միլան» (Իտալիա)
«Էյնդհովեն» (Հոլանդիա)-«Արսենալ» (Անգլիա)
«Լիլ» (Ֆրանսիա)-«Մանչեսթր Յունայթեդ» (Անգլիա)
«Ռոմա» (Իտալիա)-«Լիոն» (Ֆրանսիա)
«Բարսելոնա» (Իսպանիա)-«Լիվերպուլ» (Անգլիա)
«Ռեալ» (Իսպանիա)-«Բավարիա» (Գերմանիա)
«Ինտեր» (Իտալիա)-«Վալենսիա» (Իսպանիա)

Անդրադառնալով վիճակահանության արդյունքներին, նշենք ուշագրավ զույգերին: Նախ եւ առաջ հարկ է նշել առաջին զույգին, որտեղ հանդիպելու են ժողզ Մոուրինյոյի նախկին եւ ներկայիս ակումբները՝ «Պորտոն» ու «Չելսին»: 2004 թ. Մոուրինյոյի գլխավորությամբ «Պորտոն» դարձավ չեմպիոնների գավաթակիր, իսկ ահա անցյալ տարի նրան չհաջողվեց նույն սխրանքն իրագործել «Չելսիի» հետ:

Չեմպիոնների լիգայի յուրօրինակ ռեկորդակիր Մադրիդի «Ռեալը», որ 9 անգամ նվաճել է պատվավոր մրցանակը, ուժերը կչափի քառակի գավաթակիր Մյունխենի «Բավարիայի» հետ: Իսկ ահա ներկայիս գավաթակիր իսպանական «Բարսելոնի» մրցակիցը հնգակի գավաթակիր «Լիվերպուլն» է: Առաջին հանդիպումները տեղի կունենան փետրվարի 20-21-ին զույգերում առաջինը նշված թիմերի դաշտերում, պատասխան խաղերը կկայանան մարտի 6-7-ին:

ՈՒԵՖԱ-ի գավաթի խաղարկությունում տեղի ունեցավ 1/16 եւ 1/8 եզրափակիչի մասնակիցների վիճակահանությունը:

1/16 եզրափակիչ

1. «Վարեգեմ» (Բելգիա)-«Նյուքասլ» (Անգլիա)
2. «Բրագա» (Պորտուգալիա)-«Պարմա» (Իտալիա)
3. «Լանս» (Ֆրանսիա)-«Պանաթինաիկոս» (Հունաստան)
4. «Բայեր» (Գերմանիա)-«Բլեքբյորն» (Անգլիա)
5. «Հաքոել» (Թել Ավիվ, Իսրայել)-«Գլազգո Ռեյնջերս» (Շոտլանդիա)
6. «Լիվորնո» (Իտալիա)-«Էսպանյոլ» (Իսպանիա)
7. «Ֆեյենոորդ» (Հոլանդիա)-«Տոտենհեմ» (Անգլիա)
8. «Ֆեներբախչե» (Թուրքիա)-«Ալկմաար» (Հոլանդիա)
9. «Վերդեր» (Գերմանիա)-«Այաքս» (Հոլանդիա)
10. «Սպարտակ» (Ռուսաստան)-«Սելթա» (Իսպանիա)
11. ԲԿՄԱ (Ռուսաստան)-«Մաքաբի» (Հայֆա, Իսրայել)
12. ԱԵԿ (Հունաստան)-ՊՍԺ (Ֆրանսիա)
13. «Բենֆիկա» (Պորտուգալիա)-«Դինամո» (Ռումինիա)
14. «Ստյաուա» (Ռումինիա)-«Սեւիլիա» (Իսպանիա)
15. Շախտյոր» (Ուկրաինա)-«Նանսի» (Ֆրանսիա)
16. «Բորդո» (Ֆրանսիա)-«Օսասունա» (Իսպանիա)

Խաղերը կկայանան փետրվարի 14-15-ին եւ 22-ին:

1/8 եզրափակիչ

1-ին եւ 8-րդ զույգերի հաղթողները
11-րդ եւ 6-րդ զույգերի հաղթողները
5-րդ եւ 16-րդ զույգերի հաղթողները
2-րդ եւ 7-րդ զույգերի հաղթողները
14-րդ եւ 15-րդ զույգերի հաղթողները
3-րդ եւ 4-րդ զույգերի հաղթողները
12-րդ եւ 13-րդ զույգերի հաղթողները
10-րդ եւ 9-րդ զույգերի հաղթողները

Հանդիպումները տեղի կունենան մարտի 8-ին եւ 15-ին:

Էջը պատրաստեց ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

Թղթակից անդամների ընտրություններում ամեն ինչ հաշվեկշռված էր

Ընդհանուր ժողովում ոչ մի թեկնածու չկորցրեց իր տեղը

Գիտությունների ազգային ակադեմիայի ընդհանուր ժողովում երեկ հաստատվեցին նախորդ օրն ընտրված բոլոր 36 թեկնածուները: Անկանխատեսելի ոչինչ տեղի չունեցավ, ոչ մի թեկնածու իր տեղը չկորցրեց, ժողովից հետո ակադեմիայի նախագահի հրավիրած երեկվա ասուլիսում ոչ մի դժգոհություն ու բողոք չհնչեց: Այս ամենն արդեն իսկ բավականին ոգեշնչող է եւ ինքնին փաստում է, որ ամեն ինչ հաշվեկշռված ու մտածված էր մաթեմատիկական ճշգրտությամբ: Ռադիկ Մարտիրոսյանն ու ակադեմիայի բաժանմունքների ակադեմիկոս քարտուղարներն անընդհատ շեշտում էին թեկնածուների գիտական վաստակը միջազգային չափանիշներով գնահատելը: Ակադեմիայի նախագահը նույնիսկ հիշեց մեր թերթի վերջին հրապարակումներից մեկը, որտեղ խոսվել էր «գավառական չափանիշներով դոկտորներ ու ակադեմիկոսներ դառնալու մասին»: Նկատելի էր, որ նա բավականին խոցվել էր «Գիտության զարգացմանն աջակցող հիմնադրամի» նախագահ Հարություն Կարապետյանի խոսքից՝ «Չափանիշները, որոնցով մենք առաջնորդվել ենք, համընդհանուր են, ոչ թե գավառական, ինչպես վերջերս կարդացի «Ազգ» թերթի հարցազրույցներից մեկում: Շատ կներեք, գիտության մեջ գավառական չափանիշներ գոյություն չունեն, կան միջազգային գիտական չափանիշներ, որոնցով որոշվում է տվյալ գիտնականի գիտական արդյունքը», ասաց Ռ. Մարտիրոսյանը: Նրա նշած գլխավոր չափանիշներից մեկը արտասահմանյան որեւէ պարբերականում հրապարակված լինելն էր: Երկրորդ չափանիշը՝ գիտական կադրեր՝ գիտությունների թեկնածուներ, դոկտորներ պատրաստելը, երրորդը՝ գիտակազմակերպչական գործունեությունը՝ առնվազն լաբորատորիայի վարիչ, ինստիտուտի փոխտնօրեն, պրոռեկտոր կամ ռեկտոր լինելը: Վերջին տարիներին ավելացել է եւս մեկ չափանիշ՝ չափազանց կարեւոր է, թե տվյալ գիտնականը միջազգային ինչ դրամաշնորհների է արժանացել, որովհետեւ հայտնի բան է՝ դրամաշնորհները հենց այնպես չեն տալիս: Վերջին չափանիշն ավելի վառ դարձնելու համար պրն Մարտիրոսյանն ասաց, ակադեմիկոս Շումուրյանը ստացել է 600 հազար դոլար դրամաշնորհ, մեկ ուրիշը՝ մոտ 1 մլն դոլար: «Ահա սրանք են չափանիշները, եւ գավառական չափանիշների մասին պետք է մոռանալ», իր խոսքն ամփոփելով ասաց նա:

Կարելի է, իհարկե, մոռանալ, սակայն մի քիչ դժվար է այն պարագայում, երբ հայագիտության գծով՝ այն էլ գրականագիտություն, լեզվաբանություն եւ էլի մի քանի մասնագիտությունների թղթակից անդամներ են ընտրվում գործունեության լայն ասպարեզ եւ ազդեցության հզոր լծակ ունեցողները: Այս ամենի խորքում խորհրդարանական եւ նախագահական ընտրությունների նախընտրական արշավին նախապատրաստվելու լույսն է երեւում, որը չի նկատի միայն տկար տեսողություն ունեցողը:

«Հստակ կարող եմ ասել, որ գիտությունների ազգային ակադեմիան խորհրդարանական ընտրությունների ժամանակ նախընտրական շտաբ չի լինելու: Երբ նախագահական ընտրությունները մոտենան, այն ժամանակ էլ հայտարարություն կանենք դրա մասին: Եթե մոռացել եք, համալսարանը մի քանի տարի շտաբի չի վերածվել, նույնիսկ թեկնածուների հետ հանդիպումներ տեղի չեն ունեցել, որովհետեւ այդ կառույցները չպետք է քաղաքականացվեն: Ես ձեզ հավաստացնում եմ, որ թղթակից անդամների ընտրություններում քաղաքական ոչ մի միտում չեմ տեսել եւ ոչ մի կուսակցության հետ նույնիսկ ակնարկ չենք ունեցել: Ընտրված թեկնածուների մեջ քչերն են կուսակցական», հավաստացնում էր Ռադիկ Մարտիրոսյանը:



Որ կրթության ոլորտը պիտի դուրս լինի քաղաքական խաղերից, էլ չենք խոսում հայագիտության գլխավոր մասնագիտությունների մասին, կասկածից վեր է: Բայց իրականությունը, ցավոք սրտի, հակառակն է աղաղակում: Ու հետո զարմացած հայացքով իրար ենք նայում, թե այս ինչպե՞ս եղավ, ինչո՞ւ կրթության ու գիտության վարկն այսպես ընկավ, երբ դրա պատասխանն ունենք մեր մտքում պահած:

Ի վերջո ինչո՞ւ են ընտրվում թղթակից անդամներ: «Որեւէ թղթին կցվելու համար», նախորդ օրը կատակեց գիտնականներից մեկը: Կատակ է ու ինչպես ամեն մի կատակ, իր մեջ ունի ճշմարտության հատիկ: Խորհրդային տարիներին այդ կոչումը ստացել են այն գիտնականները, որոնք իրենց զեկուցումները պիտի անպայման փոստով ուղարկեին ննարկման: Հումանիտար բաժանմունքի ակադեմիկոս քարտուղար Վլադիմիր Բարխուդարյանը հիշեց, որ տարիներ առաջ, երբ թղթակից անդամների ինստիտուտը վերացվեց, դոկտորները միանգամից դարձան ակադեմիկոսներ:

Ու քանի որ թղթակից անդամ նշանակում է գիտական ուսումնասիրություններ կատարող ու կազմակերպող, կարելի է ասել, որ այդ ակադեմիկոսները մնացին անքաջար ու անկազմակերպ: Եվս մեկ ճշգրտում. որպեսզի թղթակից անդամը դառնա "իսկական", նա պետք է երկար տարիներ ներդրում կատարի գիտության մեջ՝ մեզանում այնքան բաղձալի ակադեմիկոսի կոչումն ստանալու համար:

Այս ամենի մեջ թերեւս հուսադրող է այն, որ մեր գիտական աշխարհում հայտնի շատ անուններ պարզապես հրաժարվել են այս ընտրություններում իրենց թեկնածությունը դնելուց: Ինքնաբերաբար մասնագիտությունից թղթակից անդամ չունենալն ավելի քան խոսուն է:

«Ազգ»

ՄՐՑՈՒՅԹ

Չորրորդ «Արեւածաղիկը»

Քաղաքակիրթ հասարակության կերտման ճանապարհին

Արդեն չորրորդ անգամ «Հույսի կամուրջ» ՀԿ-ն անցկացրեց «Արեւածաղիկ» մրցույթը, որի նպատակն է տեղական ՁԼՄ-ներով վեր հանել ֆիզիկական եւ մտավոր կարիքներ ունեցող մարդկանց խնդիրները: Արդեն ավանդական դարձող այս մրցույթին այս տարի մասնակցել են 26 լրագրողներ 19 տեղական ՁԼՄ-ներից: Նրանք ներկայացրել են 23 տպագիր, 12 հեռուստատեսային եւ 3 ռադիո նյութեր, ուր յուրաքանչյուրը յուրովի լուսաբանել է հաշմանդամությունը Հայաստանում՝ այն հաղթահարելու եւ ողբերգության չվերածելու իրական օրինակներով: «Այս մրցույթներն օգնում են ինչպես հաշմանդամ մարդկանց խնդիրների բարձրաձայնմանը, այնպես էլ խնդիրներ ունեցող մարդկանց եւ երեխաների հասարակությանը ինտեգրվելու ճանապարհին», ասաց Զարուհին, որ «Արեւածաղիկ» մանկապատանեկան ամսագրի գլխավոր խմբագիրն է: Նա տեղեկացրեց, որ մրցույթի գլխավոր մրցանակը այդպես էլ չի հանձնվել՝ համապատասխան ընդգրկունության եւ խորության նյութ չնկատելու պատճառով: Իսկ մնացած մրցանակային տեղերը մասնագիտական ժյուրին տեղաբաշխել է հետեւյալ կերպ.

Հեռուստատեսություն՝ 1-ին մրցանակ՝ Գոհար Մանուկյան («Հ1»), 2-րդ մրցանակ՝ Քրիստինե Կրասլյան («Հ2»), 3-րդ մրցանակ՝ Նելլի Դանիելյան («Երկիր մեդիա»): Ռադիոթղթակցություններից ժյուրիի հավանությանն էր արժանացել Հասմիկ Սմբատյանի հաղորդումը («Ազատություն» ռ/կ) , իսկ մամուլում լավագույնն է համարվել Մարիաննա Գրիգորյանի («Առմենիանաու» ինտերնետային պարբերական) հոդվածը: Երկրորդ մրցանակին են արժանացել Գայանե Սարգսյանի («Վանաձորյան խճանկարներ» շաբաթաթերթ) եւ երրորդին՝ Սուսաննա Մարգարյանի («Ազգ» օրաթերթ) հոդվածները: Խրախուսական մրցանակի է արժանացել Անահիտ Ճաստրյանը բրազիլական համակարգով լույսընծայվող շաբաթաթերթում հրապարակած հոդվածի եւ հատուկ մրցանակի՝ Արզումանի Հարությունյանը («Արսսայթ» ստուդիա) ուշագրավ տեսահոլովակների հեղինակման համար:

ՅՈՒՆԻԲԱՆԿՆ
առաջարկում է վարկեր
HYUNDAI
մակնիշի ավտոմեքենաների
ապառիկ վաճառքի համար
իր բոլոր մասնաճյուղերում

Հայաստանում «Հյունդայ» ավտոմեքենաների ուղղակի ներկրող եւ միակ դիստրիբյուտոր՝ «ՄԱԳԱՍ Ինվեստ» ՓԲԸ
Դիլեր՝ «ՄԱԳԱՍ Մոթորս» ՍՊԸ
Պայմաններ՝ «Հյունդայ»-ի բոլոր մոդելների համար
Կանխավճար՝ 15 %-ի չափով
Մարման ժամկետ՝ 6 տարի
Տոկոսադրույք՝ 16 %
«ՄԱԳԱՍ ՄՈԹՈՐՍ»
հասցե՝ Աճառյան 60
հեռ/ֆաքս՝ (374-10) 581607 բջջ.՝ 091-419238, 093-659004
e-mail: magas@arminco.com

Հայաստանում բացվելու է Ղազախստանի դեսպանատուն

Հայաստանում բացվելու է Ղազախստանի դեսպանատուն: Երկրի նախագահ Նուրսուլթան Նազարբաեւն արդեն ստորագրել է համապատասխան համաձայնագիր, որն ուժի մեջ է մտնելու 2007 թ.-ի հունվարի 1-ից: Այդ մասին հաղորդում է «Արմինֆո» գործակալությունը, հիշեցնելով, որ Հայաստանում Ղազախստանի նորանշանակ դեսպանը հոկտեմբերի 20-ին հավատարմագրերն է հանձնել ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանին:

Ալիեւի կիսանդրին դրվելու է Թբիլիսիի «Մեյդանում»

Վկայակոչելով Վրաստանում Ադրբեջանի դեսպանին, «Թրենդ» գործակալությունը տեղեկացնում է, որ Թբիլիսիի քաղաքապետարանն Ադրբեջանի նախկին նախագահ Հեյդար Ալիեւի կիսանդրին քաղաքի պատմական կենտրոնում՝ «Մեյդան» թաղամասում տեղադրելու որոշում է կայացրել: Համապատասխան պայմանավորվածությանը 2004 թ.-ին հանգել են երկու երկրների նախագահները:

Մանուկ Գասպարյանի կանխատեսումները

«Ժողովրդավարական ուժի» կուսակցության նախագահ, ՀՀ ԱԺ պատգամավոր Մանուկ Գասպարյանը հավատացած է, որ Ժիրայր Սեֆիլյանի ձերբակալությունը կապված է Լեռնային Ղարաբաղի վերահսկողության ներքո գտնվող տարածքների վերադարձի հետ եւ ամենեփին չի բացառվում Ախալքալաքում առկա իրավիճակով: Ժիրայր Սեֆիլյանի ձերբակալությունը Ջուլֆայում նրա հավանական գործունեության հետ կապելը, Մանուկյանի գնահատականով, Վրաստանի իշխանություններին ծառայություն մատուցելու մղում է, իսկ Սեֆիլյանին արտաքսելու ծրագիրը՝ վաղուց մշակված: Պատգամավորի տեսանկյունից կարճ ժամանակ անց Ռուսաստանն ամեն ինչ կանի Ժիրայր Սեֆիլյանի ազատության համար:

Մանուկ Գասպարյանի մեկ այլ կանխատեսմամբ, Հայաստանում իշխանափոխություն իրականացնելու զորություն ունի միայն մեկ անձ՝ «Բարգավաճ Հայաստանի» ղեկավար Գագիկ Ծառուկյանը: Վերջինիս վարկանիշն, ըստ բանախոսի, հավասարազոր է ԱԺ նախկին նախագահ, հանգուցյալ Կարեն Դեմիրճյանի վարկանիշին: Սակայն Գագիկ Ծառուկյանի իշխանամետությունը կարող է հիմք դառնալ իշխանափոխություն չիրականացնելուն: Սրանում համոզված է Մանուկ Գասպարյանը: Ն. Պ.

ՅՈՒՆՈՒԱՐ ՀԱՄԱՐ ՀԵՏԱԶՈՏԵԼ՝ 58-28-60

Լրատվական գործունեությունն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետության 47: Պետական գրանցման վկայական համարը՝ 02 Ա N 047261, տրված՝ 17.02.00 թ.: Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աբեղիեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրված է տպագրության՝ 15.12.2006, գինը՝ 100 դրամ, տպագրում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում՝ Արշակունյաց 2: